


ԱՐՍԱՆ ԵՎԻԱԶԱՐՅԱՆ

ԱԾՈՏ Գ  
ՈՂՈՔՍԱԾ

ԹԱՊԱՎՈՐ ՀԱՅՈՑ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ

Արման Եղիազարյան

ԱՇԽԱՏ Գ ՈՂՈՐՄԱԾ

ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
2020

ՀՏՏ 94(479.25)  
ԳՄԴ 63.3(5Հ)  
Ե 381

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ պատմության ֆակուլտետի  
գիտական խորհուրդը:*

**Գրախոսներ՝** պ.գ.դ., պրոֆ. Արտակ Մովսիսյան  
պ.գ.թ., դոց. Արամ Հովհաննիսյան

Կազմի նկարը [«Անի քաղաք (վերականգնուած վիճակի մէջ)»]՝ Կ. Բասմաջանի «Տուկական պատմութիւն հայոց սկիզբէն մինչեւ մեր օրերը» գրքից (Ա. և Բ. մասներ, Կ. Պոլիս, 1914-1927, էջ 333):

Եղիազարյան Արման  
Ե 381 Աշոտ Գ Ողորմած: Թագավոր հայոց/ Ա. Եղիազարյան: - Եր.,  
ԵՊՀ հրատ., 2020, 152 էջ:

Մենագրության մեջ լուսաբանված է հայոց թագավոր Աշոտ Գ Ողորմած Բագրատունու գահակալության շրջանի (953-978 թթ.) ամբողջական պատմությունը: Վեր են հանված դարաշրջանի կարևորագույն հիմնահարցերը, ներկայացված են հայոց թագավորության վերելքը 950-960-ական թթ., այնուհետև Բյուլղանդիայի ծավալապաշտական քաղաքականության ու տեղական իշխանների անջատողական ձգութանքների հետևանքով սկիզբ առած անկման գործընթացը:

Հասցեագրված է հայագետներին և կովկասագետներին, ինչպես նաև միջնադարով հետաքրքրվող ընթերցողներին:

ՀՏՏ 94(479.25)  
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2431-9

© ԵՊՀ հրատ., 2020  
© Ա. Եղիազարյան, 2020

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԲԱԳՐԱՏՈՒՅՑԱՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ ԱՇՈՏ Գ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ	
ՇՐՋԱՆՈՒՄ (953-966 Թթ.) .....	7
1.1. Աշոտ Գ-ի «Ողորմած» անվանումը.....	7
1.2. Աշոտ Գ-ի գահակալության սկիզբը .....	13
1.3. Անիի հռչակումը մայրաքաղաք .....	27
1.4. Աշոտ Գ-ի երկրորդ անվան և Անիում թագաղրվելու խնդիրը.....	33
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ԲԱԳՐԱՏՈՒՅՑԱՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՅՈՒԶԱԴՐԻԱՅԻ ԾԱԿԱԼԱՊԱՇՏԱԿԱՆ	
ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽՈՒՄ (967-975 Թթ.) .....	41
2.1. Աշոտ Գ թագավորի գահակալության երկրորդ պատմափուլի մարտահրավերները.....	41
2.2. Տարոնի գավթումը Բյուզանդիայի կողմից.....	42
2.3. Կարսի թագավորության ստեղծումը .....	58
2.4. Վասպուրականը Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականության մեջ 960-ական թթ. ....	74
2.5. Եկեղեցական տագնապի հանգուցալուծումը.....	78
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ԲԱԳՐԱՏՈՒՅՑԱՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԱՇՈՏ Գ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ	
ՇՐՋԱՆՈՒՄ .....	99
3.1. Բագրատունյաց թագավորության պետական կառուցվածքի առանձնահատկությունները Աշոտ Գ-ի օրոք .....	99
3.2. Գահաժառանգման խնդիրը Աշոտ Գ-ի շրջանում .....	108
3.3. Աշոտ Գ-ի գահակալության տարիները և մահվան թվականը.....	119
ՎԵՐՋԱԲԱՆ.....	123
Summary.....	125
Резюме.....	128
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴՅՅՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	131
ՑԱՆԿԵՐ .....	141



## ՆԱԽԱԲԱՆ

Աշոտ Գ Ողորմած արքայի գահակալության ժամանակաշրջանը (953-978 թթ.) Բագրատունյաց թագավորության պատմության կարևորագույն փուլերից է: Հորից՝ Աբաս թագավորից (929-953 թթ.), նա ժառանգել էր քաղաքական ու հոգևոր առումներով միասնական ու հզոր մի թագավորություն, որն ընդգրկում էր Մեծ Հայքի հողերի մեծ մասը և տիրապետում էր ռազմական ու տնտեսական մեծ ներուժի: Բագրատունյաց թագավորության գերակայությունը տարածվում էր նաև քրիստոնյա Այսրկովկասի վրա, և համապատասխանաբար հայոց թագավորն էլ կրում էր «շահնշահ հայոց և վրաց» տիտղոսը:

Նման կարգավիճակի հասնելու համար Աբասը դժվարին ճանապարհ էր անցել. կարողացել էր չեզոքացնել Վասպուրականի թագավորների՝ համայն Հայաստանում գերիշխելու նկրտումները, վերականգնել Հայաստանի քաղաքական և հոգևոր-դավանանքային միասնությունը, զարկ տալ երկրի տնտեսության զարգացմանը, պարտության մատնել քրիստոնյա Այսրկովկասում գերակայության հասնելու պայքարում Բագրատունի արքաների՝ նախորդ 60 տարիների հիմնական ախտյանին՝ Աբխազաց թագավորությանը, ամրապնդել հայոց թագավորության անվտանգությունը<sup>1</sup>: Եվ այնժամ, երբ զահն անցավ նրա որդուն՝ Աշոտին, սպասելի էր, որ թագավորության վերելքը շարունակվելու էր, իսկ միասնությունը՝ ամրապնդվելու: Առավել ևս, որ հարևան մահմեդական ամիրայություններից բխող վտանգը էապես թուլացել էր:

Հիրավի, Աշոտ Գ Ողորմած թագավորի գահակալության ժամանակաշրջանը աշքի է ընկնում Բագրատունյաց թագավորության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի զարգացմամբ, որը պայմանավորված էր Աշոտ Երկաթի գահակալության բուհն պատմափուլից (914-929 թթ.) հետո սկիզբ առած երկարամյա համեմատաբար

<sup>1</sup> Տե՛ս Եղիազարյան Ա., Աբաս Բագրատունի. թագավոր հայոց, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 54-82:

խաղաղ իրադրությամբ: Ուստի անհրաժեշտ էր հզորության գագաթ-նակետին գտնվող թագավորությունը առաջնորդել ճիշտ ուղղությամբ՝ զարգացումը ծառայեցնելով նրա անվտանգության ամրապնդմանը և քաղաքակրթական ձեռքբերումներին: Անկասկած Աշոտ Գ թագավորի գահակալության շրջանին առնչվող այդ պատմական անհրաժեշտությամբ էլ պայմանավորված է ժամանակակիցների ու հետագա սերունդների մեծ հետաքրքրությունը նրա գործունեության նկատմամբ:

Աշոտ Գ-ի գահակալության շրջանում Բյուզանդիան մեծապես ակտիվացրեց իր քաղաքականությունը արևելքում և, հյուսիսային Միջագետքի ու Ասորիքի արաբական միավորներին ջախջախելուն գործընթաց, ուշադրությունը կենտրոնացրեց նաև հայոց թագավորության վրա: Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականության թիրախում հայտնված թագավորությունն աստիճանաբար ձեղքեր տվեց, ինչը կայսրության հետագա նվաճողական նկրտումների առաջ դյուրին ձանապարհ բացեց:

Զնայած նշված՝ հիրավի դարակազմիկ իրադարձություններին, հայ պատմագիտական միտքը հիմնականում կենտրոնացել է Աշոտ Գ-ի օրոք Անին մայրաքաղաք հոչակելու և հարակից հարցերի շուրջ՝ երկնելով մեծարժեք ստեղծագործություններ: Երբեմն քննության նյութ են դարձել նաև Աշոտ Գ-ի գահակալության շրջանի այլ հիմնահարցեր, սակայն այդ շրջանի պատմաքաղաքական գնահատականը երբևէ հնարավորինս ամբողջական չի տրվել:

Ուստի Աշոտ Գ-ի գործունեության առաջին փուլի խոշոր ձեռքբերումների, երկրորդ փուլում հայոց թագավորության մասնատման գործընթացի խորացման և տարածքային կորուստների պատճառների ամբողջական ու համակողմանի լուսաբանումը ցայսօր սպասում է իր հետազոտողին:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲԱԳՐԱՏՈՒՅՑԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ ԱՇՈՏ Գ-Ի  
ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (953-966 թթ.)

### 1.1. Աշոտ Գ-ի «Ողորմած» անվանումը

Աշոտ Գ թագավորը պատմագիտության մեջ հայտնի է որպես «Ողորմած»: Նա այդ մականունով հանդես է գալիս XII-XIII դդ. պատմիչների երկերում: Օրինակ՝ նրան այդպես են կոչում Մխիթար Անեցին («Աշոտ Ողորմածն, որդի Աբասայ»)<sup>2</sup>, Կիրակոս Գանձակեցին («...հրամանաւ թագաւորին Աշոտայ, որ որ Ողորմածն կրչիր»)<sup>3</sup> և Վարդան վարդապետը («Աշոտ..., Ողորմածն կոչեցեալ»)<sup>4</sup>: Մինչդեռ նրա ժամանակակից կաթողիկոս և հեղինակ Անանիա Մոկացին (հայոց կաթողիկոս՝ 941-966 թթ.), ինչպես նաև նրա զահակալությունից կարձ ժամանակ անց՝ X դ. երկրորդ կեսին և XI դ. սկզբին ապրած ու ստեղծագործած հեղինակ Ասողիկը նրան «Ողորմած» չեն անվանում: Անանիա Մոկացին, որն անձամբ էր առնչվել Աշոտ Գ-ին, նրան հիշատակում է որպես «...թագաւորն բարեպաշտ Աշոտ Հայոց Մեծաց...»<sup>5</sup>: Ասողիկն ընդհանրապես գրում է, թե «...զկնի Աբասայ թագա-

<sup>2</sup> Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավիճակ հանդիսարանաց (այսուհետև՝ Մխիթար Անեցի), աշխատասիրութեամբ Հ. Գ. Մարգարյանի, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 67:

<sup>3</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի), աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1961, էջ 87:

<sup>4</sup> «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի» (այսուհետև՝ Վարդան վարդապետ), Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 1862, էջ 89:

<sup>5</sup> «Տեառն Անանիայի հայոց կաթողիկոսի յաղագ ապստամբութեանն տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի արքոոյն» (այսուհետև՝ Անանիա Մոկացի), «Մատենագիրը հայոց», Ժ հատոր, Ժ դար, Անդիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 2009, էջ 273:

ւորեաց Աշոտ որդիի նորա, որ եւ Շահնշահ կոչիւր»<sup>6</sup>: Այսուհետև հեղինակը գովարանության մեջ նրան վերագրում է «ողորմածություն» և «ողորմություն»<sup>7</sup>: Ժամանակակից այլ աղբյուրներում ևս նույն վիճակն է: Գրիշ Սիմեոնը 972/973 թ. հիշատակարանում Աշոտ Գ-ին կոչում է «Հայոց շահնշահ Աշոտ»<sup>8</sup>, իսկ Խաչիկ Ա կաթողիկոսի (972-991 թթ.) կողմից Աշոտ Գ-ի՝ Նախավկայի վանքին նվիրած կալվածքների վերաբերյալ կազմած 976 թ. հաստատության գրում (Կոնդակ)՝ «Աշոտ թագաւոր թագաւորաց ամենայն տիեզերաց»<sup>9</sup>: Փաստորեն, կենդանության օրոք Աշոտ Գ-ն բնորոշվել է «քարեպաշտ» մակդիրով և համարվել ողորմած զահակալ:

«Ողորմած» մականվան առաջին կիրառումները հանդիպում են Աշոտ Գ-ի մահից հետո: Մասնավորապես Սմբատ Բ-ի (978-990 թթ.)՝ 979 թ. թվագրվող հրովարտակում նշվում է. «...ես՝ Սմբատ Բագրատունի թագաւոր Հայոց, թռոն Տիեզերակալ եւ մեծ թագաւորին Սմբատայ որդույ թագաւորին Աշոտոյ Ողորմածն կոչեցելոյ...»<sup>10</sup>: Աշոտ Գ-ի մյուս որդիի Գուրգեն-Կյուրիկեն կոչված է «...Գաւրգէն թագաւոր, Շահնշահի որդի Աշոտոյ Ողորմածի»<sup>11</sup>, իսկ նրա տապանաքարին

<sup>6</sup> **Ստեփանոս Տարանեցի Աստղիկ**, Պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ Ասողիկ), «Մատենագիրք հայոց», ԺԵ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 755:

<sup>7</sup> Տե՛ս՝ նույն տեղում:

<sup>8</sup> «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քեօթուկը)», աշխատասիրութեամք՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2007, էջ 55: Տե՛ս՝ նաև **Գարեգին Ա. կաթողիկոս**, Յիշատակարանը ձեռագրաց, հ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անդրկանուն, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1951, էջ 125:

<sup>9</sup> **Տէր-Վարդանեան Գ., Սահակեան Զ.**, Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսի 976 թուականի կոնդակը՝ տրուած Դարաշամբի սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքին, «Էջմիածին», 2012, № 7, էջ 98:

<sup>10</sup> «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քեօթուկը)», էջ 67:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 66:

(Սանահին, 989 թ.) գրված է. «Այս է հանգիստ Գորգէնա Բազրատունոցահանշահի, որդի Աշոտոյ Ողորմածի»<sup>12</sup>:

Ավելի ուշ շրջանում հանդիպում է «...քարեպաշտ թագաւորն Աշոտ, որ մականուամբ Ողորմած կոչեցաւ» արտահայտությունը<sup>13</sup>, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ թագավորին տրված «քարեպաշտ» մակդիրի և «Ողորմած» մականվան համադրման փորձ:

Հստակեցնելով Աշոտ Գ-ին տրված որակումների և անվանումների հետագիծը՝ կարող ենք նշել, որ կենդանության օրոք Աշոտ Գ-ն հիմնականում հայտնի էր որպես «քարեպաշտ», և միայն մահից հետո է, որ նրան կոչել են «Ողորմած» մականունվ, թերևս, հաշվի առնելով աղքատների, քոսով հիվանդների, կաղերի և կույրերի նկատմամբ նրա հոգատար վերաբերմունքը<sup>14</sup>:

Ուստի պատահական չէ, որ Աշոտ Գ-ի քարեպաշտությունը և կատարած ողորմածությունները հիմք հանդիսացան, որ նա դասվի Հայեկեղեցու սրբերի շարքը, իսկ նրա վարքը ներմուծվի «Յայսմաւուրք»<sup>15</sup>:

Հավելենք նաև, որ ժողովրդի հիշողության մեջ հարյուրամյակների ընթացքում Աշոտ Գ-ի՝ «ողորմած» անվանման մասին պահպանվել է մի հետաքրքրական պատմություն: Ըստ Ախալցիս քաղաքի ծերունիների շրջանում պահպանված ավանդության՝ Աշոտը նստում էր Կարսում, իսկ նրա թագավորության մեջ տարբեր ազգությունների ներկայացուցիչներ էին ապրում («Ինոր հպատակներուն մեջը ինչ տեսակ ազգ ըստ կար»): Մի անգամ ժողովուրդը վերակացուի միջոցով նրան լուր է ուղարկում իր ծանր վիճակի մասին: Աշոտ Գ-ն վերակացուին 500 ոսկի է տալիս ժողովրդին բաժանելու համար, բայց, կասկածելով, որ նա ազահությամբ յուրացնելու է աղքատ մարդկանց բաժինը, նրան հավելյալ 100 ոսկի է տալիս, պայմանով, որ 500 ոսկին կրա-

<sup>12</sup> Տե՛ս Ղաֆարյան Կ., Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1957, էջ 24, 171:

<sup>13</sup> «Յիշատակարան Սանահնյ վանից (Սանահնի քեօթուկը)», էջ 56:

<sup>14</sup> Տե՛ս Աստղիկ, էջ 755:

<sup>15</sup> Տե՛ս Մաթևոսյան Կ., Անի. Էկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Մայր աթոռ սուրբ Էջմիածին, 1997, էջ 12:

ժանվի ժողովրդին<sup>16</sup>: Սակայն խարեքա վերակացուն ժողովրդին փոխանցեց, թե իբր բազավորը բարկացել է ու հրամայել հայտնել, որ եթե ժողովուրդը նույնիսկ սովից մեռնի, իր հոգը չէ, և յուրացրեց ժողովրդի բաժինը: Եթի այս մասին իմացավ Աշոտ Գ-ն, պատմեց նրան, իսկ ուկիները վերցրեց ու բաժանեց ժողովրդին: Դրանից հետո նրան կոչեցին Աշոտ Ողորմած<sup>17</sup>: Ակնհայտ է, որ ժողովրդի հիշողությունն Աշոտ Գ-ին միանշանակորեն ներկայացնում է որպես մարդկանց հոգսերին հաղորդ գահակալ, իսկ եղած բացասական երևույթներն եւ վերագրում արքունի վերակացուներին:

Պետք է հատկապես շեշտել, որ Աշոտի «Ողորմած» կոչվելը, ինչպես նաև պատմիչների՝ նրան հիմնականում հենց այդ համատեքստում ներկայացնելը, երբեմն ստիպում են մտածել, որ նա աչքի է ընկել բացառապես բարեգործական գործունեությամբ: Ավելին՝ Աշոտ Գ-ի ժամանակակից պատմիչ Ասողիկի նկարագրությունն ընդհանրապես նրան ներկայացնում է որպես աշխարհիկ խնդիրներից հեռացած և միայն երկնային արքայության հույսով ապրող միապետի: Հստ Ասողիկի՝ «Այս Աշոտ խաղաղասեր բարուք կալեալ զաշխարհս Հայոց՝ խոնարհութեամբ եւ ողորմածութեամբ զանցոյց զամենեքումքը, վասն զի զգնօշացեալսն<sup>18</sup> եւ զկադսն եւ զկոյրսն հաւաքէր առ ինքն եւ բարձակից ինքեան առնելով ի խրախճանութիւննան. զոմանս ի նոցանէ իշխանս եւ իշխանաց իշխանս եւ կիւրապաղատս անուանէր եւ զբաւնոյր նոքաւք. եւ զբոսն կարմիր եւ զվերս նոցա առաջի աշաց իւրց փո-

<sup>16</sup> «Ավանդապատում» ժողովածուի ներածության մեջ Ա. Ղանալանյանը գրում է, որ մինչև վերակացուի գնալը Աշոտ Գ-ն մեկ անգամ էլ է կանչում վերակացուին և նրան հավելյալ 50 ոսկի տալիս, միայն թե նա 500 ոսկին բաժանի ժողովրդին: Այդ մասը բուն ավանդության տեքստում բացակայում է: Տե՛ս Ղանդանյան Ա., Ավանդապատում, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ ՀԶ-ՀԷ:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 286-287:

<sup>18</sup> «Գոնջանալ»-ը նշանակում է «խեղանալ, զօսանալ կամ քոստիլ, բրոտիլ...» («Նոր բարգիրք հայկակեան լեզուի», հ. Ա (Ա-Կ), Եր., Երևանի համալսարանի հրատ., 1979, էջ 573): Քանի որ Ասողիկի նկարագրության մեջ խոսվում է կարմիր քոսի և վերքերի, ինչպես նաև բարախր զինուն խառնելու մասին, ապա նրա հիշատակած «զոնջացեալք»-ը մենք այսուհետև կներկայացնենք որպես «քոսով հիվանդներ»:

խանակ զարդուց եւ ականց փայլելոց համարէք: Այլ եւ զբաժակն իւր թագաւորական ըմպելեաւք մատուցանէր նոցա, եւ յորժամ թարախ վիրաց նոցա խառնէր ընդ գինւոյն, յայնժամ զմնացորդս նոցա առեալ ինքն ճաշակէր: Եւ այնքան առատաձեռնութեամբ բաշխէր կարաւտելոց՝ մինչեւ ի մահուն իւրոյ ոչ լինել դրամ մի ի գանձատան նորա. այլ եւ զկապուտ զարդուցն եւ զբազմականացն եւ որմոց տայր կարաւտելոց: Եւ քաւեաց զմեղս իւր ողորմութեամբ եւ զթով տնանկաց»<sup>19</sup>: Փաստորեն, ըստ պատմիչի՝ Աշոտ Գ-ն, մի կողմ թողած պետական գործերը, զբաղված էր բացառապիս աղքատների, քոսով հիվանդների, կաղերի և կույրերի հոգսերով՝ նրանց բաժանելով պետական զանձարանի գումարները, այն աստիճան, որ նրա վախճանի պահին այնտեղ նույնիսկ մեկ դրամ էլ չէր մնացել: Ավելին, թագավորը նաև իբրև թե աջ ու ձախ տիտղոսներ ու կոչումներ էր շնորհում նույն այդ աղքատներին, քոսով հիվանդներին, կաղերին և կույրերին՝ դրանով իսկ, փաստորեն, արժեզրկելով դրանք:

Աշոտ Գ թագավորի գործունեության ճանաչողության առումով թերևս առավել կարևոր է Անանիա Մոկացու նկարագրությունը, քանի որ նա ևս Աշոտ Գ-ի ժամանակակիցն էր ու անձամբ էր առնչվել նրա հետ: Նա Աշոտ Գ-ին ներկայացնում է հետևյալ կերպ. «հանձարեղ եւ իմաստուն, այր գեղեցկատեսիլ, կրանաւորասէր եւ ուղղադատ, ահարկու աւագակաց եւ չարագործաց, եւ սիրիչ սրբոց, եւ քազ պարծանաց սրբոյ Լուսաւորչի աթոռոյու: Մանաւանդ, զոյ ասել՝ թէ ի վեհ շառաւիդէ զարմանալի պտուղ, եւ հաւր սքանչելոյ զարմանալի արարեալ մտար յաստուածային տառիցն, համարէն մարմնովն ամենեւին վայելուց եւ կրկին խաղաղասէր: Վասն զի շարժեաց, սանձեաց, նահանջեաց զարտաքին թշնամիս յիւրաքանչիւր կարգի»<sup>20</sup>: Անանիա Մոկացին այդպիսով ներկայացնում է մի անձի, որն արդարադատ էր ու չափավոր վարքի տեր, բարեհած կրոնավորների նկատմամբ, խաղաղասէր էր, բայց անհրաժեշտության դեպքում պատերազմում էր՝

<sup>19</sup> Ասողիկ, էջ 755:

<sup>20</sup> Անանիա Մոկացի, էջ 268:

պարտության մատնելով ու հետ մղելով արտաքին թշնամիներին: Այստեղ ներկայացված անձն էապես տարբերվում է Ասողիկի ներկայացրածից:

Մյուս հեղինակներից Վարդան վարդապետի տեղեկությունը նման է Ասողիկի ավանդածին<sup>21</sup>:

Պատահական չե, որ նման տեղեկությունների պայմաններում հետազոտողների տեսակետներն ել խիստ տարբերվում են իրարից: Օրինակ՝ Ա. Գրենը համարում էր, որ Աշոտ Գ-ի թագավորությունը եղել է եկեղեցու թագավորության շրջան, թագավորը քաղաքական բնույթի որևէ գործով աչքի չի ընկել: Ըստ որում՝ Ա. Գրենը կարծում է, որ Աշոտ Գ-ն զբաղված էր ողորմածությամբ և ժամանակն անցկացնում էր աղքատների, քոսով հիվանդների, կաղերի և կույրերի հետ այն պատճառով, որ մոտենում էր հազարամյակի ավարտը, և բոլորը սպասում էին ահեղ դատաստանին<sup>22</sup>: Ա. Տեր-Ղևոնյանը, հակառակը, կարծում էր, որ Աշոտ Գ-ն «քաղաքական մեծ ընդունակություն ցուցաբերեց, իսկ վանքերի նկատմամբ նրա ողորմած լինելը<sup>23</sup> բխում էր եկեղեցուն իրեն ենթարկելու ձգտումից»<sup>24</sup>:

Անկասկած հենց Անանիա Մոլացու նկարագրությունն է, որ առավել մոտ է ձշմարտությանը, թեև գովաբանության մեջ նրա կերպարը կարծէս կրկին չափազանցված է: Սակայն պետք է հիշել, որ Աշոտ Գ-ն հույժ հավատացյալ անձ էր, և դա արտահայտվում էր նրա գործերում: Մասնավորապես Աշոտաշեն պարիսպների շինարարության ժամանակ (կառուցվել է 964/965 թ.) նա աշտարակներում մատուցներ կառուցել տվեց, իսկ երկրում զարկ տվեց եկեղեցաշինությա-

<sup>21</sup>Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 89:

<sup>22</sup>Տե՛ս Ա. Դինастия Багратидов в Армении, «Журнал министерства народного просвещения», часть CCXC, С.-Петербург, 1893, ноябрь, с. 105, 111.

<sup>23</sup>Ինչպես տեսանք, ըստ պատմիչի, Աշոտ Գ-ն ողորմած էր աղքատների, քոսով հիվանդների, կաղերի և կույրերի նկատմամբ:

<sup>24</sup>Տե՛ս Տեր-Ղևոնյան Ա., Արարական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1965, էջ 170:

նը<sup>25</sup>: Աշոտ Գ-ի կին Խոսրովանույշը այդ հարցերում աջակցում էր նրան<sup>26</sup>:

Միանգամայն ճիշտ էր Լեռն, երբ զրում է, թե, չնայած իր բարեգործական հակումներին, Աշոտ Գ-ն այնպիսի տիրակալ չէր, որ միայն բարեգործությամբ զբաղվեր և պետական կարիքները մոռացության տար<sup>27</sup>:

## 1.2. Աշոտ Գ-ի գահակալության սկիզբը

Պատմագիտության մեջ Աշոտ Գ-ի պատմությունը գահակալությունից առաջ և նույնիսկ դրա ընթացքում ամբողջապես լրասարանված և ներկայացված չէ: Այդ առումով կարևոր է հիշել Աշոտ Երկարի օրոք տեղի ունեցած մի կարևոր իրադարձություն: 918 թ. Աբաս Բագրատունին Երազգավորսում դավադրություն կազմակերպեց Աշոտ Երկարի դեմ, բայց վերջինս, նախօրոք տեղեկանալով, արագորեն հեռացավ այնտեղից՝ իր հետ տանելով Աբասի որդուն<sup>28</sup>: Տեղեկությունների բացակայության պատճառով դժվար է ասել, թե Աբասի որ որդին էր Աշոտ Երկարի հետ: Սակայն պատմական այս դրվագում Աբասի ավագ որդի Աշոտի մասնակցությունը խիստ հավանական է:

Տեղին նշենք, որ Աշոտը Աբաս թագավորի որդիներից ավագն էր: Նա ուներ երկու եղբայր՝ Աստրներսեհը և Մուշեղ<sup>29</sup>: Վերջինս հետազոյում թագավորեց Կարսում:

Աշոտը Աբաս Բագրատունու գահակալության շրջանում զբաղեցրել է հայոց իշխանաց իշխանի պաշտոնը: Ըստ Անանիա Մոկացու՝ Աբասի մահից հետո «...յաջորդէ զաթոռ թագաւորութեանն նորին որդի»

<sup>25</sup> Տե՛ս Վարդան Վարդապետ, էջ 89-90:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 90:

<sup>27</sup> Տե՛ս Լեռ, Երկերի ժողովածու, հ. Բ, Եր., «Հայաստան» հրատ., 1967, էջ 581:

<sup>28</sup> Տե՛ս «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց» (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի), «Մատենագիրք հայոց», հ. ԺԱ., ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիսա-Լիբանան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 544-545:

<sup>29</sup> Տե՛ս Անանիա Մոկացի, էջ 272:

տեր Աշոտ, Հայոց իշխանաց իշխան»<sup>30</sup>: Այդ պաշտոնը Բագրատունի առաջին չորս թագավորների օրոք [Աշոտ Ա (887-891 թթ.), Սմբատ Ա (891-914 թթ.), Աշոտ Բ (914-929 թթ.), Արքա (929-953 թթ.)] զրադեցրել են հիմնականում արքայական տան այն անդամները, որոնց ժառանգաբար անցնելու էր հայոց գահը<sup>31</sup>: Մինչ թագավորելը Աշոտը երկար ժամանակ եղել է հոր ուղևիցը երկրի կառավարման գործում: Պատահական չէ, որ Անանիա Մոլացին մոտ 949 թ., կապված Կապանի Զվանշեր իշխանի ապստամբության հետ, շտապում էր Շիրակ՝ «ի հանդիպումն բարերջանիկ եւ վեհի մեծի արքային Արքասայ Հայոց թագավորին եւ Աշոտի իշխանաց իշխանի նորին որդուոյ»<sup>32</sup>: Կարելի է եզրակացնել, որ առնվազն Արքասի գահակալության վերջին տարիներին Աշոտը ակտիվորեն մասնակցում էր պետության կառավարման գործին, ուստի կաթողիկոսն էլ գնում էր հանդիպելու ինչպես արքային, այնպես էլ նրան:

Գահ բարձրանալով 953 թ.՝ Աշոտ Գ-ն թագավորել է 25 տարի: Ըստ Ասողիկի՝ «Եւ զկնի Արքասայ թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ եւ Շահանշահ կոչիւր՝ ամս ԻԵ: Եւ Մուշեղ եղբայր նորա առ նովա թագաւորեաց ի Կարս»<sup>33</sup>:

Ի սկզբանե արձանագրենք, որ Աշոտ Գ-ի գահակալության սկիզբը հայկական սկզբնադրյուրներում տեղեկությունների սակավության պատճառով ոչ միայն մշուշոտ է, այլև զգալի չափով վիպականացված: Խնդիրն այն է, որ Ս. Չամշանցի կողմից նրա գահակալության առա-

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 268:

<sup>31</sup> Տե՛ս Եղիազարյան Ա., Հայոց իշխանաց իշխանը Բագրատունի առաջին արքաների օրոք, «Վէմ», 2014, № 1, էջ 62-74:

<sup>32</sup> Անանիա Մոլացի, էջ 268:

<sup>33</sup> Ասողիկ, էջ 755: Այս տեղեկության հիման վրա, հավելյալ այն, որ Աշոտ Գ-ն 961 թ. հեռացել էր Կարսից ու հաստատվել Անիում, հետազոտողները կարծել են, որ Կարսի թագավորությունը ստեղծվել է նույն այդ թվականին կամ քիչ անց: Տե՛ս Հակոբյան Թ., Անի մայրաքաղաք, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1988, էջ 22: «Հայ ժողովրդի պատմություն», Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, 1976, էջ 95: Սակայն առավել հավանական է, որ այդ իրադարձությունը տեղի ունեցած լիներ 974 թ. կամ քիչ անց, ուստի դրան կանդրադառնանք հետազոտության երկրորդ մասում:

զին երեք տարիների վերաբերյալ ներմուծվել է մի պատմություն, որը հետագա հետազոտողների մի մասը վերաշարադրել է, բայց աղբյուր-ներում հիմնավորող փաստեր չգտնելով՝ հղումը տվել Մ. Չամչյանցին<sup>34</sup>: Վերջինս գրում է, որ Արաս արքայի մահվան լուրն առնելով՝ թշնամիները սկսեցին ասպատակել Հայաստանը՝ ստիպելով շատերին լրելու իրենց տները և ապաստանելու անմարդաբնակ վայրերում, անմատուց լեռներում, իսկ շատերն էլ հեռացան երկրից: Աշոտ Գ թագավորը իր հորեղբայր Աշոտ Երկարի նման զինավար դուրս եկավ թշնամիների դեմ: Նա երկու հազար զինվորով եկավ Շիրակ զավառը: Այնտեղ նա դետեր ուղարկեց երկրի տարբեր կողմերը: Այնուհետև նա գործը բաժանեց երկու մասի և երեք տարի կռվում էր թշնամիների դեմ: Նրա այս քաջությունը տեսնելով՝ նրա շուրջն էին հավաքվում կորովի հայորդիները: Աշոտ Գ-ի գործի թիվն ի վերջո հասնում է 55 հազարի: Նրանց վրա սպարապետ կարգվեց Մարզպետունյաց տոհմից Գևորգ իշխանի որդին՝ Գոռը, որը ինքն էլ ժողովելով 25 հազար զին-վոր՝ հայոց բանակի թիվը հասցըց 80 հազարի<sup>35</sup>:

Մ. Չամչյանցի այս պատումը, ինչպես նշվեց, սկզբնապերուրներում հիմնավորում չի գտնում: Ավելին, Աշոտ Գ-ի 80 հազար զինվոր ունենալու տեղեկությունը, ինչպես նաև Մարզպետունի տոհմանունը հուշում են, որ ներկայացված հիմնված է Մատթեոս Ուռհայեցու երկու տարբեր տեղեկությունների վրա՝ «և բանակ հարեալ ի Հարքայ զաւարին արք իրեւ ույսուն հազար»<sup>36</sup> և «ժողով արար օրապետն Հայոց զմարզպետական գունդն քառասուն և հինգ հազար արանց քացաց»<sup>37</sup>:

<sup>34</sup> Տե՛ս, օրինակ, «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 52:

<sup>35</sup> Տե՛ս Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի միջն ցամ 1784, Վենետիկ, ի Ս. Ղազար, հ. Բ, 1785, էջ 836-837:

<sup>36</sup> Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն (այսուհետև՝ Մատթեոս Ուռհայեցի), գրաբար բնագիրը Մ. Մելիք-Աղամյանի և Ն. Տեր-Միքայելյանի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1991, էջ 22:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 8:

Այստեղ նաև նկատենք, որ Մարզպետունի տոհմը ևս, ելնելով աղբյուրներում նրա բացարձակապես հիշատակված չլինելու և Ս. Չամչյանցի գրքում առաջին անգամ հայտնվելու իրողությունից, դարձալ Ս. Չամչյանցի ստեղծագործության հետևանքն է՝ բխեցված «մարզպետական գունդն» բառակապակցությունից: Ինչ վերաբերվում է իբրև թե Գոռի հայր Գևորգին, ապա նրան, առանց տոհմանունը նշելու, հիշատակում է Հովհաննես Դրասխանակերտցին՝ 20 զինվորով Ատրպատականի ամիրայության զորավար Բշրի հազար հոգուց բաղկացած ասպատակի վրա հարձակվելիս և փախուստի մատնելիս<sup>38</sup>: Նրան առաջինը Մարզպետունի է համարել Ս. Չամչյանցը<sup>39</sup>:

Կ. Մաթևոսյանը անդրադառնալով Մարզպետունի տոհմի՝ Ս. Չամչյանի հորինվածքը լինելուն, սկզբում զրում է, որ Մատթեոս Ուրիայեցին Գոռ անունը չի հիշատակում, այն ենթադրել է Ս. Չամչյանցը, թերևս «զմարզպետական գունդն» բառակապակցության եղծված լինելու պատճառով: Դրանից Ս. Չամչյանցը «բխեցրել» է ոչ միայն Գոռին, այլ նաև տոհմանուն՝ Մարզպետունի, որն էլ հետադարձ շաղկապվեց Գևորգ իշխանի անվանը, իսկ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի հրատարակությունից հետո դարձավ անվիճելի ու մուտք գործեց նույնիսկ ակադեմիական գրականություն ու դասագրքեր<sup>40</sup>:

Հետազայում՝ Սամվել Անեցու նոր հրատարակության ժամանակ, ձեռագրերից մեկում Կ. Մաթևոսյանը հանդիպել է Գոռ անվանը («Աշոտ զորանայ յիշխանութեամբ ի ձեռն բանակին ԴՌ (90 000) ա-

<sup>38</sup> Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, 2010, էջ 576-577:

<sup>39</sup> Տե՛ս Չամչյանց Ս., նշվ. աշխ., էջ 811:

<sup>40</sup> Տե՛ս Մաթևոսյան Կ., Հավուց թառի վանքը, Եր., «Մուլնի» հրատ., 2012, էջ 16-18: Տե՛ս նաև նույնի՝ «Անի-Շիրակի պատմության եջեր» (հոդվածների ժողովածու), Եր., հեղինակային հրատ., 2010, էջ 122, ծան. 35: Տե՛ս նաև Մանուչարյան Ս., Պահլաւունիների ծագումն ու բարձրացումը, «Հանդէս ամսօրեալ», 2011, № 1-12, էջ 297-298:

րանց, որոյ գլուխ էր զարաւարն Գոռ»<sup>41)</sup>, որի պատճառով, ենթադրելով, որ հենց այդ ձեռագրից էլ օգտվել է Մ. Չամչյանցը, գրում է. «...Գոռ անունը կարծես դուքս է զալիս վիճարկման դաշտից, բայց այնտեղ դեռ մնում է (վիճարկելի - Ա. Ե.) աղբյուրներում չհանդիպող «Մարզպետունի» տոհմանունը»<sup>42</sup>: Թեև դա էլ կասկածելի է, քանի որ եթե Մ. Չամչյանցը այդ ձեռագրից է օգտվել, ապա պետք է ներկայացներ միայն զորապետի Գոռ անունը, բայց ներկայացրել է նաև Մարզպետունի տոհմանունը, որն այնտեղ չկա: Մինչդեռ այդ ձեռագրի առումով, հաշվի առնելով դրա եզակիությունը, լիովին հավանական է Կ. Մաքսուսյանի ավելի վաղ հայտնած այն խիստ հավանական կարծիքը, թե «ենթադրելի է, որ Մ. Չամչյանի օգտագործած ձեռագրում «զմարզպետական գունդն» ձևակերպման երկրորդ բառը եղծված է եղել և կարդացվել «զմարզպետական գոռն»<sup>43</sup>: Սակայն «զմարզպետական գունդն» բառակապակցությունից անցումը «զմարզպետական գոռն»-ի, իսկ այնուհետև Գոռ անվան՝ Սամվել Անեցու վերոհիշյալ ձեռագրում հայտնվելու փախկապակցվածությունը հիմնավորելու համար կարիք կա հավելյալ աղբյուրային նյութի: Իսկ մինչ նման հնարավորության ի հայտ գալը հակված ենք կարծելու, որ նման փոխկապակցվածությունը խիստ իրատեսական է:

Նշված առումով հետաքրքրական է, որ Հ. Աճառյանը Գոռ Մարզպետունու համար չի կարողացել հայտնաբերել աղբյուրային որևէ հղում և որպես աղբյուր նշել է միայն Մ. Չամչյանցի ու Մ. Օրմանյանի աշխատասիրությունները (Մ. Չամչյանց, նշվ. աշխ., էջ 837, Օրմա-

<sup>41</sup> Սամուկ Անեցի և շարունակողներ, Ժամանակագրութիւն Ադամից մինչեւ 1776 թ. (այսուհետև՝ Սամվել Անեցի և շարունակողներ), (աշխատասիրությամբ՝ Կ. Մաքսուսյանի), Եր., «Նախրի» հրատ., 2014, էջ 175:

<sup>42</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 380, ծան. 186:

<sup>43</sup> Տե՛ս Մաքսուսյան Կ., Հավուց բարի վանքը, էջ 17: Նա հավանական է համարում, որ սխալ ընթերցումը կարող էր տեղի ունենալ «գունդն» բառի տողադարձման ու տողավերջի այդ հատվածի մաշվածության պատճառով: Տե՛ս նույն տեղում, ծան. 31:

նեան Մ., Ազգապատում, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, սյուն 1108)<sup>44</sup>: Ըստ որում՝ Մ. Օրմանյանը սկզբում միայն գրում է՝ «Մարզպետունի կոչուած (ՉԱՍ. Բ. 811) յոմանց»<sup>45</sup>, իսկ այնուհետև պնդում, թե իբր գունդը «Մարզպետական կոչուած է Գեղրգի որդի Գոռ Մարզպետունիի անունէն, որ զիշաւոր հրամանատարն էր»<sup>46</sup>: Այսինքն՝ Մ. Օրմանյանն էլ հարցի լուծման մեջ առանձնապես չի խորացել:

Նույն կերպ Հ. Աճառյանը որեւէ աղբյուրային հղում չի գտել նաև Գևորգ Մարզպետունու անվան համար: Այդ անվան ներքո նա ներկայացրել է Հովհաննես Դրասխանակերտցու վերոհիշյալ Գևորգ իշխանին<sup>47</sup>:

Հետաքրքիր է այն, որ եթե Գոռ Մարզպետունին հորինված անձ է, ապա ո՞վ է Մատթեոս Ուոհայեցու հիշատակած «օրապետն Հայոց»-ը Աշոտ Գ-ի զահակալության շրջանում, որը Հ. Բարթիկյանի դիպուկ թարգմանությամբ ընկալելի է որպես «հայոց սպարապետ»<sup>48</sup>: 976 թ. թվագրված Աշոտ Գ արքայի կողմից Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքին նվիրած կալվածքների ընծայագրում վկայակոչված են մի շարք մեծամեծեր, որոնցից մեկը «մեծ Ապլդար[իպ] սպարապետ»-ն է<sup>49</sup>: Նույն թվականին Խաչիկ Ա կաթողիկոսի կողմից Աշոտ Գ-ի՝ Նախավկայի վանքին նվիրած կալվածքների վերաբերյալ կազմած հաստատության գրում (կոնդակ) այդ անձը կոչված է միայն «Ապլդա-

<sup>44</sup> Տե՛ս Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Եր., Պետական համալսարանի հրատ., 1942, էջ 488:

<sup>45</sup> Օրմանեան Մ., Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, Կոստանդնուպոլիս, հրատ. Վ. Եւ Հ. Տեր-Ներսէսեան, 1912, § 731, սյուն 1061:

<sup>46</sup> Նույն տեղում, § 765, սյուն 1108:

<sup>47</sup> Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ. էջ 458:

<sup>48</sup> Տե՛ս Մատթեոս Ուոհայեցի, էջ 8-9:

<sup>49</sup> «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1839 թ.թ.), պրակ I, առաջարանով, ծանոթագրություններով և բառարանով: Կազմեց Հար. Աբրահամյան, Եր., Մատենադարան, 1941, էջ 4:

թիպ»<sup>50</sup>: Արդեն 981 թ. նույն Նախավկայի վանքին Աշոտ Գ-ի դուստր Հռիփսիմեի տված կալվածական ընծայագրի խեղաթյուրված տերստում նշված է «Վասալա (?) իշխանին Վրաց (?)», որդոյն Ապլղարիպայ»<sup>51</sup>, այսինքն՝ Ապլղարիպն արդեն վախճանվել էր:

Ապլղարիպ (Աբրդարիփ) անունը տարածված էր հատկապես Պահլավունիների տոհմում<sup>52</sup>: Կարելի է վարկածային բնույթի ենթադրություն կատարել, որ, ի տարբերություն ընդունված այն տեսակետի, թե Պահլավունյաց տոհմի ներկայացուցիչները որպես սպարապետ են հանդես եկել Սմբատ Բ-ի շրջանից<sup>53</sup>, Աշոտ Գ թագավորի օրոք հայոց սպարապետի պաշտոնը արդեն տրվել էր Պահլավունիների տոհմի ներկայացուցիչ Ապլղարիպին: Հաշվի առնելով այն իրողությունը, որ Պահլավունիները Բագրատունյաց թագավորության մեջ սկսել են ակտիվ գործունեություն ծավալել խնդրո առարկա շրջանում<sup>54</sup>, բայց նաև

<sup>50</sup> **Տեր-Վարդանեան Գ., Սահակեան Զ.**, Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսի 976 թուականի կոնդակը՝ տրուած Դարաշամբի ստրբ Ստեփանոս Նախավկայի վանքին, էջ 100: Դեսք է նշել, որ կոնդակում «Ապլղարիպի իշխանի Հայոց և Վրաց» հատվածը խեղաթյուրված է: Նախապես եղել է հետևյալ ձևով. «...վկայութեամբ իշխանաց իշխանի (այս բառը հավելյալ է - Ա.Ե.) Հայոց և Վրաց՝ մեծին Ապլղարիպչայ սպարապետին և Վասալայ իշխանին Սիւնեաց» և այլոց [«Վալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1839 թ.թ.), պյակ Ի, էջ 4]: Այդ ձևոր պահպանվել է մեկ այլ ընծայագրում. «...վկայութեամբ մեծի իշխանացն Հայոց, ... որդոյն Ապլղարիպայ»: Նույն տեղում, էջ 10:

<sup>51</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 10:

<sup>52</sup> Տե՛ս և **Սաթեսպան Կ.**, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Եր., «Սուտնի» հրատ., 2015, էջ 19, 39, 45 և այլն: Տե՛ս նաև **Ավինեան Ն.**, Պահլաւունի եւ Լամբրոնի Հեթմեանց ազգաբանութիւնը: Ա. Պահլավունիիր, «Հանդէս ամսօրեայ», 1954, № 1-6, էջ 17-18, 21: Ժամանակակից մեկ այլ Ապլղարիպի՝ Անձնացյաց սպարապետի, հիշում է Մատթեոս Ուտհայեցին: Տե՛ս և **Մատթեոս Ուտհայեցի**, էջ 36:

<sup>53</sup> Տե՛ս և **Հայությունյան Հ.**, Հայաստանը IX-XI դարերում, Եր., Հայաստանի պետական հրատարակչություն, 1959, էջ 115-116:

<sup>54</sup> Արդեն 981 թ. Կոշի վիմագրում Գրիգոր Պահլավունին հիշատակված է որպես սպարապետ: Տե՛ս «Վիմական տարեգիր. ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց», կազմաց Կ. Կոստանեանց, ՍՊԲ, Տպարանն Գիտութեանց Ճեմարանի Կայսերականի, 1913, էջ 9:

լիովին հավատ ընծայելով Գևորգ ու Գոռ Մարզպետունիների մասին պատմող Մ. Չամչյանցին՝ Ա. Մանուչարյանը անձնանունների ստուգաբանության հիմքով փորձում է Պահլավունիների նախահայր Արտակին նույնացնել Գևորգ Մարզպետունուն, իսկ Ապուղամբ Պահլավունուն՝ Գոռ Մարզպետունուն<sup>55</sup>:

Պահլավունիներին առնչվող հարցի քննությունը թողնելով մեկ այլ հետազոտության՝ կարող ենք արձանագրել, որ Աշոտ Գ-ի օրոք հիշատակվում է Ապլդարիա Պահլավունի սպարապետը, որն էլ, հավանորեն, Մատթեոս Ուրիհայեցու հիշատակած «Զօրապետն Հայոցն» է:

Քանի որ խոսվեց հայոց սպարապետի մասին, տեղին է պարզաբանել նաև 961 թ. Անիի մայրաքաղաք հոչակման արարողության մասին Մատթեոս Ուրիհայեցու տեղեկության այն հատվածը, որտեղ պատմիչը հաղորդում է, որ «...ժողով արար զօրապետն Հայոց զմարզպետական գունդն քառասուն և հինգ հազար արանց քաջաց, զատ ի յարքունական գնդէն»<sup>56</sup>: Դատելով «զատ ի յարքունական գնդէն» («քացի արքունական գնդից») տեղեկությունից՝ կարելի է հստակեցնել, որ հայոց թագավորության բանակը բաժանվում էր երկու մասի՝ արքունական և մարզպետական գնդերի: Վերջինս Բագրատունի արքային ստորակա թագավորությունների ու իշխանությունների (Սյունյաց, Լոռու, Կարսի, Վասպուրականի, Անձևացյաց և Սասունի) զորքերի համախումբն էր: Քանի որ, ըստ Մատթեոս Ուրիհայեցու՝ Աշոտ Գ-ն 974 թ. «...բանակ հարեալ ի Հարքայ զաւատին արք իբրեւ ութսուն հազար»<sup>57</sup>, հայկական բանակի թվաքանակը 80 հազարից ավելի էր, քանի որ Հարքում բանակած զորքում վստահաբար ընդգրկված չէին սահմանապահ (նաև բերդապահ) զորամիավորումները: Ըսդհանուր առմամբ, կարելի է ենթադրել, որ հայոց թագավորության բանակի թվաքանակը Աշոտ Գ-ի օրոք կազմում էր 90-100 հազար զինվոր, որի գրեթե կեսը կազմում էր արքունական գունդը:

<sup>55</sup> Տե՛ս և Մանուչարեան Ա., Պահլավունիների ծագումն ու բարձրացումը, էջ 297-304:

<sup>56</sup> Մատթեոս Ուրիհայեցի, էջ 8:

<sup>57</sup> Նոյն տեղում, էջ 22:

Աշոտ Գ Բագրատունու թագավորության առաջին տարիների իրավիճակը հստակեցնելուն նպաստում է արաբական աղբյուրներից մեկը, ըստ որի՝ մոտ 953 թ. «Վրաստան նահանգի և Հայաստանի այլ մասերի վրա կար մի թագավոր, որի անունն էր Աշութ իբն ալ-Աբբաս (իմա՝ Աշոտ Գ՝ որդի Աբասի-Ա. Ե.) և «շահնշահ» տիտղոսն էր կրում։ Սա փորձեց պաշարել Դվինը և նրա ժողովրդի դեմ կռվել։ Զորք հավաքեց հայերից, լեզգիներից և այլ անհավատներից 30 հազար մարդկանց և իջավ նրան (Դվինի) մոտիկ մի վայրում, որը կոչվում էր Նառւարդ<sup>58</sup>։ Նա ցրեց իր զորքը, որպեսզի այրեն բերքը քանդեն շեները»<sup>59</sup>։ Սակայն Դվինի մատուցներում Աշոտ Գ-ի զորքը պարտություն կրեց։

Արաբական աղբյուրի այս տեղեկությունը հույժ կարևոր է, քանի որ բացահայտում է այլ արժեքավոր իրողություններ ևս։ Փաստորեն Աշոտ Գ-ի գերիշխանության ներքո էր գտնվում Վիրքը, ինչից բացի նա ծանրակշիռ դիրք ուներ կովկասյան լեռնականների շրջանում, որի վկայությունն էր լեզգիների զորքի մասնակցությունը Դվինի ազատագրման գործողությանը։ Բացի այդ, պարզվում է, որ գահակալության հենց սկզբից նա կրում էր «շահնշահ» տիտղոսը։ Հայտնի է, որ Բագրատունիների մեջ առաջինն այն կրել է Աշոտ Երկաթը<sup>60</sup>, իսկ Աբաս թագավորն այդ տիտղոսով չի հիշատակվում։ Սակայն անհնար է, որ նոր միայն գահին բազմած Աշոտ Գ-ն ինքնուրույնաբար հասած լիներ թէ՝ հայոց ու վրաց թագավորի կարգավիճակին և թէ՝ «շահնշահ» տիտղոսին, ուստի միակ հավանական եղրակացությունն այն է, որ նա այն ժառանգել էր հորից՝ Աբաս թագավորից, որը թեև այդ տիտղոսով չի հիշատակվում, բայց իրականում կրել է այն<sup>61</sup>։

Ա. Տեր-Ղևոնյանը հավանական է համարում, որ Աշոտ Գ-ն առաջին անհաջողությունից հետո Դվինին տիրելու նոր փորձ կատա-

<sup>58</sup> Ըստ Վ. Մինորսկու՝ Նորբերդ։ Տէ՛ս **Minorsky V.**, Studies in Caucasian History, London, Taylor's Foreign Press, 1953, № 3, p. 25.

<sup>59</sup> **Տեր-Ղևոնյան Ա.**, Մունաջիմ-Բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շարդարյանների մասին, «Բանքեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 477։

<sup>60</sup> Տէ՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 551։

<sup>61</sup> Տէ՛ս Եղիազարյան Ա., Աբաս Բագրատունի. թագավոր հայոց, էջ 79-80։

բած լիներ: Նա այդ տեսակետի հիմքում դնում էր Շամբիձորի (Դարաշամբի) Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքին կալվածքներ շնորհելու մասին Աշոտ Գ թագավորի՝ 976 թ. ընծայագրի<sup>62</sup>, Խաչիկ կաթողիկոսի՝ այդ ընծայագրի հաստատության գրի (976 թ.)<sup>63</sup>, Աշոտ Գ-ի դուստր Հռիփսիմեի՝ Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքին տված 981 թ. ընծայագրի<sup>64</sup> և 966 թ. թվագրվող մի հիշատակագրի տվյալները, ըստ որոնց՝ Աշոտ Գ-ն զորքով եկել էր Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքը և նվիրել կալվածքներ, որոնք գտնվում էին Ոստան գավառում, Նախճավանում և Ատրպատականում: Այդ տեղեկությունները Ա. Տեր-Ղևոնդյանը համարում էր «հեռավոր և աղավաղված արձագանքն ինչ-որ պատմական իրադարձության»<sup>65</sup>:

Նրա տեսակետը հետագայում զարգացրեց Բ. Հարությունյանը՝ բացահայտելով, որ Աշոտ Գ-ին հաջողվել էր իրեն ենթարկել Երասխ գետի հովտի ամիրայություններին և թագավորության սահմաններն ընդարձակել մինչև Սալմաստ, Զարևանդ, Մարանդ և Դարաշամբ<sup>66</sup>: Այդ իրադարձությունը նա թեականորեն դնում է 970-ական թթ. սկզբին<sup>67</sup>: Սակայն առկա է հայոց 415 թվականով (մարտ, 966 թ.-մարտ, 967 թ.) թվագրված մի խաչի պատվանդանի գրություն, որտեղ ասվում է, որ Աշոտ Գ-ն մեծ զորքով եկել է Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքը և նրան զգալի տարածքներ ու այլ ընծաներ տվել<sup>68</sup>: Ա. Մանուշարյանը ցույց է տվել, որ դրա վավերականությունը կասկածից դուրս

<sup>62</sup> Տե՛ս «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1839 թթ.)», պրակ I, էջ 3-5:

<sup>63</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 5-8:

<sup>64</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 9-11:

<sup>65</sup> Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 176: Տե՛ս նաև Հարությունյան Բ., Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, «Բանքեր Երևանի համասարանի», 1969, № 1, էջ 149:

<sup>66</sup> Տե՛ս «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1839 թթ.)», պրակ I, էջ 6: Տե՛ս նաև Հարությունյան Բ., Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, էջ 150:

<sup>67</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>68</sup> Տե՛ս Մանուշարյան Ա., Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.), Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 46-47:

<sup>69</sup>: Ուստի պետք է ենթադրել, որ Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանք Աշոտ Գ-ն այցելել է նաև 966 թ.: Հաշվի առնելով այն, որ 960-ական թթ. երկրորդ կեսին Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականության գոհը դարձավ Տարոնի իշխանությունը, իսկ դրանից հետո, հավանաբար 970-ական թթ. կեսին, Կարսը դարձավ առանձին թագավորություն, հարկ է Երասխ գետի հովտի ամիրայություններին ենթարկելը և թագավորության սահմաններն ընդարձակելը թվագրել 970-ական թվականներից ավելի վաղ՝ նախքան 966 թ.: Քանի որ 961-965 թթ. Աշոտ Գ-ն ողջ ուշադրությունը կենտրոնացրել էր Անի մայրաքաղաքի կառուցապատմանը և նոր պարիսպների կառուցմանը<sup>70</sup>, առավել հավանական է, որ այդ իրադարձությունները տեղի են ունեցել Դվինի ազատագրման գործողությունից հետո որպես դրա շարունակություն և Հայաստանի մահմեղական ամիրայությունները հնագանեցնելու մեծ ծրագրի մաս: Կարելի է կարծել, որ Դվինի ազատագրումը միայն առաջին քայլն էր, որին հետևել են Երասխ գետի հովտի ամիրայությունների ենթարկելու գործողությունները: Վերջինս հաջողությամբ պսակելու համար խիստ ձեռնտու էր այն անկայուն դրությունը, որ առկա էր այդ հատվածի ամիրայություններում (Դվինին տիրելու համար Շաղդաղյանների պայքարը Սալարյանների դեմ և ներքին կոհվները Ատրպատականում 954 թ.)<sup>71</sup>:

Փաստորեն, եթե Դվինն ազատագրել չհաջողվեց, ծրագրի հետագա հատվածը հաջողությամբ պսակվեց, և Երասխ գետի հովտի ամիրայությունները ենթարկվեցին Աշոտ Գ-ին: Դատելով վերոհիշյալ փաստաթղթերում «Խոսրով իշխանն Գողթնեաց» և «Վաչէ իշխանի և կուսակալի Զարևանդ գաւառի» հիշատակություններից<sup>72</sup> հնագանդեցված շրջաններում արքունի կուսակալներ են կարգվել:

<sup>69</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 47-49:

<sup>70</sup> Տե՛ս Վարդան Վարդապետ, էջ 89-90:

<sup>71</sup> Տե՛ս Տեր-Ղևոնյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 166-171:

<sup>72</sup> Տե՛ս «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1839 թ.թ.),» պրակ I, էջ 4, 10:

Աշուտ Գ-ի գահակալության առաջին շրջանի առումով կարևոր է նաև Մատթեոս Ուռիհայեցու այն տեղեկությանը, թե «Յայսմ ամի լիայոց 408 թվականին (1 ապրիլ, 959 թ.-31 մարտ, 960 թ.) - Ս.Ե.] կոտորեցին զօրք Հայոց գՀամտուն զօրապետն Տաճկաց»<sup>73</sup>: Լեռն այս առիթով գրում էր, որ «...այս Ողորմած թագավորը կովեց և Համբուն անունով կտիրի դեմ, որ Արձնյաց աշխարհի կողմից էր մտել Հայաստան, բայց ստիպված եղավ վերադառնալ՝ իր կրած ջարդի հետևանքով»<sup>74</sup>: Բայց Հ. Բարթիկյանը այս առումով կարծում էր, որ խոսքը Ծովանոս Բկայսեր (959-963 թթ.) գահակալության շրջանում Նիկեփոր Փոկասի զիսավորությամբ բյուզանդական բանակի՝ Ասորիիքի և Հյուսիսային Միջազգետքի Համբուն (Համբանյան) ամիրի դեմ տարած հաղթանակի մասին է<sup>75</sup>, իսկ Մատթեոս Ուռիհայեցու տեղեկությունը հուշում է, թե ինչ ազգային կազմ ուներ բյուզանդական զորքը<sup>76</sup>: Փաստորեն Հ. Բարթիկյանը հայոց թագավորության բանակի կատարածը վերագրում է Բյուզանդական բանակի՝ հայազգի զինվորներից բաղկացած զորամիավորումներին: Այդ պնդումը հիմնված է այն իրողության վրա, որ հայոց 408 թ. (1 ապրիլ, 959 թ.-31 մարտ, 960 թ.) բյուզանդացիները Համբանյաններից խլել էին Կիլիկիայից մինչև Տիգրիս գետն ընկած հողերը<sup>77</sup>: Բայց Հ. Բարթիկյանի կարծիքը հույժ վարկածային է, քանի

<sup>73</sup> Տե՛ս Մատթեոս Ուռիհայեցի, էջ 8:

<sup>74</sup> Տե՛ս և Լեռ, նշվ. աշխ., էջ 581: Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 52:

<sup>75</sup> Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 10, «Բյուզանդական աղբյուրներ», Գ, Հովհաննես Սկիլիցես, թարգմանություն բնագրից, (առաջաբան և ծանոթագրություններ՝ Հ. Բարթիկյանի), Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 6:

<sup>76</sup> Տե՛ս Մատթեոս Ուռիհայեցի, Ժամանակագրություն (թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Հ. Բարթիկյանի), Եր., «Հայաստան» հրատ., 1973, էջ 295, ծան. 9: Տե՛ս նաև Մատթեոս Ուռիհայեցի, Ժամանակագրութիւն, գրաքար բնագիրը՝ Ս. Մելիք-Աղամյանի և Ն. Տեր-Միքայելյանի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Հ. Բարթիկյանի), Եր., Երևանի համալսարանի հրատ., 1991, էջ 483-484, ծան. 8:

<sup>77</sup> Տե՛ս Dadoyan S., The Armenians in the medieval Islamic world: paradigms of interaction seventh to fourteenth centuries, vol. 2, Armenian realpolitik in the Islamic

որ պատմիչը նման դեպքում վստահաբար այդ մասին կիրառակեր, բայց նա պարզորոշ գրել է «զօրք Հայոց»: Պատահական չէ, որ Մատթեոս Ուսհայեցու այդ տեղեկությունը նախկինում կասկածի չէր ենթարկվել<sup>78</sup>:

Հույս կարևոր է այն, որ Սամվել Անեցու աշխատության վերջին հրատարակության մեջ օգտագործված մի ձեռագրում առկա է հետևյալ տողը. «ՆԸ (408). Աշոտ յաղթեալ զՀամտունն, զոր ընկճեալ էր յամիրապետէն...»<sup>79</sup>, ինչը ցույց է տալիս, որ Համբանյան (Համտուն) ամիրի զորքին պարտության է մատնել հայոց քագավորության բանակը<sup>80</sup>: Ի դեպ, խոսքը հավանաբար Սայփ ալ-Դառւլա Համբանյանի մասին է, որը տիրում էր ի թիվս այլ երկրամասերի նաև Աղձնիքին (Դիար Բարբ)<sup>81</sup>, որտեղից էլ, հավանաբար, տեղի էր ունեցել ներխուժումը:

---

world and diverging paradigms case of Cilicia: Eleventh to Fourteenth Centuries, New Brunswick, Transaction publishers, 2013, էջ 15.

<sup>78</sup> Տե՛ս **Chronique de Matthieu d'Edesse** (962-1136) avec Continuation par Grégoire le prêtre jusqu'en 1162, trad. Édouard Dulaурier, Paris, A. Durand, 1858, № 5, p. 369. Տե՛ս նաև **Canard M.**, Les H'amdanides et l'Arménie, Annales de l'Institut d'Etudes Orientales, "Alger", 1948, VII, p. 92. Տե՛ս նաև «Արաբական աղյուրները Հայաստանի և հարևան Երկրների մասին (Յակուտ ալ-Համալի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ)», (կազմեց Հ. Թ. Նալբանդյան), Երևան, ՀՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատ., 1965, էջ 254, ծ. 13: Զետարքքարական է, որ Սմբատ սպարապետի «Տարեգրում», որտեղ համարում ձևով վերաշարադրված էն Մատթեոս Ուսհայեցու նկարագրած իրադարձությունները, այս դեպքի մասին ոչինչ չկա: Ն. Աղոնցը, որ Աշոտ Գ-ին ուղղված Հովհաննես Չմշկիկ կայսեր նամակը ուստամնասիրելիս անդրադարձել է Մատթեոս Ուսհայեցու և Սմբատ սպարապետի տեղեկություններին, գրում է, որ վերջինս ձեռքին ունեցել է Մատթեոս Ուսհայեցու՝ մեզ շխասած և ավելի անաղարտ ձեռագիր, ուստի նրանով կարելի է շտկումներ կատարել Մատթեոս Ուսհայեցու՝ ներկա հրատարակությունների որոշ տեղեկություններում: Տե՛ս **Արքնաց Ն.**, Երևեր, հ. Ե, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 369-370:

<sup>79</sup> **Սամվել Անեցի և շարունակողներ**, էջ 174-175:

<sup>80</sup> Այստեղ հարկ է նկատել, որ այս տեղեկությունը քաղվել է Մատթեոս Ուսհայեցուց անկախ այլ աղբյուրից, քանի որ ոչ միայն Աշոտ Գ-ի անունն է ավելացված, այլև այն, որ «խալիքը (ամիրապետ) ընկճել էր Համտունին»:

<sup>81</sup> Տե՛ս **Տեր-Ղևոնյան Ա.**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 150:

Աշուտ Գ թագավորի գահակալության առաջին փուլի վերաբերյալ պատմիչների երկերում կան տեղեկություններ, որ ընդհանրապես քննության չեն առնվել հետազոտողների կողմից: Մասնավորապես՝ Սմբատ Սպարապետի երկում առկա է հայոց 413 թվականով (մարտ, 964 թ.-մարտ, 965 թ.) թվագրվող հետևյալ հիշատակությունը. «...ժողովեցան օօրքն Հայոց ի գաւառն Տարօն. և հարեալ կոտորեցին զօրսն Տաճկաց, և ըմբռնեցին զբազումս իշխանս. և յախմետէ ազատեցա գաւառն այն յիշխանութենէ աղտեղի ազգին Մահմետի»<sup>82</sup>: Պատմիչն այդ իրադարձությունը նուում է Բյուզանդիայի Ռումանու Բ կայսեր (959-963 թթ.) մահից հետո: Անշափ մեծ է զայթակղությունը այս տեղեկության մեջ ներկայացված դեպքերը նույնացնելու 959/960 թ. Համբանայան ամիրի զորքը ոչնչացնելու մասին Մատթեոս Ռուհայեցու ավանդած դեպքերին, սակայն դրանք տարբեր են: Սմբատ սպարապետի ներկայացրածը իրոք տեղի է ունեցել 964 թ., քանի որ նույն 964 թ. Սայֆ ալ-Դաուլայի ստորականերից Նաջա անունով մեկը ապստամբեց նրա դեմ և մտավ Հայաստան: Այստեղ նա տիրացավ արարական կայսիկ ցեղի տիրույթներին և շրջակա քաղաքներին՝ Խլաթին, Մանազկերտին, Մուշին<sup>83</sup> ու այլ վայրերի: Դրանից հետո նա ապստամբեց Սայֆ ալ-Դաուլայի դեմ: Ի վերջո հիջրայի 353 թ. (19 հունվար, 964 թ.-6 հունվար, 965 թ.) Սայֆ ալ-Դաուլան պարտության մատնեց Նաջային և տիրեց նրա հողերին, այդ թվում նրանց, որոնք Նաջան գրավել էր կայսիկներից<sup>84</sup>: Ահա հենց այս դեպքերի ժամանակ էլ պետք է տեղի ունեցած լիներ Տարոնի գավառի ճակատամարտը: Ըստ Իրն ալ-Ազրակի՝ Նաջային հաղթելուց հետո Սայֆ ալ-Դաուլան Հայաստանից վե-

<sup>82</sup> «Տարեգիրը Սմբատայ սպարապետի» (այսուհետև՝ Սմբատ սպարապետ), Վենետիկ, Ս. Ղազար, Հրատարակութիւն Հայկական բարեգործական ընդհանուր միութեան, 1959, էջ 2:

<sup>83</sup> Նաջայի կողմից 964 թ. Մուշի գրավման մասին հիշատակում է Միսքավայիը: Տե՛ս **Miskawayh**, *Tajārīb al-umam wa ta’āqib al-himam*, ց. 5, Beirut, 2003, p 337.

<sup>84</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 340; «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, «Արաբական աղբյուրներ», Բ, Իրն ալ-Ասիր, (թարգմանություն բնագրից, առաջարան և ծանոթագրություններ՝ Ս. Տեր-Ղևոնդյանի), Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 195:

բադարձավ 966 թ. հունվարին<sup>85</sup>: Ուստի ամենայն հավանականությամբ կրիվը տեղի է ունեցել Նաջայի զորքի դեմ նախքան նրա՝ Սայֆ ալ-Դառևլայից պարտվելը՝ 964 թ.: Հայերի հետ բախման պատճառն է պարզ էր. նա գրավել էր նաև Մուշը, որ կայսիկների տիրույթների մեջ չէր մտնում: Հայկական բանակը ջախջախել է Նաջայի զորքին և ազատագրել Մուշը և շրջակայքը (գաւառն Տարօն): Նաջայի ներխուժման հետևանքով կայսիկների ամիրայությունը ոչնչացվ<sup>86</sup>, իսկ նրա տարածքներն անցան Սայֆ ալ-Դառևլային: Դրանց ձակատագրում նոր է բացվեց 967 թ. Սայֆ ալ-Դառևլայի մահից հետո<sup>87</sup>, ինչի մասին ավելի մանրամասնորեն կիսումի ստորև:

Փաստորեն Աշոտ Գ-ի գահակալության առաջին տարիներին հայոց թագավորության վերելքը շարունակվել է: Հայոց թագավորը փորձ է կատարել տիրելու Դվինին և չնայած այնտեղ անհաջողության է մատնվել, շարունակել է արաբներից Հայաստանի մյուս շրջանների ազատագրումը: Մյուս կողմից նա հումկու հակահարվածներ է հասցրել Սայֆ ալ-Դառևլայի և նրա ստորակաների զորքերին, երբ նրանք ներխուժել են հայոց թագավորություն:

### 1.3. Անիի հռչակումը մայրաքաղաք

Աշոտ Գ-ն Դվինի գրավումով փորձում էր լուծել մնայուն մայրաքաղաքի հարցը, քանի որ Բագրատունի առաջին չորս գահակալների օրոք փոխվել էին թագավորության երեք կենտրոններ (Բագարան, Երազզափորս և Կարս): Անհաջողության մատնվելով իր այս ձեռնարկում՝ նա կենտրոնացավ աճող Անիի վրա, որը մայրաքաղաք հռչակման պահին՝ 961 թ., «ընդարձակված էր այսօրվա պարիսպներեն ոչ

<sup>85</sup> Տե՛ս **Տեր-Ղևոնյան Ա.**, Արաքական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 157:

<sup>86</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>87</sup> Կայսիկների ամիրայությանը և նրա տիրույթներին կանդրադառնանք հետազոտության երկրորդ մասում:

նվազ տարածությամբ»<sup>88</sup>: Խնդրո առարկա ժամանակաշրջանում Անին կարևոր առևտրական հանգույց էր հարավ-արևելքից Հայաստան մտնող և Դվինով դեպի Տրապիզոն ու Կոստանդնուպոլիս ընթացող ճանապարհի վրա, որի պատճառով Դվինի դարպասներից մեկը կոչվում էր «Բար Անի» (Անիի դուռ)՝<sup>89</sup>:

Անին մայրաքաղաք հոչակվեց հայոց 410 թվականին (մարտ, 961 թ.-մարտ, 962 թ.), և տեղի ունեցան ձոխ հանդիսություններ: Ինչպես տեսանք, ըստ Մատթեոս Ուրիհայեցու, հայոց սպարապետը մեծ զորածողով կատարեց՝ քաղաքի մատուցներում հավաքելով մարզպետական 45 հազար զինվորից բաղկացած զորքը: Անիում էին Անանիա կայողիկոսը և թագավորության բոլոր մեծամեծերը: Այնուհետև Անին «...եղեւ այժմիկ թագաւորանիստ քաղաք Հայոց»<sup>90</sup>: Անիի մայրաքաղաք հոչակման պատմական նշանակությունը հաշվի առնելով՝ Լեռն դրանից հետո՝ մինչև թագավորության անկումը, ընկած պատմափուլը կոչում է «Անիական»<sup>91</sup>:

Հետազոտողները տարբեր կերպ են մեկնաբանել Անին՝ որպես մայրաքաղաք ընտրելու՝ Աշոտ Գ-ի շարժառիթները: Լեռն կարծում էր, որ «Անին Շիրակի ամենախոշոր կենտրոնն էր, և նա միայն կարող էր որոշ գույն հաղորդել Բագրատունյաց թագավորությանը, որոշ կնիք դրոշմել նրա կերպարանքի վրա: ...Ահա այս քաղաքն էլ պիտի դառնար Բագրատունյաց թագավորության կենտրոնը: Այսպես պահանջում էին նրա թե՝ քաղաքական և թե՝ տնտեսական շահերը»: Մյուս կողմից՝ Անին «ներկայացնում էր միջնադարյան նոր ծլող իրականությունը - քաղաքային կուլտուրան»<sup>92</sup>:

<sup>88</sup> Տե՛ս՝ **Թորամանյան Թ.**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության (աշխատությունների ժողովածու), հ. 1, Եր., Արմֆանի հրատ., 1942, էջ 323: Տե՛ս՝ **Սոսաքեյան Բ.**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, հ. 1, Եր., ՀՅՍՀ ԳԱ հրատ., 1958, էջ 75-76:

<sup>89</sup> Տե՛ս՝ **Al-Moqaddasi**, Kitáb ahsán at-tákasim fi ma'rifat al-akálím, «Bibliotheca geographorum arabicorum», ed. III, p. III, Lugd. Bat., apud E. J. Brill, 1967, p. 377.

<sup>90</sup> **Մատթեոս Ուրիհայեցի**, էջ 8:

<sup>91</sup> Տե՛ս՝ **Լեռ**, նշվ. աշխ., էջ 577-579:

<sup>92</sup> Նույն տեղում, էջ 577:

Թ. Հակոբյանը համաձայն է Լեոյի տեսակետին<sup>93</sup>: Նա նաև հավելում է, որ Անիի ընտրության վրա ազդեցին մի շարք գործոններ՝ բնական անառիկ դիրքը, հրչակման պահին արդեն քաղաքի վերածված լինելը, Բագրատունիների բուն տիրույթներում և նաև հայոց թագավորության աշխարհագրական կենտրոնում գտնվելը, Անիի ու շրջակայքի՝ մշակույթի կենտրոնի վերածվելը<sup>94</sup>:

Ու. Մաթևոսյանը նշում է, որ չի կարող համաձայնել Լեոյի հետ, քանի որ, իր կարծիքով, նախորդ շրջանում մայրաքաղաքի տեղը փոխելու անհրաժեշտություն չի եղել: Իսկ այդ առաջացավ 949 թվականից սկսած, երբ Բյուզանդիան գրավեց Կարինը, Բասենը և Հավնունիքը՝ դրանք դարձնելով հայոց թագավորության դեմ իր ծավալապաշտական քաղաքականության հենակետ: Ստեղծվել էր ուղղակի վտանգ Կարսի համար, ուստի թագավորը սկսեց մտածել նոր մայրաքաղաքի մասին: Թ. Հակոբյանի օրինակով նա ևս մայրաքաղաքի ընտրությունը Անիի վրա կանգ առնելու պատճառ է համարում նրա՝ թագավորության կենտրոնում և Բագրատունյաց տիրույթներում գտնվելը, ինչպես նաև բնական անմատույց պայմաններով օժտված լինելը: Նա նաև կարծում է, որ նախկինում Բագրատունի արքաներից յուրաքանչյուրը նստավայրը տեղափոխում էր իր տիրույթը, բայց Աշոտ Գ-ին հաջողվեց անել այնպես, որ չնայած հետագա թագավորները ևս ունեին առանձին նստոց, սակայն մայրաքաղաքն այնտեղ չտեղափոխեցին<sup>95</sup>:

Ա. Տեր-Ղևոնյանը համարում էր, որ Աշոտ Գ-ն ի սկզբանե մտահոգված է եղել մնայուն մայրաքաղաքի հարցի լուծմամբ, քանի որ մշտական ու կայուն մայրաքաղաքը կարող էր նպաստել պետության միասնականությանը<sup>96</sup>:

<sup>93</sup> Տե՛ս Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 21:

<sup>94</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 22-23:

<sup>95</sup> Տե՛ս Մաթևոսյան Ռ., Անին արքունի աթոռանիստ և մայրաքաղաք, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1978, № 5, էջ 91-92:

<sup>96</sup> Տե՛ս Տեր-Ղևոնյան Ա., Արարական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 168:

Հարցին ամփոփիչ պատասխան գտնելու համար պետք է նշել, որ Անիի ընդարձակման գործընթացը սկիզբ էր առել դեռևս Աբաս թագավորի օրոք: Ասողիկի աշխատության ձեռագրերից մեկում առկա է մի հավելում, ըստ որի՝ Աբասը «շինէ եւ զիտքը կաթուղիկէն Անտոյ»<sup>97</sup>: Եկեղեցին «փոքր կաթողիկէ» է կոչվել հետազայում, եթե Անիում որպես կաթողիկոսարանի եկեղեցի կառուցված Մայր տաճարն ի տարբերություն նրա սկսել են անվանել «մեծ կաթողիկէ»<sup>98</sup>: Աբասի կողմից Անիում կաթողիկէ եկեղեցի կառուցելը հիմնավորվում է ձեռագրերից մեկում պահպանված «Սա (իմա՝ Աբասը - Ա. Ե.) շինեաց վանս՝ կաթուղիկէն, զԿարուց մեծ եկեղեցին...»<sup>99</sup>: «Փոքր կաթողիկէն», հավանաբար, նույնական է Անիի «Աշոտյան» պարհապներից ներս, բայց միջնաբերդի տարածքից դուրս գտնվող «Աշոտի [քաղաքի] եկեղեցուն»<sup>100</sup>, որը վերագրվում է Անիի՝ մինչև մայրաքաղաք հոչակվելն ընկած ժամանակաշրջանին<sup>101</sup>: Հատ Կ. Մաքենսյանի՝ Աշոտ Գ-ն Անիում թագաղրվել է հենց «փոքր կաթողիկէ» եկեղեցում<sup>102</sup>: Կարելի է ենթադրել, որ Անիի ընդարձակման և մայրաքաղաքի վերածվելու գործընթացը սկիզբ է առել հենց Աբաս թագավորի օրոք, որը Կարսում կաթողիկէ եկեղեցի հիմնելուց բացի հրամայել է մեկ այլ կաթողիկէ եկեղեցի Էլ Անիում կառուցել: Նշենք նաև, որ Անիի մեծ կամ Սմբատաշեն պարսպի արևմտյան հատվածի բուրգերից մեկի վրա փորագրված է հետևյալ արձանագրությունը. «Աշոտոյ իշխանաց իշխանի է»<sup>103</sup>: Ն. Սարգիսյանը հետևյալ ձևով է նկարագրում արձանագրության գտնվելու

<sup>97</sup> Ասողիկ, էջ 749, ծանոթ. 26:

<sup>98</sup> Մաքենսյան Կ., Անի. Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, էջ 156; նույնի՝ Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 11-12:

<sup>99</sup> Գարեգին Ս. կաթողիկոս, Յիշտատակարանք ձեռագրաց, հ. Ա., էջ 87:

<sup>100</sup> Մաքենսյան Կ., Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 12:

<sup>101</sup> Տե՛ս Mapp H., Ани: книжная история города и раскопки на месте городища, М.-Л., “ОГИЗ-СОЦЭКГИЗ”, 1934, էջ 101.

<sup>102</sup> Տե՛ս Մաքենսյան Կ., Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 12: Տե՛ս նաև նույնի՝ Անի. Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, էջ 155-158:

<sup>103</sup> Տե՛ս Սարգսյան Ն., Տեղագրությունը ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, Ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1864, էջ 112:

վայրը. «...ի միում բարձր աշտարակի ի վերայ քարանց նորա փորագրեալ կանգնաշափ ի վեր ի գետնոյ բուն արձանագիր ներքնապարպին համառօս և հնագոյն քան զամենեսին»<sup>104</sup>: Փաստորեն, ըստ նրա՝ այն պարսպի այդ հատվածի ամենահին արձանագրությունն է: Ղ. Ալիշանը հավելում է, որ այդ արձանագրությունը անթվակիր է, բայց, փորձելով «պարզել» արձանագրության հերոսին, հավելում է, որ «Աշոտ ուն իշխանաց իշխան ծանուցեալ է յամի 1002»<sup>105</sup>: Կ. Բասմացյանը, մասնավորեցնելով, որ արձանագրությունը գտնվել է քաղաքի Ավագ և Կարուց դրների միջև, ամենայն հավանականությամբ Ղ. Ալիշանի ենթադրության ազդեցությամբ, գրում է, որ այն «1002 թվականից ուշ գրված լինել չէր կարող»<sup>106</sup>: Հ. Օրբելին այդ բուրգը արձանագրության պատճառով կոչում է «Աշոտի բուրգ»<sup>107</sup>: Թեև Թ. Հակոբյանն այդ արձանագրությունը փորձում է վերագրել Բագրատունուն [«Անկասկած է, որ այդ բուրգը կառուցել է Աշոտ 1-ինը դեռևս իր իշխանաց իշխան եղած տարիներին (885 թվականից առաջ)»]<sup>108</sup>, բայց դա հազիվ թե հնարավոր է, քանի որ IX դ. վերջին այդ պարհապները դեռ չկային: Կարելի է կարծել, որ Արա թագավորի օրոք, երբ ընդարձակվում էր Անին, միջնաբերդից դեպի հյուսիս պարհապներ են կառուցվել, որոնց բուրգերից մեկի վրա էլ Աշոտ իշխանաց իշխանը՝ հետագայի Աշոտ Գ թագավորը, արձանագրություն է թողել: Անկասկած, այդ պարհապները հետագայում միաձուվել են Սմբատաշեն պարհապներին:

Այն, որի Անիի ընդարձակումը սկսվել է Արա թագավորի գահակալության շրջանում, ցույց է տալիս, որ Ճիշտ է Ռ. Մաթևոսյանի

<sup>104</sup> Նույն տեղում, էջ 112:

<sup>105</sup> Տե՛ս «Շիրակ. տեղագրութիւն պատկերացոյց», հաւաքեաց Հ. Ղետոնդ Վ. Մ. Ալիշան (այսուհետև՝ Ալիշան Ղ., Շիրակ), Վենետիկ-Ս. Ղազար, 1881, էջ 41:

<sup>106</sup> «Հայերեն արձանագրութիւնը Անոյ, Բագնայրի եւ Մարմաշինու», տեղույն վրայ հաւաքեց եւ հրատարակեց հանդերձ ֆրանսերէն թարգմանութեամբ Կ. Յ. Բասմացեան, Պարիս, տպ. Ֆիրմէն-Դիդոյ եւ ընկերութիւն, 1931, էջ 15 (351):

<sup>107</sup> Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ Ա, Անի քաղաք, (կազմեց՝ Հ. Ա. Օրբելի), Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1966, էջ 6:

<sup>108</sup> Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 20:

պնդումն այն մասին, որ Բյուզանդիայի առաջխաղացումը Կարսը դրել էր վտանգի ներքո՝ ծնելով նոր մայրաքաղաք ընտրելու անհրաժեշտություն, քանի որ Բյուզանդիայի նշված առաջխաղացումը տեղի էր ունեցել 949 թ.<sup>109</sup>: Սակայն Անին մայրաքաղաք դարձնելը միայն պաշտպանական, քաղաքական ու մշակութային առումներով հիմնավորելը բավական չէ խնդրի լիարժեք լուսարանման համար: Չնայած Ռ. Մաթևոսյանի տեսակետին, թէ ի տարբերություն նախորդների՝ Աշոտ Գ-ն արքայանիստը իր նստավայր չտեղափոխեց, իրականում արքայանիստը Անի տեղափոխելով՝ թագավորը կատարել էր նախորդների գործելառման հար և նման գործողություն: Ինչպես և իր նախորդները, նա էլ ընտրել էր իր համար առանձին նստավայր, բայց այդ ընտրությունն այնքան ճշգրիտ եղավ, որ մյուս արքաներն այլևս նոր նստավայր ընտրելու անհրաժեշտություն չունեցան: Անին աստիճանաբար այնքան աճեց, որ նվաճեց Բագրատունյաց թագավորության կենտրոն, մայրաքաղաք լինելու իրավունքը: Բագրատունյաց թագավորությունը X դ. կեսերին այնքան էր հզորացել քաղաքական, տնտեսական ու մշակութային առումներով, որ անհրաժեշտություն էր առաջացել այդ զարգացմանը համապատասխանող մայրաքաղաքի ընտրության: Այն պետք է դառնար հայ ժողովրդի այնժամյա և զալիք քաղաքակրթական ձեռքբերումների, շանքերի միավորման հիմնական միջուկը: Կապանքներից ազատազրված հայության քաղաքակրթական ոգին պահանջում էր սեփական կենտրոնը. այդպիսին եղավ Անին:

Պատահական չէ, որ մայրաքաղաք դառնալուց հետո քաղաքի աճն արագ ընթացք ստացավ: Հստ Մխիթար Անեցու՝ Անիի՝ մայրաքաղաք հոչակվելուց հետո Աշոտը «շինէ զՓոքք քաղաքն»<sup>110</sup>, իսկ ըստ «Պատմութիւն քաղաքին յԱնտոյ» հեղինակի ու Վարդան վարդապետի՝ «Սա (Աշոտը - Ա.Ե.) փոքք պարիսաց շինեաց յԱնտոյ»<sup>111</sup>: Կարելի է եղակացնել, որ Մխիթար Անեցու «փոքք քաղաք»-ն իրականում պետք է

<sup>109</sup> Տե՛ս Ասողիկ, էջ 754:

<sup>110</sup> Մխիթար Անեցի, էջ 67:

<sup>111</sup> Տե՛ս Մխիթար Անեցի, էջ 122; Վարդան վարդապետ, էջ 89:

լիներ «փոքր պարիսպ», որը, ըստ Վարդան Վարդապետի, կառուցվել է հայոց 413 թ. (մարտ, 964 թ.-մարտ, 965 թ.)<sup>112</sup>: Պարիսպը ձգվում էր Անիի պատմական միջնաբերդից հյուսիսի՝ Ախուրյան գետից մինչև Ծաղկոցաց ձոր: Պարսպի երկայնքով կառուցվել էին մի քանի աշտարակներ, որոնցում մատուռներ կային:

#### **1.4. Աշոտ Գ-ի երկրորդ անվան և Անիում թագաղրվելու խնդիրը**

Աշոտ Գ-ի երկրորդ անվան հարցի ուսումնասիրությունը ունի կարևոր նշանակություն, քանի որ ի սկզբանե կատարված հենքային սխալը Բագրատունյաց թագավորության պատմության ուսումնասիրողներից ումանց մղել է ոչ ճիշտ եզրակացությունների:

Մատթեոս Ուրիհայեցու աշխատության՝ Ս. Մելիք-Աղամյանի և Ն. Տեր-Միքայելյանի կազմած քնազրում, որը հրատարակվել է 1898 թ., և որից կատարել է աշխարհաբար թարգմանությունը Հ. Բարթիկյանը, պատմիչը հաղորդում է<sup>113</sup>, որ հայոց 410 թվականին (մարտ, 961 թ.-մարտ, 962 թ.) «...ժողովեցան ամենայն իշխանքն աշխարհաց տանն Հայոց առ սուրբ հայրապետն Անանիա, վասն զի տացեն զօծումն թագաւորութեան որդույն Աշոտի Գագկա...»<sup>114</sup>: Այնուհետև ներկայացնելով հրավիրյաներին՝ պատմիչը հայտնում է, որ «Եւ յայնմ ատուր եղեւ ժողով ահազին և մեծ ի քաղաքն յԱնի, որ եղեւ այժմիկ թագաւորանիստ քաղաք Հայոց»<sup>115</sup>: Արդեն հաջորդ պարբերության մեջ պատմիչը գործածում է սկզբում «որդի Աշոտի Գագիկ» տարբերակը, իսկ մի քանի տող անց՝ միայն «Գագիկ» անունը<sup>116</sup>: Հետագա տեղեկություններում՝ կապված 974 թ. և այլ իրադարձությունների հետ, պատմիչն

<sup>112</sup> Տե՛ս Վարդան Վարդապետ, էջ 89-90:

<sup>113</sup> Մեջքերումներն արվում են՝ ըստ պատմիչի աշխատության 1898 թ. հրատարակության:

<sup>114</sup> Տե՛ս Մատթեոս Ուրիհայեցի, էջ 8:

<sup>115</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>116</sup> Տե՛ս նույն տեղում:

Աշոտ Գ-ին հիշատակում է միայն բուն անունով՝ «Աշոտ»<sup>117</sup>: Կարևոր է այն, որ Սմբատ սպարապետը նույն այս պատմությունը ներկայացնելիս խոսում է բացառապես Գագիկ թագավորի մասին և հայոց 400 թվականի ներքո (ապրիլ, 951 թ.-ապրիլ, 952 թ.) ներկայացնում է նրա զահ բարձրանալը, իսկ հայոց 410 թվականին (մարտ, 961 թ.-մարտ, 962 թ.) ներկայացնում է Գագիկի օծումը Անիում<sup>118</sup>:

Այդ պատճառով Ն. Աղոնցը նշվածը համարում էր խառնաշփոթ տեղեկություն<sup>119</sup>:

Պատմիչի աշխատության առաջին՝ 1869 թ. ոչ ամբողջական բնագրի հրատարակության մեջ, համապատասխանաբար՝ առաջին հիշատակությունում, բացակայում է «որդույն» բառը, երկրորդի մեջ նշված է միայն «արքայ Աշոտ», իսկ երրորդում՝ «Գագիկ»<sup>120</sup>:

Նման տարբնթերցումները հետազոտողներին կանգնեցրել են լուրջ երկրնտրանքի առաջ, քանի որ հատկապես ի սկզբանե բերված հիշատակությունները հուշում են, որ խոսքը, չնայած թվականին, վերաբերում է Գագիկ Ա թագավորին: Մյուսներն էլ, հենվելով թվականի վրա, ինպրո առարկա անձին նույնացրել են Աշոտ Գ-ին:

Մատթեոս Ուտհայեցու աշխատության մեջ Անանիա կաթողիկոսի կողմից, այսպես կոչված, Աշոտ-Գագիկին Անիում հայոց թագավոր օծելու պատմությունը ստիպել է, որ հետազոտողները համարեն, թե Գագիկը եղել է Աշոտ Գ-ի երկրորդ անունը: Մասնավորապես՝ Մատթեոս Ուտհայեցու աշխատության առաջին՝ 1869 թ. հրատարակության մեջ, Գագիկը հրատարակիչների կողմից համարվել է Աշոտ Գ-ի երկրորդ անունը<sup>121</sup>:

Մ. Օրմանյանը ևս համարում էր, որ Գագիկը Աշոտի երկրորդ անունն էր<sup>122</sup>: Մատթեոս Ուտհայեցու աշխատության թարգմանիչ

<sup>117</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 22-24:

<sup>118</sup> Սմբատ սպարապետ, էջ 1-2:

<sup>119</sup> Տե՛ս Աղոնց Ն., Երկեր, հ. Ա, Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 521:

<sup>120</sup> Տե՛ս «Պատմութիւն Մատթեոսի Ուտհայեցոյ», Յերուսաղէմ, ի տպարանի Առաքելական աթոռոյ Ս. Յակովլեանց, 1869, էջ 3-4:

<sup>121</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 549, ծան. 8:

<sup>122</sup> Տե՛ս Օրմանեան Մ., նշվ. աշխ., § 764, սյուն 1107:

Հ. Բարթիկյանը թէ՝ 1973 թ. և թէ՝ 1991 թ. կատարած թարգմանություններում բնագրի «զի տացեն զօծումն թագաւորութեան որդույն Աշոտի Գագկայ» հատվածը թարգմանում է «որպեսզի Աշոտ-Գագիկին թագավոր օծեն», իսկ այնուհետև միանշանակորեն պնդում, որ Գագիկը Աշոտ Գ-ի երկրորդ անունն էր<sup>123</sup>:

Ո. Մաթևոսյանը խնդրի հանգուցալուծման համար կատարել է Մատթեոս Ուտիայեցու աշխատության՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի համեմատական ուսումնասիրություն։ Նա նշում է, որ մի քանի ձեռագրերում նշվում է, թէ «ԽԵ հազար արանց քաջացն, զարդ յԱշոտոյ Գագկա, ի արքունական գնդէն», որտեղ թէ՝ բացակայում է «որդույ» բառը և թէ՝ «յԱշոտոյ Գագկայ» անվանումը գրված է ոչ թէ Անանիա կաթողիկոսի անունից հետո, ինչպես մյուս ձեռագրերում է, այլ դրանից առաջ: «Զարդ» բառն էլ նա մյուս ձեռագրերի հիմքով ընկալում է որպես «զատ» (բացի): Այնուհետև նա մեջ է բերում մի հատված, որ դուրս էր մնացել պատմիչի աշխատության հրատարակություններից. «Ի ՆԱ (ապրիլ, 951 թ.-ապրիլ, 952 թ. - Ա.Ե.) թվականին նստաւ Աշոտ թագաւոր, որդի Արքասա ամս ԻԷ (27). Աշոտ որ Ողորմածն կոչիր, որդի Արքաս, որդոյ Սմբատա, որդոյ Աշոտոյ, առաջին թագաւորութեանն Բագրատունեաց ազգին. յետ Աշոտա Սմբատ ամս ԾԳ (15) ի թվին ՆԻԴ (975), և Գագիկ որդի Աշոտա, եղբայր Սմբատա, ամս ԻԴ (24), և ապա Յոհաննէս և Աշոտ ամս Ի (20)»<sup>124</sup>: Պատմիչի երկի՝ 1869 թ. և 1898 թ. հրատարակության բնագրերում Անիկ՝ մայրաքաղաք հոչակման հատվածում արքայի անունը հիշատակված է երեք անգամ: 1869 թ. հրատարակության մեջ, ինչպես տեսանք, առաջին անգամ նշված է «զօծումն թագաւորութեանս Աշոտ Գագկայ», այնուհետև՝ «արքայ Աշոտ» և ի վերջո՝ «Գագիկ», իսկ 1898 թ. հրատարակության մեջ նույն հատվածները ունեն

<sup>123</sup> Տե՛ս Մատթեոս Ուտիայեցի, 1973, էջ 296, ծան. 12; Մատթեոս Ուտիայեցի, 1991, էջ 484, ծան. 11:

<sup>124</sup> Մաթևոսյան Ո., Մատթեոս Ուտիայեցու «Պատմութեան» տարընթերցումները Բագրատունիների վերաբերյալ, «Պատմաբանասիրական հանդես», 1987, № 2, էջ 122:

հետևյալ տեսքը՝ «զօծումն թագաւորութեան որդույն Աշոտի Գագկայ», «որդի Աշոտի Գագիկ արքայ» և «Գագիկ»<sup>125</sup>: Վերջին բնագիրը, որից, ի դեպ, օգտվել է Հ. Բարթիկյանը, միակն է, որտեղ նշված է «որդույն Աշոտի Գագկայ» ձևը<sup>126</sup>: Ի վերջո Ռ. Մաթևոսյանը վճռում է. «Այս տարբնթերցումների հետ կապված պետք է ասել, որ 961 թ. Անիում որպես հայոց թագավոր օծվողի ձիշտ անունը Աշոտ է (իմա՝ Աշոտ III Ողորմած), այլ ոչ թե Գագիկ, իսկ «որդույն Աշոտի Գագկայ» ձևը շփոթության արդյունք է»<sup>127</sup>:

Փաստորեն, ի տարբերություն այլոց, Ռ. Մաթևոսյանն այնքան էլ հակված չէ Աշոտ Գ-ի՝ երկրորդ անուն ունենալու տեսակետին, այլ կարծում է, թե տեղի է ունեցել շփոթություն:

Կ. Մաթևոսյանը ևս համարում է, որ Աշոտ Գ-ն ուներ երկու անուն, որի հիմնավորման համար մեջ է բերում Սամվել Անեցու «Ժամանակագրության» լրացումները պարունակող ձեռագրերի «Հայոց ՆԾԱ (962). Գագիկ թագաւոր օծաւ Հայոց, որ է նոյն Աշոտ որդի Արասայ»<sup>128</sup> տեղեկությունը:

Պետք է իիշել, սակայն, որ որոշ հեղինակներ համարել են, որ չնայած տարբեթվին՝ Մատթեոս Ուտհայեցու տեղեկությունը վերաբերում է Գագիկ Ա. Բագրատունուն<sup>129</sup>: Այդ առումով էական է Ա. Հակոբյանի մոտեցումը, որտեղ նա Մատթեոս Ուտհայեցու տեղեկության մեջ առանձնացնում է երկու շերտ՝ առաջինը, որը վերաբերում է Անին մայրաքաղաք հոչակելուն, վերաբերում է Աշոտ Գ-ի ժամանակներին, իսկ երկրորդը՝ արքայի օծման վերաբերյալ, որը վերաբերում է արդեն Գագիկ Ա-ի շրջանին, առավել ևս, որ օծման նկարագրությունից երկու

<sup>125</sup> Տե՛ս Մատթեոս Ուտհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի, 1898, էջ 3-4:

<sup>126</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 122-123:

<sup>127</sup> Նույն տեղում, էջ 123:

<sup>128</sup> Մաթևոսյան Կ., Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ, «Պատմաբանական հանդես», 2008, № 3, էջ 4:

<sup>129</sup> Տե՛ս Պողոսյան Ս., Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX-XIII դդ., Երևան, Պետական համալսարանի կրատ., 1956, էջ 178-179:

Էջ անց պատմիչը դարձյալ սխալ թվագրմամբ (հայոց 420 թ.՝ մարտ, 971 թ.-մարտ, 972 թ.) խոսում է Գագիկ Ա-ի մահվան և նրան փոխարինած Հռվիհաննես-Սմբատի և Աշոտի մասին<sup>130</sup>: Ա. Հակոբյանը համոզված է, որ X դ. տեղի ունեցած իրադարձություններից ավելի քան մեկուկես դար անց ստեղծագործած պատմիչը շփոթել ու միախառնել է Անիի մայրաքաղաք հռչակման և Գագիկ Ա-ի թագավորության իրողությունները: Ուստի պատմիչը տեղեկության այն հատվածը, որը վերաբերում է Անիի մայրաքաղաք հռչակմանը և այն է՝ Անանիա Մոկացի կաթողիկոսի ձեռամբ, վերաբերում է 961 թ., իսկ մնացյալը՝ Գագիկ Ա-ի օժման արարողությանը, որը ուսումնասիրողը դնում է 1007/1008 թ.<sup>131</sup>: Ինչ վերաբերում է Երկրորդ անվանը, ապա դրա քննարկումը Ա. Հակոբյանի ուսումնասիրության արդյունքներով դառնում է անիմաստ, ուստի Կ. Մաթևոսյանի մեջբերումը Սամվել Անեցու «Ժամանակագրության» լրացումները պարունակող ձեռագրերից համարում է ընդամենը դրանց հեղինակի կողմից Մատթեոս Ուտհայեցու հիշատակածը տրամաբանական տեսքի բերելու ցանկության հետևանք<sup>132</sup>: Ի վերջո նշենք, որ Ա. Հակոբյանը իր քննության ընթացքում Ռ. Մաթևոսյանի տեսակետին չի անդրադարձել:

Ամփոփելով Աշոտ Գ-ի՝ Երկրորդ անվան և հարակից հարցերի վերաբերյալ հետազոտողների տեսակետների ներկայացումը՝ կարող ենք արձանագրել, որ նրանց շրջանում ակնհայտ է տարակարծությունը Մատթեոս Ուտհայեցու վերոհիշյալ տեղեկությունների վերաբերյալ, սակայն մի քան՝ Անիի հռչակումը մայրաքաղաք 961 թ., կասկածի տակ չի դրվել:

Ա. Հակոբյանի տեսակետը թվում է միակ հավանականը, քանի որ Աշոտին Գագիկը որպես երկրորդ անուն վերագրելը բռնագրոսիկ է՝

<sup>130</sup> Տե՛ս **Մատթեոս Ուտհայեցի**, էջ 12:

<sup>131</sup> Մանրամասն տե՛ս **Յակոբեան Ա.**, Մատթեոս Ուտհայեցու վկայութիւնը 961 թուականին Անին մայրաքաղաք հռչակելու մասին (նոր աղբյուրագիտական քննություն), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIX, Եր., 2014, էջ 309-312:

<sup>132</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 311, ծ. 4:

ուղղված Մատթեոս Ուռհայեցու խնդրո առարկա տեղեկության հակասականությունը հարթելուն:

Պետք է նշել, որ երկրորդ անունների իրողությունը Բազրատունյաց Հայաստանում իրոք տարածված էր: Փաստը ցույց է տալիս, որ Աշոտ Գ Ողորմածն իրոք երկրորդ անուն ուներ: Եվ դա Գագիկը չէր: Նախկինում կարծիք ենք հայտնել, որ Աշոտ Գ-ն կրել է Սահակ երկրորդ անունը<sup>133</sup>: Սակայն ներկայումս հակված ենք վերանայելու այդ տեսակետը, առավել ևս, որ «Յայսմատուք»-ներից մեկում Աշոտ Գ-ն կոչված է Հովհաննես. «...հրամանաւ թագաւորին Աշոտոյ՝ որ ողորմածն կոչիւր, որ է ինքն Յոհաննէս թագաւորն...»<sup>134</sup>: Այդ տեղեկությունը ցույց է տալիս, որ Աշոտ Գ-ն, եթե կրկնանուն ունեցել է, ապա այն Գագիկ չի եղել, այլապես որևէ այլ աղբյուրում կիհշատակվեր:

Ասվածի լրացնվ, Աշոտ Գ-ին Գագիկ անունը որպես երկրորդ անուն վերագրելով, Մատթեոս Ուռհայեցու տեղեկության հակասությունը լուծելը դառնում է անհնարին, եթե, իհարկե, չկարծենք, որ Աշոտ Գ-ն ուներ նաև երրորդ անուն, ինչը չափազանց բռնազրոսիկ է:

Պետք է նշել նաև, որ Մատթեոս Ուռհայեցու նշալ հիշատակության մեջ օծման արարողության մասին տվյալը Գագիկը Աշոտ Գ-ի երկրորդ անուն համարող ուսումնասիրողներին ստիպել է, որ նրանք փորձեն պատասխան գտնել դրանից բխող մեկ այլ հակասության. Աշոտ Գ-ն ամենայն հավանականությամբ արդեն թագադրվել էր 953 թ.: Կ. Մաթևոսյանը, օրինակ, կարծում է, որ նորահաստատ մայրաքաղաքում Աշոտ Գ-ն թագադրվել է<sup>135</sup> փաստորեն երկրորդ անգամ, թեև եթե Մատթեոս Ուռհայեցու տեքստում Գագիկին նույնացնում ենք Աշոտ Գ-ի հետ, ստացվում է, որ նրան պետք է վերագրվի պատմիչի այն խոսքը, թե «...չեւ եւս էր նստեալ յաթոռ թագաւորութեան տանն

<sup>133</sup> Տե՛ս Եղիազարյան Ա., Աշոտ Գ Ողորմածի դարաշրջանը: Մաս Ա. Հայոց թագավորության վերելքը (953-966 թթ.), «Վեմ», 2019, № 3, Էջ 64:

<sup>134</sup> «Գիրք որ կոչի այսմատուք», Կոստանդնուպալյան, ի տպարանի Գրիգոր դպրի Մարսրվանեցոյ, 1730, Էջ եճճք (589):

<sup>135</sup> Տե՛ս Մաթևոսյան Կ., Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ, Էջ 3:

Հայոց և ոչ էր եղեալ թագ ի վերայ գլխոյ իւրոյ»<sup>136</sup>, ասել է՝ մինչև 961 թվականը Աշոտը չէր թագադրվել, որն անհնար է<sup>137</sup>:

Չնայած սրան՝ Մ. Չամչյանցը գրում է, որ Աշոտը հոր մահից հետո (ըստ նրա՝ 952 թ.) ինը տարի պայազատեց հայությանը, և նախարար-ները տեսնելով նրա հզորությունն ու իմաստուն կառավարումը՝ հա-վաքվեցին Անանիա կաթողիկոսի մոտ՝ որոշելով նրան օծել հայոց թագավոր: Արդյունքում Աշոտը Անի քաղաքում 961 թ. օծվեց թագա-վոր<sup>138</sup>:

Այս վարկածը ևս ծնվել է Մատթեոս Ուռհայեցու տեղեկության մեջ ներկայացվող թագադրություն-օծման արարողությունը Աշոտ Գ-ին կապելու ցանկությունից: Մինչդեռ Աշոտ Գ-ի ժամանակակից Անանիա Մոլացի կաթողիկոսը գրում է, որ Աբաս թագավորի մահից հետո «յաջորդէ զաթոռ թագաւորութեանն նորին որդի տէր Աշոտ...»<sup>139</sup>: Իսկ ըստ Ասողիկի՝ «Եւ զինի Աբասայ թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ եւ Շահանշահ կոչիր՝ ամս ԻԵ»<sup>140</sup>: Ակնհայտ է, որ 953 թ. Աշոտ Գ-ն թագադրվել է: Դրա հիմնավորումն է այն, որ Աշոտ Գ-ի ժամանակա-կից հեռինակ Ասողիկը նրան վերագրում է 25 տարվա զահակալու-թյուն՝ փաստորեն հաշվարկը կատարելով 953 թվականից: Իսկ 961 թ. թագադրության մասին ոչ մի խոսք չկա: Այն չի էլ եղել:

Ամփոփելով վերոասացյալը՝ կարող ենք նշել, որ Աշոտ Ողորմա-ծի զահակալության սկզբում թագավորության վերելքը շարունակվում էր նրա շուրջը և ներսում ձևավորված բարենպատ իրադրության պայմաններում: Ի սկզբանե Աշոտ Ողորմածը գրադած էր նոր մայ-րաքաղաքի փնտրտուքով, մայրաքաղաք, որ կհամապատասխաներ հայոց թագավորության քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացման մակարդակին: Անհաջողության մատնվելով Դվինն ազատագրելու ռազմական գործունեության ընթացքում՝ նա կարողա-

<sup>136</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 8:

<sup>137</sup> Տէ՛ս Արոնց Ն., Երկեր, հ. Ա, էջ 521:

<sup>138</sup> Տէ՛ս Չամչյանց Մ., նշվ. աշխ., էջ 836-837:

<sup>139</sup> Անանիա Մոլացի, էջ 268:

<sup>140</sup> Ասողիկի, էջ 755:

ցավ իրեն ենթարկել Երասխի հովտի ամիրայությունները և ջախչա-խել թագավորությանը հարավ-արևմուտքից սպառնացող Համդա-նյանների պետության գորքերին:

Ի վերջո նա կենտրոնացավ աճող ու զարգացող Անի քաղաքի վրա, որն էլ 961 թ. հոչակեց հայոց թագավորության մայրաքաղաք: Անին այդուհետ վերածվեց հայության քաղաքակրթական արարման հիմնական կենտրոնի:

Նման գործունեությունը ցույց է տալիս, որ պատմիչների մի մասի կողմից Աշոտ Գ արքային հիմնականում բարեգործական բնույթի արարքներ վերագրելը հեռու է իրականությունից: Առնվազն իր զահա-կալության առաջին շրջափուլում՝ 953-966 թթ., Աշոտ Գ-ն իրեն դրսու-րել է որպես կառավարման ձիրքով օժտված գահակալ, որն ընդունակ էր մի կողմից ամրապնդելու պետության անվտանգությունը, իսկ մյուս կողմից, համախմբելով երկրի ներուժը, այն առաջնորդել դեպի քաղաքակրթական նվաճումներ:

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**  
**ԲԱԳՐԱՏՈՒՅՑԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ  
ԾԱՎԱԼԱՊԱՇՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽՈՒՄ**  
**(967-975 թթ.)**

**2.1. Աշոտ Գ թագավորի զահակալության երկրորդ պատմափուլի  
մարտահրավերները**

960-ական թթ. վերջը և 970-ական թթ. առաջին կեսը Աշոտ Գ Ողորմածի զահակալության շրջանի առավել բարդ և հանգուցային փուլերից էր: Հզրության գագաթնակետին գտնվող հայոց թագավորությունն այդ ժամանակ կանգնեց մեծ վտանգի առաջ, քանի որ անչափ հավակնութ նվաճողական ծրագրերով Արևելքում հանդես եկան Բյուզանդիայի կայսրեր Նիկեփոր Փոկասը (963-969 թթ.) և Հովհաննես Չմշկիկը (969-976 թթ.): Բյուզանդիայի հիմնական նպատակը Կիլիկիայից մինչև Պաղեստին տարածվող երկրներին տիրելն էր, բայց այդ ձանապարհին նա մի կողմից ձգտում էր օգտվելու Բագրատունյաց թագավորության զինուժի աջակցությունից, իսկ մյուս կողմից Հայաստանի ներսում երկպառակություն սերմանելու և նրանից նորանոր երկրամասեր պոկելու փորձեր էր անում:

Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականության թիրախում էին Տարոն-Տուրուբերանը, Այրարատի Բասեն զավառը, իսկ հեռանկարում՝ նաև Վասպուրականը: Բյուզանդիան փորձում էր հնարավորինս օգտվել հայ ավատատերերի և կենտրոնական իշխանության հարաբերություններում առկա խնդիրներից և օգտագործել որոշ ավատատերերի վերամբարձ նկրտումները: Եվ ցավալիորեն կայսրերին հաջողվում էր հասնել իրենց նպատակներին, ինչի հետևանքով մի կողմից կրծատվում էր հայոց թագավորության տարածքը, իսկ մյուս կողմից միասնական թագավորության մասնատումը թուլացնում էր նրա դիմադրողական կարողությունները՝ հարևանների համար այն դարձնելով ավելի խոցելի:

Աշուտ Գ-ին հաջողվեց ժամանակավորապես կասեցնել 968 թ. Տարոնը զավթած Բյուզանդիայի առաջխաղացումը: Ուստի կայսրությունը սպասելու էր նոր առիթի՝ իր նպատակները կյանքի կոչելու համար:

Հանգիստ չէր նաև թագավորության հոգևոր կյանքը. Բյուզանդիայի առաջխաղացման պայմաններում այն դարձյալ բախվել էր քաղկեդոնականության տարածման վտանգին, որը, բարեբախտաբար, հնարավոր եղավ չեզոքացնել:

## 2.2. Տարոնի զավթումը Բյուզանդիայի կողմից

960-ական թթ., երբ արաբա-բյուզանդական հակամարտության պայմաններում Բյուզանդիայի զորքը հավակնում էր տիրելու Կիլիկիային և Հյուսիսային Ասորիքին, Տարոնը ևս հայտնվել էր կայսրության ուշադրության կենտրոնում:

Ինչպես հայտնի է, Տարոն զավառ 964 թ. ռազմակալվել էր արաբական զորքի կողմից, սակայն Աշուտ Գ-ին հաջողվել էր պարտության մատնել թշնամուն և ազատազրել այն: Ակնհայտ է, որ նա Տարոնը համարում էր հայոց թագավորության անքակտելի մասը և վճռականորեն էր տրամադրված այդ զավառի նկատմամբ հավակնություններ ունեցողների դեմ: Այդ առումով հույժ կարևոր էն Տարոնի հանդեպ Բյուզանդիայի իրականացրած քաղաքականության մասին Ասորիկի և Հովհաննես Սկիլիցեսի երկասիրություններում ներառված դեպքերի հերթականությունն ու տրամաբանությունը: Դրանք տարբեր հետազոտողների կողմից ընդհանուր առմամբ անտեսվել են, իսկ իրադարձությունների ներկայացումը վերածվել է մի պարզունակ պատումի:

Նիկեփոր Փոկաս կայսեր զահակալման շրջանում հայ-բյուզանդական հարաբերություններում առկա խնդիրները ներկայացրել է Սմբատ սպարապետը, սակայն միայն դավանանքային հակադրության տեսանկյունից<sup>141</sup>: Իսկ Ասորիկը հաղորդում է, որ «...ի ՆԺԵ թուականին

<sup>141</sup> Տե՛ս Սմբատ սպարապետ, Էջ 3:

(415 թ.՝ մարտ 966 թ.-մարտ 967 թ.) խաւարեցաւ արեգակն, եւ վախճանեցաւ Տարաւանյ իշխանն Աշոտ: Եւ Տարաւանյ Հռոմը տիրեցին»<sup>142</sup>: Այսինքն՝ պատմիչը ներկայացնում է երեք դրվագ՝ Արևի խավարումը, իշխան Աշոտի մահը և Տարոնին Բյուզանդիայի տիրելը:

Հովհաննես Սկիլիցեսի հիշատակությունը որոշակիորեն պարզաբանում է Ասողիկի խիստ սեղմ հիշատակությունը: Ըստ բյուզանդական հեղինակի, երբ բյուզանդական զորքի կողմից Հյուսիսային Ասորիքի ու Կիլիկիայի քաղաքների գրավման ընթացքում<sup>143</sup> մահմեդականներն Անտիոքում 967 թ. սպանեցին տեղի Քրիստափոր պատրիարքին (960-967 թթ.), իսկ Երուսաղեմում 968 թ. մայիսի 28-ին ողջակիզեցին պատրիարք Հովհաննես Է-ին (964-968 թթ.)<sup>144</sup>, 968 թ. «Կայսեր կողմն անցան Գրիգոր և Բագարատ եղբայրները, նրան ընձեռելով իրենց Տարոն երկիրը: [Կայսրը] նրանց պատրիկի պատվաստիձան շնորհեց, շատ եկամտաքեր կալվածներ նվիրաբերեց: Արեգակի խավարում էլ եղավ դեկտեմբեր ամսի 22-ին...»<sup>145</sup>:

Փաստորեն, Ասողիկը Տարոնի իշխան Աշոտի մահով փակում է Տարոնի հայկական իշխանության եջը, քանի որ նրա որդիները գավառը հանձնել էին Բյուզանդիային, իսկ ահա Հովհաննես Սկիլիցեսը ներկայացնում է Տարոնի՝ մահմեդականների դեմ պատերազմներով ուղեկցվող հանձնման պատմական հանգամանքները՝ դարձյալ նշելով արևի խավարման մասին:

Այստեղ հարկ է պարզաբանել այն, թե ինչպես է Բյուզանդիան տիրացել Տարոնին: Հ. Բարթիկյանը համարում է, որ Աշոտ իշխանը Տարոնը կտակել էր կայսրությանը, և նրա մահից հետո Բյուզանդիան

<sup>142</sup> Ասողիկ, էջ 757:

<sup>143</sup> Խոսքը 963 թ. Բյուզանդիայի արևելից զորավար (դոմեստիկոս) Հովհաննես Չմշկիկի զյսավորած բանակի՝ Կիլիկիա ներխուժելուց մինչև 969 թ. Անտիոքի գրավումը տեղի ունեցած ռազմական գործողությունների մասին է:

<sup>144</sup> Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 292, ծան. 150:

<sup>145</sup> Նույն տեղում, էջ 28:

տիրացել էր իր «Ժառանգությանը»<sup>146</sup>: Ընդ որում, հետազոտողը չի բացառում, որ Աշոտը պարզապես սպանվել է<sup>147</sup>:

Գ. Գրիգորյանը պատմիչների տեղեկությունները մեկնաբանում է հետևյալ կերպ. «Ըստ Ասողիկի, Բյուզանդիան բռնությամբ է Տարոնին տիրել, իսկ Հովհաննես Սկիլիցեսը Տարոնի կցումը համարում է նրա տերերի «կամավոր» զիշման արդյունք»<sup>148</sup>: Մակայն Ասողիկի տեղեկությունը չի կարող միանշանակորեն մեկնաբանվել որպես «բռնությամբ տիրել», քանի որ «Տարաւնոյ Հոռոմք տիրեցին» արտահայտության մեջ օգտագործված «տիրել»-ը ունի նաև «տէր լինել, տիրանալ, տիրապետել, իշխել» իմաստները<sup>149</sup>: Ուստի Տարոնին տիրելը կարող էր նշանակել նաև զավարի անցումը Բյուզանդիային և նրա՝ բյուզանդական արքունիքին ենթակա դատնալը: Այս տեսակետը հիմնավորվում է նաև այն իրողությամբ, որ զավարը հանձնվել է կայսրությանը վախճանված Աշոտ իշխանի որդիների կողմից, և, ինչպես կտեսնենք, Հովհաննես Չմշկիկի արշավանքի ժամանակ այն դեռևս ամբողջու-

<sup>146</sup> Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ XXVI: Հայտնի է, որ Բյուզանդիան Տարոնի նկատմամբ փորձում էր որոշակի իրավունքներ ձեռք բերել՝ տեղի իշխանների կտակների հիմամբ: Մասնավորապես հայտնի են X դ. առաջին կեսին Տարոնի իշխաններից Բագրատի և Թոռնիկի կտակները, որոնցից առաջինն ամուսնացել էր բյուզանդացի բարձրաշխարհիկ մի կնոջ հետ՝ իր տիրույթները կտակերով այդ կնոջից ծնված զավակներին (տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 6, «Բյուզանդական աղբյուրներ», Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմանություն բնագրից, առաջարկան և ծանոթագրություններ՝ Հրաշ Բարթիլյանի, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 8-9), իսկ երկրորդը կայսրությանն առաջարկել էր իր տիրույթները՝ բյուզանդական արքունիքում գտնվելու հնարավորության դիմաց (տե՛ս նոյն տեղում, էջ 9): Այս իրադարձությունների մասին մանրամասն Տե՛ս Դանիելյան Է., Տարոնը հայ-բյուզանդական հարաբերություններում (IX դարի երկրորդ կես-X դար), «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1978, № 1, էջ 129-134:

<sup>147</sup> Հ. Բարթիլյանը, խոսելով Տարի Դավիթ Կուրապաղատի սպանության մասին (1001 թ.), շարունակում է. «Նույնը չկատարվեց արդյոք Տարոնի իշխան Աշոտի հետ» (տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ XXVII):

<sup>148</sup> Գրիգորյան Գ., Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 146:

<sup>149</sup> Տե՛ս «Նոր բազիկը հայկական լեզուի», հ. Բ (Հ-Ֆ), Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 878:

թյամբ և վերջնականապես կցված չէր կայսրությանը: Պատահական չէ, որ Բյուզանդական կայսրության պատմության վերջին հետազոտություններում նշվում է, որ «966 կամ 967 թ. Տարոնն անցավ Բյուզանդիայի տիրապետության ներքո»<sup>150</sup>:

Այսպես թե այնպես, Տարոնի գավթումը Բյուզանդիայի կողմից չի կարելի կապել Աշոտ Գ-ի թուլության կամ բացթողման հետ, առավել ևս, որ, ինչպես տեսանք, նա այդ դեպքից չորս տարի առաջ մեծ վճռականությամբ Տարոնն ազատագրել էր մահմեդականների ռազմակալումից: Խնդիրն այն է, որ Տարոնի վախճանված իշխանի որդիները հայրական ժառանգությունը հանձնել էին Բյուզանդիային՝ «Եկամտաբեր կալվածների» դիմաց, այսինքն՝ կատարվել էր տարածքների գուցե ոչ հավասարաշափ փոխանակում: Գործարքին հայոց թագավորի միջամտությունը որոշիչ լինել չէր կարող, քանի որ Տարոնի ավատատերերն իրենք էին գավառը հանձնել Բյուզանդիային: Իսկ ռազմական միջամտության գնալու Աշոտ Գ-ն ի գորու չէր: Սակայն ստորև կտեսնենք, որ հայոց թագավորը հեշտությամբ չի համակերպվել Տարոնի գավթման հետ, ինչի հետևանքով սրվել էին Բյուզանդիայի հետ հարաբերությունները:

Ինչ վերաբերում է Տարոնի գավթման տարեթվին, ապա այն, բիեցնելով արևի խավարման իրողությունից, թվագրվում է 966-968 թթ.<sup>151</sup>: Չնայած դեկտեմբերի 22-ի խավարումը տեղի է ունեցել 968 թ.<sup>152</sup>, Գ. Գրիգորյանը այդ իրողությունը թողել է աննկատ: Ձեռագրերի քննությամբ նրան հաջողվել է ճշգրտել, որ Աստղիկի հիշատակած տարեթիվն իրականում հայոց 416 թվականն է (մարտ, 967 թ. - մարտ, 968 թ.), որի հիմամբ նա հանգել է այն եզրակացության, որ խոսքը ոչ թե 968 թ. դեկտեմբերի 22-ի, այլ 967 թ. հունիսի 10-ի Արևի խավարման մասին է, ուստի

<sup>150</sup> «The Cambridge history of the Byzantine Empire c. 500-1492», edited by J. Shepard, Cambridge University press, 2009, p. 357.

<sup>151</sup> Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 293, ծան. 154: Բյուզանդիայի կողմից Տարոնի գավթման թվագրումների մասին մանրամասն Տե՛ս Գրիգորյան Գ., նշվ. աշխ., էջ 146, ծան. 135:

<sup>152</sup> Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 293, ծան. 154:

Տարոնի իշխանը վախճանվել է 967 թ., իսկ նրա որդիները հարկադրված<sup>153</sup> Բյուզանդիա են հեռացել արդեն 968 թ.<sup>154</sup>: Ի վերջո, Գ. Գրիգորյանը Տարոնի գրավման տարեթիվ է համարում 968 թվականը<sup>155</sup>:

Տարոնի՝ 968 թ. գավթման տարբերակի հիմնավորման կովանն այն է, որ, ըստ Ասողիկի և Իբն ալ-Ասիրի, հաջորդ տարի բյուզանդական բանակը գրավեց Մանազկերտը: Ասողիկը հաղորդում է, որ «...եւ ի ՆԺԷ (417 թ.՝ մարտ, 968 թ.-մարտ, 969 թ.) թուականին Վարդ (իմա՝ Վարդաս Փոլքաս՝ բյուզանդական հայազգի զորավար - Ա.Ե.)՝ եղբարորդի Նիկիփոռայ (իմա՝ Նիկեփոր Փոլքաս՝ Բյուզանդիայի կայսր (963-969 թթ.) - Ա.Ե.) զաւրու ծանու զայ յԱպահունիս, պաշարէ զՄանազկերտ քաղաք. եւ առեալ զնա՝ ի հիմանց բրեալ խրամատաց զպարհսա նորա»<sup>156</sup>: Իբն ալ-Ասիրը տեղեկացնում է, որ հիջրայի 359 թ. (նոյեմբեր, 969 թ.-նոյեմբեր, 970 թ.) բյուզանդացիները գրավեցին Մանազկերտը պաշարուսից հետո<sup>157</sup>: Ա. Տեր-Ղևոնդյանը իրավացիորեն այս իրադարձության տարեթիվ է համարում 969 թվականը՝ համադրելով երկու պատմիչների ժամանակագրական տեղեկությունները<sup>158</sup>:

<sup>153</sup> Այն, որ Բյուզանդիան ստիպել է եղբայրներին հանձնել Տարոնը, ըստ Գ. Գրիգորյանի, հիմնավորվում է նրանով, որ եղբայրները Բյուզանդիայում միացել էին Վասիլ Բկայսեր (976-1025 թթ.) դեմ փոքրասիական գննվորական ավագանու՝ Վարդաս Սկլերոսի գլխավորությամբ բարձրացրած ապստամբությանը (976-979 թթ.). «...մենք Տարոնի իշխաններին տեսնում ենք կայսրության դեմ ընդդիմացածների թվում» (**Գրիգորյան Գ.**, նշվ. աշխ., էջ 156): Այդ մասին հիշատակում է Ասողիկը (տե՛ս և **Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 763): Սակայն Վարդաս Սկլերոսի ապստամբության մասնակիցներին «կայսրության դեմ ընդդիմացածներ» համարելն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ խսդը ոչ թե կայսրության, այլ կայսեր դեմ ապստամբության մասին է: Փաստորեն, երկու եղբայրները մասնակցել են ոչ թե կայսրության դեմ ապստամբության, այլ պարզապես կայսրության ներսում եղած գահակալական կոիվների, որոնց ընբացքում Վարդաս Սկլերոսն իրեն հռչակել է կայսր (տե՛ս և **Հովհաննես Սկիլիցես**, էջ 56-57):

<sup>154</sup> Տե՛ս **Գրիգորյան Գ.**, նշվ. աշխ., էջ 146-148:

<sup>155</sup> Տե՛ս և նույն տեղում, էջ 155:

<sup>156</sup> **Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 757:

<sup>157</sup> Տե՛ս և **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 185:

Վերևում խոսվեց այն մասին, որ 964 թ. ոչնչացվել էր Ապահունիքին՝ Մանագկերտ քաղաքով, տիրող արաբական կայսիկների ամիրայությունը, որի տիրույթներին տեր դարձած Հյուսիսային Սուրիքի (Հալեպ կենտրոնով) Համդանյան ամիրա Սայֆ ալ-Դառլայի մահից հետո (967 թ.) դրանք պետք է հայտնվեին մասնավորապես Աշոտ Գ-ի և Բյուզանդական կայսրության շահերի ոլորտում։ Առավել ևս, որ Կոստանդին Ծիրանածինը հաղորդում է, թե հայոց թագավոր Սմբատ Ա-ի սպանությունից (914 թ. հունվարի 7<sup>159</sup>) հետո կայսիկների տիրակալները հպատակություն են հայտնել կայսրությանը և հարկ վճարել նրան՝ դրանով իսկ հիմնավորելով կայսրության իրավունքը կայսիկների հողերի նկատմամբ<sup>160</sup>։ Սակայն Մանագկերտի ուղղությամբ կատարված արշավանքից հետո կայսրության բանակը, ամենայն հավանականությամբ, վերադարձել էր կամ ստիպված լրել քաղաքը։ Հատ Է. Դանիելյանի ճիշտ կրահման՝ դրանից հետո Հարք և Ապահունիք զավաները Աշոտ Գ-ն կարողացել էր կցել հայոց թագավորությանը<sup>161</sup>։ Խոնդիրն այն է, որ դրանից որոշ ժամանակ անց՝ 974 թ., Բյուզանդիայի կայսր Հովհաննես Զմշկիկը (969-976 թթ.) մուտք գործեց Տարոն միայն Աշոտ Գ-ի հետ հաշտություն կնքելուց հետո, չնայած որ, դատելով հայոց թագավորին կայսեր գրած նամակից, Տարոնում արդեն բյուզանդական զորավար էր նշանակված<sup>162</sup>։ Կարելի է անել հետևողություն, որ Աշոտ Գ-ին հաջողվել է հասնել նրան, որ բյուզանդական զորքը լրի Հայաստանի կենտրոնական շրջանները նախքան Հովհաննես Զմշկիկի զորքի արշավանքը 974 թ., քանի որ եթե այդ զորքը գտնվեր Մանագկերտում, ապա հայկական բանակը, կենտրոնանալով Հարքում, կհայտնվեր երկու բյուզանդական բանակների միջև, ինչը մարտավարական առումով անհնարին էր։ Մանագկերտը գրավելուց անմիջա-

<sup>159</sup> Տե՛ս Եղիազարյան Ա., Աշոտ Երկար. թագավոր հայոց, Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջ 20:

<sup>160</sup> Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 10-13:

<sup>161</sup> Տե՛ս Դանիելյան Է., Տարոնը հայ-բյուզանդական հարաբերություններում, էջ 135։ Հետազոտող կարծում է, որ Աշոտ Գ-ն տիրել է Մանագկերտին մինչև 974 թ., սակայն ստորև կուտանքներ, որ քաղաքը հայոց թագավորությանն է պատկանել մինչև 978 թ.։

<sup>162</sup> Տե՛ս Սատթեսո Ուսհայեցի, էջ 32:

պես հետո բյուզանդական բանակի հեռանալը Ապահովիքից կարելի է բխեցնել այն իրողությունից, որ բյուզանդացիներն իսպառ կործանեցին Մանագկերտի պարհսպները, որը հակասում է քաղաքում ամրապնդվելու թեական նպատակադրմանը, ինչը, ընդհակառակը, ենթադրում էր պարհսպների ամրապնդում:

Վերադառնալով Տարոնի զավթմանը՝ նշենք, որ 968 թ. և հետագա տարիներին բյուզանդացիներին Տարոնի հարցը վերջնականապես լուծել չհաջողվեց, թեև Ասողիկի տեղեկությունից կարելի է հակառակ տպավորությունը ստանալ:

Այստեղ նաև հավելենք, որ Տարոնի զավթումը, փաստորեն, տեղի է ունեցել նախքան Հովհաննես Զմշկիկի զահակալությունը՝ Նիկեփոր Փոկա կայսեր օրոք: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ վերջինիս այդպես էլ չի հաջողվել ավարտին հասցնել Տարոնի բռնակցումը Բյուզանդիային:

Հարկ է հստակեցնել Հովհաննես Զմշկիկի արշավանքին առնչվող կարևոր իրողություններ: Մատթեոս Ուտհայեցին այս արշավանքը ներկայացնում է 973 թ. դեպքերի նկարագրությունից հետո՝ առանց հստակ թվագրման<sup>163</sup>, իսկ Հովհաննես Սկիլիցեսն այն թվագրում է 975 թվականով<sup>164</sup>: Կարևոր է այն, որ նշված պատմիչները Հովհաննես Զմշկիկի միայն մեկ արշավանք են հիշատակում, իսկ բյուզանդական մեկ այլ հեղինակ՝ Լեոն սարկավագը՝ երկու: Ըստ վերջինի՝ Հովհաննես Զմշկիկի զիմավորած առաջին արշավանքը սկսվել է ամռանը և տեղի ունեցել Ամիդ-Մծրին-Էկրատան երթուղով<sup>165</sup>: Երկրորդ արշավանքը սկսվել է հաջորդ տարվա գարնանը, ընթացել Մամբիջ (Հալեպից շուրջ 60 կմ հյուսիս-արևելք)-Ապամեա-Դամասկոս-Բեյրութ-Տիֆաուլիս երթուղով և ավարտվել օգոստոսին<sup>166</sup>: Մատթեոս Ուտհայեցու երկում մեջբերված՝ Աշոտ Գ-ին գրված Հովհաննես Զմշկիկի նամակում նախ խոսվում է Տա-

<sup>163</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 20-22:

<sup>164</sup>Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 53-54:

<sup>165</sup>Տե՛ս և Լեվ Դիակոն, История (այսուհետև՝ Լեվ Դիակոն), перевод М. Копыленко, М., изд. «Наука», 1988, с. 84-85.

<sup>166</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 86-87:

րոնին առնչվող միայն մեկ արշավանքի մասին, որը տեղի է ունեցել սկզբում դեպի Ամիդ և Մծրին, իսկ այնուհետև՝ ապրիլին՝ դեպի Ասորիք, Փյունիկե և Պաղեստին: Նշված երկրներում արշավանքն ընթացել է Աստիք-Հոմս-Բաալբեկ-Դամասկոս-Շիբերական ծով (Գալիլեայի ծով)՝ Պաղոսիա-Բեյրութ-Բիբլոս-Տրիփոլիս-Անտիոք երթուղով և տևել 7 ամիս՝ մարտից սեպտեմբեր<sup>167</sup>: Ակնհայտ է, որ Հովհաննես Սկիլիցեսը խոսում է միայն 975 թ. արշավանքի մասին, իսկ Մատթեոս Ուռիհայեցու երկում մեջքերված նամակը գրվել է բյուզանդական բանակի երկու արշավանքներից հետո՝ հավանաբար 975 թ. վերջին: Այնտեղ ներկայացված են երկու արշավանքներն ել. առաջինը՝ խիստ համառոտ, իսկ երկրորդը՝ ընդարձակ շարադրանքով<sup>168</sup>: Քանի որ կայսրն անհրաժեշտ է համարել Աշոտ Գ-ին նամակով ներկայացնել երկու արշավանքների հանգամանքներն ել, ակնհայտ է, որ նա հայոց թագավորին հանդիպել է դրանցից առաջ: Հարկ է նշել, որ երկրորդ արշավանքի երթուղին սկսվել ու ավարտվել էր Անտիոքում, ինչը բացառում է Տարոնի դեպքերի՝ 975 թ. տեղի ունենալը, քանի որ ռազմավարական առումով լիովին անիմաստ ու անտրամաբանական էր Անտիոքից արշավանք սկսելիս դեպի արևելք շարժվելն ու Տարոն հասնելը, ապա՝ երկարատև ճանապարհով դեպի հարավ-արևմուտք ուղևորվելն ու նոր միայն Պաղեստին արշավելը: Այն, որ Հովհաննես Զմշկիլի բանակի երկրորդ արշավանքը տեղի է ունեցել 975 թ., հուշում է զիսաստոի հայտնվելը, որը հիշատակվում է Հովհաննես Սկիլիցեսի<sup>169</sup>, Լևոն սարկավագի<sup>170</sup> և Ասորիլի<sup>171</sup> երկերում: Հովհաննես Սկիլիցեսն ու Ասորիլը այդ իրադարձությունը թվագրում են 975 թվականով. առաջինը՝ օգոստոսին, իսկ երկրորդը՝ «ի մուտս ամառնային եղանակին» (այսինքն՝ ամառվա ավարտին, ավելի ստույգ՝ օգոստոսին):

<sup>167</sup> Տե՛ս Մատթեոս Ուռիհայեցի, էջ 24-32:

<sup>168</sup> Հովհաննես Զմշկիլի արշավանքների մասին Տե՛ս Կառլեն Գ., К вопросу о религиозном характере восточного похода Иоанна I Цимисхия, «Вестник» русской христианской гуманитарной академии, 2012, т. 13, вып. 4, сс. 43-50:

<sup>169</sup> Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 53:

<sup>170</sup> Տե՛ս Լեւ Դիակոն, էջ 87:

<sup>171</sup> Տե՛ս Ասորիլ, էջ 760:

Այսպիսով, կարելի է ամրագրել, որ Տարոնի շուրջ հայ-բյուզանդական քանակությունները տեղի են ունեցել 974 թ.:

Մատթեոս Ուտհայեցին, պատմելով Հովհաննես Չմշկիկ կայսեր զիխավորությամբ բյուզանդական բանակի 974 թ. արշավանքի մասին, գրում է, որ կայսրը «յարձակեցաւ ի պատերազմ ի վերայ Տաճկաց և կամեցաւ զմուտն յաշխարհն Հայոց առնել», այսինքն՝ մուտք գործել հայոց թագավորություն<sup>172</sup>: Պատմիչը նկատի ունի Տարոնը և, հավանաբար, նաև Հայաստանի այլ շրջաններ<sup>173</sup>: Ասորիք արշավելու ձանապարհից շեղվելն ու Տարոն ուղևորվելը Վ. Խոկանյանն իրավացիորեն բացատրում է Տարոնին առնչվող վիճելի հարցերը լուծելու և այնտեղ Բյուզանդիայի իշխանությունն ամրապնդելու կայսեր ցանկությամբ<sup>174</sup>: Խնդիրն այն է, որ Աշոտ Գ-ն այնքան էլ հակված չէր ընդունելու տեղի ունեցածը և ամեն կերպ հակադրվում էր Բյուզանդիայի կայսերը:

Ուստի պատահական չէ, որ կայսեր գորաշարժը դեպի արևելք առիթ դարձավ հայկական զորքի գորաշարժին դեպի արևմուտք. «Յայն-ժամ ամենայն թագաւորազունքն Հայոց՝ ազատքն և իշխանքն և ամենայն մեծամեծքն աշխարհաց տանն արեւելից ժողով արարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի. թագաւորն Կապանին Փիլիպպէ և թագաւորն Աղուանից Գուրգէն, Աբաս Կարուց տէրն ու Սենեքերիմ Վասպուրականիս տէրն և Գուրգէն Անձեւացեաց տէրն և բովանդակ ամենայն տունն Սասանու. և բանակ հարեալ ի Հարքայ զաւախին արք իբրեւ ութսուն հազար»<sup>175</sup>: Այս նույն տեղեկությունը հաղորդում է նաև

<sup>172</sup> Տե՛ս Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 105:

<sup>173</sup> Հայ Վ. Ստեղանենկոյի նրա էքսպանսիվնիստական (ծավալապաշտական) նպատակների ծիրում Տարոնից դեպի արևելք շարժվելն էր, որը խափանվեց Աշոտ Գ-ի շուրջ հայկական պետությունների միավորմամբ (տե՛ս Ստեղանենկո Վ., Իз истории Армяно-византийских отношений второй половины X-XI в. (к атрибуции монет Кюрикэ куропалата), «Античная древность и средние века», Свердловск, 1978, вып. 15, с. 45):

<sup>174</sup> Տե՛ս Խոկանյան Վ., Հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունների պատմությունից, «Գիտական աշխատությունների ժողովածու» Խ. Արովյանի անվան ՀՊՄՖ-ի, Եր., 1957, № 6, էջ 107:

<sup>175</sup> Մատթեոս Ուտհայեցի, էջ 22:

Սմբատ սպարապետը, բայց «ամենայն տունն Սասանու» հատվածի փոխարեն գրված է «ամէն տուն Հայոց», իսկ այնուհետև՝ «եւ զօրք արքունի զոր էաւ քաջ արքայն Աշոտ եւ բանակեր ամենայն քաջօքն ի Հարք զաւառին»<sup>176</sup>:

Ուստիմնասիրողներն արդեն անդրադարձել են բերված անվանացանկի ժամանակավորեպությանը՝ ընդգծելով, որ, մասնավորապես, «թագաւորն Աղուանից Գուրգէն», որն Աշոտ Գ-ի որդին էր, 974 թ. դեռ թագավոր չէր հռչակվել, իսկ Աբասը Կարսի թագավոր է դարձել միայն 984 թ.<sup>177</sup>: Բ. Հարությունյանը ենթադրում է, որ այդ ժամանակ «Աբասը լոկ կարող էր գլխավորել Վանանդի թագավորության զինված ուժերը»<sup>178</sup>: Ավելին, ըստ հետազոտողի, դատելով Ասողիկի խիստ հստակ տեղեկություններից, Աշոտ Գ-ի օրոք թագավոր է հռչակվել միմիայն Մուշեղը Կարսում, ուստի մյուս թագավորների հիշատակությունը պարզապես սխալ է կամ խեղաթյուրված<sup>179</sup>: Իրականում, ըստ Ա. Տեր-Ղևոնյանի, «...Աշոտ Գ-ն, իր հետ ունենալով Հայաստանի բոլոր երեւելի իշխաններին ... կանգ առավ Հարք զավառում: Կայսրը իր հերթին եկավ և կանգ առավ Տարոնի Այծյաց բերդի դիմաց, այսինքն ամեն մեկը կանգ առավ այնտեղ, որտեղ վերջանում էին իր տիրույթները»<sup>180</sup>: Սակայն հեղինակի տեսակետը ճիշտ է մասամբ, քանի որ, ինչպես ստորև կտեսնենք, կայսեր բանակը Տարոն մտավ այն բանից հետո միայն, եթե Աշոտ Գ-ի պատվիրակների հետ պայմանավորվեց հաշտության հարցում, այսինքն՝ Տարոնի հարցն ամրողությամբ լուծված չէր:

Այսպիսով՝ հարկ է արձանագրել, որ պատմագիտության մեջ Հովհաննես Չմշկիկի՝ 974 թ. դեպի Տարոն կատարած արշավանքի և նրա ու Աշոտ Գ-ի միջև տեղի ունեցած բանակցությունների ընթացքը խորությամբ լուսաբանված չէ: Իրականում սկզբում հակական զորքի

<sup>176</sup> Սմբատ սպարապետ, էջ 9:

<sup>177</sup> Տէ ս, օրինակ, Հարությունյան Բ., Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, էջ 148-149:

<sup>178</sup> Նույն տեղում, էջ 149:

<sup>179</sup> Տէ ս նույն տեղում:

<sup>180</sup> Տեր-Ղևոնյան Ա., Արարական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 186:

Ճամբար են ժամանել կայսեր պատվիրակները, որոնք վերադարձնալով կայսերը գեկուցել են Տարոնի սահմանին կազմ ու պատրաստ բանակած հայկական մեծարիկ գորքի մասին: Այնուհետև Սշոտ Գ-ն կայսեր մոտ է ուղարկել Լեռն իմաստասերին, որի մասին մանրամասնորեն կխոսվի ստորև, և իշխան Ստատ Թոռնեցուն<sup>181</sup> եպիսկոպոսների ու վարդապետների հետ<sup>182</sup>: Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, թե ամեն ինչ ընթացել է խաղաղ հունով, իսկ կայսրն էլ Հայաստանում որևէ ռազմական ձեռնարկ իրականացնելու նպատակ չի ունեցել: Սակայն պատմիչի հաջորդ վկայությամբ՝ Բյուզանդիայի կայսրը Տարոնից դեպի Հայաստանի խորքը ներխուժելու ծրագիր է ունեցել, քանի որ «Եւ եկեալ հրեշտակ թագաւորին Հոռոմոց առ նոսա (իմա՝ Հարքում հավաքված հայկական զորագնդերի կողմը - Ա. Ե.) և տեսին պատրաստական զամենայն տունն Հայոց ժողովեալ ի մի վայր և երթեալ պատմեցին թագաւորին Զմշկանն. զնացին և յիշխանացն Հայոց զկնի հրեշտակացն Հոռոմոց՝ իմաստասերն Լեռն և Ստատ իշխանն Թոռնեցին և այլ եպիսկոպոսք և վարդապետք և արարին սէր և խաղաղութիւն ընդ թագաւորին Հոռոմոց և ընդ Աշոտոյ արքային Հայոց: Եւ զայր խաղայր թագաւորն Զմշկիկ ահազին բազմութեամբ և հասաներ ի Տարօն գաւառ Հայոց և իշեալ ի Մուշ առաջի Այծեաց բերդին. և յառաջին զիշերն բազում նեղութիւն կրեաց զօրքն Հոռոմոց ի հետեւակ զօրացն Սասանու (իմա՝ Սասունի - Ա. Ե.) և եկին իշխանքն և վարդապետքն Հայոց առ թագաւորն Հոռոմոց և մատուցանեին առաջի նորա զթուղթն Վահանայ Հայոց կաթուղիկոսին<sup>183</sup>: Եւ թագաւորն

<sup>181</sup> Մ. Զամշանցը ճիշտ ձեր համարում է «Սմբատ»-ը (տե՛ս Զամշանց Մ., նշվ. աշխ., էջ 845): Խոչ Հ. Բարթիկյանը, թեև սկզբում նշում է, որ Սատթեռու Ուտհայեցու այլ ձեռագրերում բերվում է «Սմբատ» անվանաձևը, սակայն համարում է, որ «Ստատ»-ը «Եվստաթ» անվան աղավաղված տարբերակն է (տե՛ս Սատթեռու Ուտհայեցի, Ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Հ. Բարթիկյանի, Եր., «Հայաստան» հրատ., 1973, էջ 300, ծան. 47):

<sup>182</sup> Տե՛ս Սատթեռու Ուտհայեցի, էջ 22:

<sup>183</sup> Պատմիչի այս հիշատակությունը վսալ է, քանի որ Վահան կաթողիկոսը 970 թ. արդեն վախճանվել էր: Հովհաննես Զմշկիկի արշավանքի շրջանում աթոռակալում էր Խաչիկ Ա-ն (972-991 թթ.):

առեալ ընկալաւ զնա և յոյժ մեծարեաց զթուղթն և զբերողն. և հաստատեաց ուխտ սիրոյ ընդ Հայք և խնդրեց օրս յԱշոտոյ գալ նմա յօգնականութիւն. և տուեալ Աշոտ օրս ի տանէ Հայոց վարելոց և այր պատերազմողս իբրեւ տասն հազար, խնդրեաց կերակուրս, ոռձիկս. և զամենայնն տուեալ նմա Աշոտ»<sup>184</sup>: Պատմիչի կողմից դեպքերի ընթացքի նկարագրությունը հուշում է, որ կայսեր պատվիրակ-հետախույզները Հարբում բանակած հայկական զորքը դիտարկել են նախքան բյուզանդական բանակի Տարոն մտնելը: Այն Տարոն է մտել միայն այն բանից հետո, եթի նախնական կարգով «սեր և խաղաղություն» է հաստատվել Բյուզանդիայի և Հայաստանի տիրակալների միջև: Պարզ է, որ «սեր և խաղաղություն» հաստատելու անհրաժեշտություն է առաջացել այն պատճառով, որ կայսեր նկրտումները Հայաստանի նկատմամբ այնքան էլ խաղաղ չեն եղել, և դա հայտնի է եղել հայոց թագավորին, որն էլ թագավորության ողջ զորքը գումարել և շարժվել է ընդառաջ: Կայսրը խաղաղության է ձգտել միայն այն բանից հետո, եթի նրա հետախույզները նրան հայտնել են հայկական 80 հազարանց բանակի մասին:

Բացի այդ՝ բյուզանդական զորքի՝ Տարոն մուտք գործելը այն բանից հետո միայն, եթի հաստատվել է «սեր և խաղաղություն», ցույց է տալիս, որ Տարոնի զավթումը տարիներ առաջ լուրջ լարվածություն էր ստեղծել հայ-բյուզանդական հարաբերություններում, որի պատճառով Աշոտ Գ-ն, բյուզանդական բանակի առաջխաղացման մասին իմանալով, ընդառաջ էր գնում հսկա բանակով, իսկ Հովհաննես Զմշկիկն էլ չէր համարձակվում մուտք գործել Տարոն՝ առանց Հայոց թագավորի հետ խաղաղություն հաստատելու: Հայ-բյուզանդական խիստ լարված հարաբերությունների մասին է վկայում Ասորիք կատարած արշավանքից հետո հայոց Ղեռնդ վարդապետին կայսեր ուղարկած նամակը, որում մասնավորապես գրված էր. «...յորժամ եկիր առ մեզ ի յԱշոտոյ շահնշահէ և հոգիական զաւակէ մերմէ և դար-

<sup>184</sup> Մատքեռս Ռուհայեցի, էջ 22:

ձուցեր զամենայն սրտմտութիւնս ի նմանէ»<sup>185</sup>: Ըստ Հ. Բարթիկյանի սպառիչ տեսակետի՝ նույն անձն են Լեռն իմաստասերն ու Ղետնդ վարդապետը, որին Հովհաննես Չմշկիկն իր նամակրւմ Պանդալսոն է անվանում<sup>186</sup>: Սակայն այստեղ առավել էական է այն, որ երբ վարդապետը հանդիպել է կայսերը մինչև վերջինիս՝ Տարոն մտնելը, նրա հետ գրուցը վերացրել է Աշոտ Գ-ի նկատմամբ կայսեր ունեցած սրտմտությունը (զայրույթ, ցասում, վրեժինորություն)<sup>187</sup>: Հավանաբար Տարոնի զալքումից հետո հայ-բյուզանդական հարաբերությունները վատրաբացել էին, սակայն Աշոտ Գ-ն 974 թ. դրությամբ հակված էր հարթելու Բյուզանդիայի հետ հակամարտությունը: Չմշկիկն ինքն էլ հակված չէր հայոց թագավորի հետ հարաբերությունների սրմանը, քանի որ նրա հիմնական նպատակը Աստրիք և Պաղեստին արշավելն էր: Ուստի զորք խնդրեց և, ստանալով այն, սկսեց իր արշավանքները դեպի մահմեդական երկրամասեր<sup>188</sup>:

Այդքանից հետո էլ Տարոնում բյուզանդական բանակի համար ամեն ինչ հարթ չընթացավ, և սասունցիների հետևակ զորքը ծանր հարվածներ հասցրեց նրան Այծյաց բերդի մոտակայքում, որը, Հ. Բարթիկյանի ճշգրիտ դիտարկմամբ, ենթակա էր Աշոտ Գ-ին<sup>189</sup>: Ի վերջո եկան հայ պատգամաբերներն ու կայսերը հանձնեցին հայոց կաթողիկոսի նամակը, որը նա ընդունեց մեծարանքով և հայերի հետ «սիրո ուխտ» հաստատեց: Պատմիչի հետագա տեղեկությունները որոշ չափով լույս են սփռում համաձայնության պայմանների վրա: Ակնհայտ

<sup>185</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>186</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 486, ծան. 42:

<sup>187</sup> Տե՛ս «Սոր բառզիքը հայկական լեզուի», հ. Բ (Հ-Ֆ), էջ 765:

<sup>188</sup> Այստեղ անհրաժեշտաբար նշենք, որ, ըստ Հովհաննես Սկիլիցեսի, հայկական զորամիավորում կար բյուզանդական բանակի կազմում նաև 964 թ. Կիլիկիան նվաճելու նպատակով անձամբ Նիկեփոր Փոլքս կայսեր գլխավորած արշավանքի ժամանակ (տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 20): Հ. Բարթիկյանի դիպուկ կոահմամբ՝ հայկական զորամիավորման վերաբերյալ բյուզանդացի հեղինակի նշած «դաշնակից» բառը հուշում է, որ խոսքը ոչ թե Բյուզանդիայի հայկական զորաջոկատների մասին է, այլ Հայաստանից ստացված օգնական զինուժի (տե՛ս նույն տեղում, էջ 288, ծան. 115):

<sup>189</sup> Տե՛ս նույն տեղում, էջ XXVI:

է, որ Աշոտ Գ-ն ևս խուսափում էր բյուզանդացիների հետ հակամարտությունից, ինչի պատճառով կայսերը հանձնեց իբրև օգնություն խնդրած 10 հազար զինվոր<sup>190</sup> և, ինչպես պարզվում է ավելի ուշ Հովհաննես Չմշկիկի՝ Աշոտ Գ-ին ուղարկած նամակից, հանձն առավելությանդացիներին հանձնել Մուշի մոտակայքում գտնվող Այծյաց բերդը («...զԱյծեաց բերդն որպէս յանձին կալար՝ չես տուեալ»<sup>191</sup>): Սակայն կայսրն ի վերջո հրաժարվեց Այծյաց բերդից. «...այժմ գրեցաք առ զօրաւարդ մեր, որ ոչ բերդն առնու և ոչ զցորեանն զոր պայմանեցեր»<sup>192</sup>, զի այժմ չեղեւ առ մեզ պէտք»<sup>193</sup>: Փաստորեն, Սասունը և Մուշին մերձակա Այծյաց բերդը մնացել էին հայոց թագավորության կազմում: Ավելին՝ կայսրը գրում էր նաև, որ «...և զվաստակոցդ քոց և զարմտեացդ գտանես զփոխարէնն ըստ սերմանեացն զամենայն բարի մի ըստ միոշէ»<sup>194</sup>, ասել է՝ հայոց թագավորին տրվելու էր այդ հաղթանակներում ունեցած մեծ ներդրմանը համապատասխան բարիք, որի մանրամասն նկարագրությունը տալիս է Սմբատ սպարապետը: Նրա հաղորդման համաձայն՝ կայսրը «առաքէ զիշխանն Հայոց եւ զօրս եւ զեպիսկոպոսս բազում զօրոք եւ պարզեւօք առ թագաւորն Աշոտ, եւ պարզեւս թագաւորին շատ գանձ ուսկի, արծաթ...»<sup>195</sup>: Խոսքը «դահեկան ԼՌ (30.000) և ծառայս ԲՌ (2000), ձի ԺՌ (10.000) և ջորի Ռ (1000)» մասին է<sup>196</sup>.

Հստ Ն. Ադրնոցի՝ Սմբատ սպարապետը, որն օգտվել է Մատթեոս Ուռհայեցու տեղեկություններից, ձեռքի տակ ունեցել է նրա աշխատության ավելի ճշգրիտ օրինակ, որտեղ էլ նշված են եղել կայսեր նվեր-

<sup>190</sup> Հստ Սմբատ սպարապետի՝ այդ զորագնդի հրամանատարը Գեորգին էր (տե՛ս Սմբատ սպարապետ, էջ 9):

<sup>191</sup> **Սատրեն Ուռհայեցի**, էջ 32:

<sup>192</sup> Պատմիշի՝ հրատարակության համար հիմք դարձած ձեռագրում՝ «պումանեցիր», որն աղավաղված է (տե՛ս Սմբատ Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1898, էջ 27, ծան. 4):

<sup>193</sup> **Սատրեն Ուռհայեցի**, էջ 32:

<sup>194</sup> Նույն տեղում:

<sup>195</sup> **Սմբատ սպարապետ**, էջ 10:

<sup>196</sup> Նույն տեղում, էջ 12:

ները հայոց թագավորին<sup>197</sup>: Այս առումով հետաքրքրական է նաև «Յայսմաւուրքի» տեղեկությունը, թե «... [Չմշկիկը] յդեաց ԲՌ (իմա՝ 2 հազար - Ա. Ե.) տաճիկ ծառայս, և ԺՌ (իմա՝ 10 հազար - Ա. Ե.) ձիս և ջորիս Հայոց արքային Աշոտ, վասն զի Աշոտ թագաւորն տւեալ էր յօնականութիւն նմա ԶՌ (80 հազար - Ա. Ե.) ձիաւորս և այլ բազում հետեակս»<sup>198</sup>: Վերջինս մասամբ կրկնում է Սմբատ սպարապետի տեղեկությունը, մասամբ էլ նորություններ է հաղորդում, ինչպես, օրինակ, Աշոտ Գ-ին կայսեր կողմից արար (տաճիկ) ծառաներ ուղարկելու մասին:

Կատարված քննությունը ցույց է տալիս, որ մինչև 974 թվականը Տարոնի կարգավիճակը Բյուզանդիայի կազմում ճշտված չէր և դա առաջին հերթին այն պատճառով, որ հայ-բյուզանդական հարաբերություններում Տարոնի զավթման պատճառով առաջացել էր լուրջ հակասություն, որի հարթումից հետո միայն՝ 975 թ., ինչպես դիպուկ նկատել է Գ. Գրիգորյանը, Դերջանի և Տարոնի հողերից բյուզանդացիներն առանձին վարչական միավոր (բանակաթեմ) ձևավորեցին<sup>199</sup>: Նոյն պատճառով Հ. Բարթիկյանը հակված էր այն մտքին, որ 966-974 թթ. կայսրությունը Տարոնի իշխանությունը ժամանակավորապես թողել է բնիկ տերերին՝ Բագրատունի իշխաններին<sup>200</sup>, որը գուրկ չէ հավանականությունից:

Պետք է նշել նաև, որ Տարոնի իշխանների կողմից հայրենի զավառի փոխանակումը Բյուզանդիայում գտնվող կալվածքների հետ և պատվաստիճանների ստացումը խարուսիկ էին, քանի որ հետագայում կայսրերը հետևողականորեն հրաժարվում էին այն հարգալից մոտեցումից, որ կար փոխանակման պահին: Պետք է հիշել, որ XI դ. երկրորդ կեսի բյուզանդական հայազգի գործիչ Կելավմենոսի գրվածքներից մեկում կա մի խորհուրդ, որը բացահայտում է Բյուզանդիայի նման քաղաքականության բուն էությունը և կանխագուշակում այն, ինչ սպասվում էր Տարոնը կայսրությանը հանձնած Բագրա-

<sup>197</sup> Տե՛ս Արոնց Ն., Երկեր, հ. Ե, էջ 369-370:

<sup>198</sup> «Գիրք որ կոչի Այսմաւորք», էջ եՃ (590):

<sup>199</sup> Տե՛ս Գրիգորյան Գ., նշվ. աշխ., էջ 151:

<sup>200</sup> Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ XLV:

տունի իշխաններին: Նա նշում է. «Եթե պատահի սեփական երկրում բերդեր ունենաս կամ զյուղեր, ...քեզ չմոլորեցնեն զանձերը կամ պաշտոնները, կայսրերի մեծ խոստումները և հանկարծ երկիրդ տաս կայսեր, փոխարենն ստանալու համար դրամ ու կալվածքներ՝ թեկուզ տվածիդ քառապատիկը: Դահպանիր քո երկիրը թեկուզն փոքրիկ ու չնշին, քանզի նախընտրելի է քեզ [կայսեր] ինքնիշխան բարեկամը լինել, քան ստրուկն ու հպատակը: Դու կայսեր և բոլորի մոտ այնքան ժամանակ հարգանք, պատիվ, գովք ու փառք կվայելես, քանի դու, երեխանները քո ու նրանց [երեխանները] երկրիդ տերն եք: Եթե զրկվես քո երկրից, տապալվես իշխանությունիցդ, Ճիշտ է, սկզբնական շրջանում պիտի վայելես կայսեր սերը, բայց քիչ անց նա քեզ պիտի արհամարհի, նա քեզ բանի տեղ չի դնելու, և [այն ժամանակ] պիտի համոզվես, որ ստրուկ ես և ոչ բարեկամ»<sup>201</sup>: Գուցե Տարոնը Բյուզանդիային հանձնած իշխաններին բաժին հասած հենց նման ճակատագիրն էր պատճառը, որ նրանք կարծ ժամանակ անց միացան Վարդաս Ակլեռոսի ապստամբությանը (976-979 թթ.) ընդդեմ Վասիլ Բ կայսեր (976-1025 թթ.)<sup>202</sup>: Ն. Ալրոնցը իրավացիորեն կարծում է, որ նրանք միացել էին ապստամբությանը՝ Տարոնը ետ ստանալու ակնկալիքով<sup>203</sup>: Կարելի է համոզված պնդել, որ, փոխանակումից 10 տարի չանցած, Կեկավմենոսի մռայլ կանխագուշակությունն իրականություն էր դարձել:

Փաստորեն, Տարոնի կորուստը տեղի է ունեցել Բյուզանդիայի ճնշման պայմաններում, երբ բյուզանդացիների և մահմեդականների հակամարտությունը Տարոնից հարավ ընկած շրջաններում այնքան էր ահազնացել, որ, հավանաբար նաև այդ պատճառով, նրա տերերը համաձայնեցին տարածքային փոխանակման. նրանք Տարոնը տիրոջ իրավունքով հանձնեցին Բյուզանդիային՝ փոխարենը ստանալով կալվածքներ կայսրությունում: Աշուտ Գ-ն չհամակերպվեց դրա հետ, ինչի հետևանքով սրվեցին հայ-բյուզանդական հարաբերությունները: Սա-

<sup>201</sup> Նույն տեղում, էջ XXIII: Տե՛ս նաև թարգմանության հեղինակ Հ. Բարթիկյանի հուշը կարևոր մեկնաբանությունը:

<sup>202</sup> Տե՛ս Ասողիկ, էջ 763:

<sup>203</sup> Տե՛ս Ալրոնց Ն., նշվ. աշխ., էջ 293:

կայն Հովհաննես Չմշկիկ կայսեր կառավարման շրջանում հայոց թագավորության և Բյուզանդիայի հարաբերությունները կարգավորվեցին, ավելին՝ բյուզանդական բանակին հայոց թագավորի ցուցաբերած օգնության շնորհիվ նույնիսկ ջերմացան: Բայց Տարոնն անդառնալիորեն կորսված էր հայոց թագավորության համար:

### 2.3. Կարսի թագավորության ստեղծումը

Հայոց թագավոր Աշոտ Գ Ողորմածի օրոք Կարսում առանձին թագավորության հանդես գալու հարցը, լինելով Բագրատունյաց թագավորության պատմության համար հույժ հենքային, դարձել է մի շարք ուսումնասիրողների քննության թեմա: Չնայած դրան, այն շարունակում է մնալ Բագրատունյաց թագավորության պատմության՝ հավելյալ ուսումնասիրության կարու հիմնահարցերից մեկը: Առաջին հերթին, խիստ թերի է կատարվել այդ թագավորության հիմնադրման ժամանակագրության և պատմական հանգամանքների քննությունը, որի հետևանքով Բագրատունյաց միասնական թագավորության փաստացի տրոհման իրողությունն ըստ էության հիմնավոր լուսաբանում և բացատրություն չի ստացել:

Ի սկզբանե նշենք, որ բոլոր ուսումնասիրողները, Կարսի թագավորության ստեղծման հետ կապված դեպքերի զարգացման իրենց տարբերակը ներկայացնելիս, հղել են Ասողիկի «Եւ զկնի Աբասայ թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ եւ Շահանշահ կոչիր՝ ամս ԻԵ: Եւ Մուշեղ եղբայր նորա առ նովաւ թագաւորեաց ի Կարս» տեղեկությանը<sup>204</sup>, որին ից բիւեցնելով դեպքերի զարգացման հնարավոր տարբերակներ:

Դեռևս XX դ. սկզբին Ստ. Պալասանյանը Կարսի թագավորության ստեղծումը անհայտ տրամաբանությամբ թվագրել է 968-ով: Ըստ նրա՝ «...Մուշեղ մի քանի կուսակիցներ ժողովեց իւր շուրջը և նոցա օգնութեամբ Կանանդ գաւառում առանձին թագաւորութիւն հիմնեց Կարս

<sup>204</sup> Ասողիկ, էջ 755:

մայրաքաղաքով (968 թ.): Աշոտ ներքին կրիների պատճառ չտալու համար՝ ոչ միայն ձանաչեց այս նոր թագաւորութիւնը, այլ և լաւ յարաբերութիւններ պահպանեց իւր եղբօր հետ»<sup>205</sup>: Կուտակիցների օգնությամբ Վանանդում Կարս մայրաքաղաքով թագավորության հիմնումը 968 թ. ամբողջությամբ հեղինակի մտահանգումն է, ըստ որում՝ առանց որևէ աղբյուրային հիմնավորման: Հետազայում, ամենայն հավանականությամբ, հենց Ս. Պալասանանի տեսակետը հիմք ընդունելով, Հ. Աճառյանը Կարսի թագավորության հիմնադրումը թվագրել է 968-ով<sup>206</sup>:

Կարսի թագավորության ստեղծման վերաբերյալ խիստ հակասական է Լեոյի տեսակետը: Ըստ նրա, եթք Աշոտ Գ-ն տեղափոխվեց Անի, նրա «եղբայր Մուշեղը մնաց Կարսում և, օգտվելով այն հանգամանքից, որ իր հայրն այնտեղ թագավորական զահ էր հաստատել, իրեն հայտարարեց նրա ժառանգ, և այսպիսով թագավոր նստեց Աշոտի կողքին, որը չդիմադրեց այդ բանին, քանի որ Մուշեղը նրան կատարյալ հպատակություն խոստացավ»<sup>207</sup>: Մի կողմ թողնելով այն, որ Լեոյի կարծիքը որևէ կերպ աղբյուրային տեղեկություններով չի հիմնավորվում, նշենք, որ այն անտրամաբանական է ու շինծու: Ստացվում է, որ «զահ հաստատել»՝ կնշանակե տարածքը կամ քաղաքը օժտել զահով, ուստի այնտեղ հաստատված ցանկացած իշխող կարող է հավակնել այդ զահին, ինչպես արել է Մուշեղը: Մյուս կողմից, չնայած նա իրեն հոչակել է իր հոր՝ Արքա Բագրատունու ժառանգ, բայց կատարյալ հպատակություն է հայտնել վերջինիս օրինական ժառանգ Աշոտ Գ-ին, որը չի դիմադրել եղբօր թագավոր դատնալուն, մինչդեռ, եթե վերջինս իսկապես իրեն հոչակեր հոր՝ հայոց արքա Արքասի ժառանգ, Աշոտ Գ-ն ինքնաբերաբար կդիմադրեր դրան, քանի որ այդպիսով վիճարկվում էր նրա առաջնության իրավունքը:

<sup>205</sup> Պալասանեան Ս., Պատմութիւն Հայոց, սկզբից մինչեւ մեր օրերը, Թիֆլիս, տպարան Տ. Մուտինեանցի, 1902, էջ 295:

<sup>206</sup> Տե՛ս Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ., Եր., Պետական համալսարանի հրատ., 1946, էջ 462-463:

<sup>207</sup> Լեռ, նշվ. աշխ., էջ 578:

Ավելի ուշ, Աշոտ Գ-ի եղբայր Մուշեղի՝ Կարսում թագավոր հոչակվելու ժամանակի վերաբերյալ Ս. Երեմյանը շրջանառել է 960-ական թվականների սկզբին (ավելի որոշակի՝ 963 թ.) այդ իրադարձության տեղի ունենալը հիմնավորող տեսակետը: Հստ նրա, «Երբ Աշոտ Գ-ը 961 թ. մայրաքաղաքը փոխադրեց Անի, Կարսի կառավարիչ նշանակվեց նրա եղբայր Մուշեղ Բագրատունին, որը 963 թ. իրեն հոչակեց Կարսի ու նրա գավառի թագավոր՝ «թագավոր Կարուց»: Աշոտ Գ-ն հարկադրված էր ճանաչել նրա թագավորությունը, բայց որպես ենթակա թագավորություն...»<sup>208</sup>: Կարսի թագավորության՝ 963 թ. հիմնադրվելու տեսակետին համերաշխվել է նաև Վ. Ցուղբաշյանը<sup>209</sup>:

Հ. Հարությունյանը կարծում էր, որ Մուշեղը Կարսի կառավարիչ է նշանակվել Աշոտ Գ-ի կողմից այն բանից հետո, եթե վերջինս տեղափոխվել է Անի, ապա 962 թ. Բյուզանդիայի դրդմամբ ապստամբել եղբոր դեմ՝ իրեն հոչակելով թագավոր: Ներքին խոռոչություններից խուսափելու համար Աշոտ Գ-ն ճանաչել է նրա թագավորությունը՝ պայմանով, որ նա ենթարկվի իրեն, և այդ պայմանը Մուշեղը կատարել է մինչև 984 թվականը<sup>210</sup>: Նման մի տեսակետ էլ հայտնել է Թ. Հակոբյանը<sup>211</sup>:

Ո. Մաթևոսյանը Կարսի թագավորության ստեղծումը թվագրում էր 961 թ., եթե Անի տեղափոխվող Աշոտ Գ-ն եղբորը նշանակել է Կարսի կառավարիչ և ճանաչել որպես Կարսի թագավոր<sup>212</sup>: Հետազոտողը կարծում էր, որ Մուշեղին թագավոր է կարգել անձամբ Աշոտ Գ-ն՝ ել-

<sup>208</sup> Երեմյան Ս., Կարսը IX-XI դարերում, «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, Եր., 1976, էջ 95: Նշվում է Կարսի թագավորության հոչակման 963 թվականը: Նույն տես և Երեմյան Ս., Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, № 3, էջ 7:

<sup>209</sup> Տես և Յօհաննի Կ., Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, «Наука», 1988, с. 72, 75.

<sup>210</sup> Տես և Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 97:

<sup>211</sup> Տես և Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 22:

<sup>212</sup> Տես և Մաթևոսյան Ո., Վանանդը Բագրատունյաց թագավորական ոստանի մարզ (X դ. առաջին կես), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, № 4, էջ 81:

նելով այն իրողությունից, որ հայոց թագավորության արևմտյան սահմաններին ահազնացել էր Բյուզանդիայից եկող վտանգը, ինչը սկիզբ էր առել այն բանից հետո, եթե 949 թ. բյուզանդական գործը գրավել էր Կարինը, Հավնունիքն ու Բասենը և ստեղծել բանակաթեմ<sup>213</sup>: Նա համարում էր, որ փաստորեն երկու եղբայրները բաժանել են հայրական ժառանգությունը, որով Վանանդ-Երասխաձորը անցել է Մուշեղին, և այդ բաժանումն ամրագրվել է վերջինիս՝ թագավոր հոչակվելով<sup>214</sup>:

Իր մեկ այլ հետազոտության մեջ Ռ. Մաթևոսյանը կարծիք էր հայտնում, որ Աշոտ Գ-ն Մուշեղին կարգել կամ «նշանակել» է թագավոր: Հեղինակն այստեղ հայկական մանր ժամանակագրություններից մեկում հանդիպող «...Աշոտ ... զեղբայր իւր՝ զՄուշեղ Կարուց կացոյց թագաւոր»<sup>215</sup> հիշատակության «կացոյց» բառը մեկնաբանել է որպես «նշանակել»<sup>216</sup>, թեև իր իսկ կողմից հղված «Նոր բառզիրք հայկագեան լեզուի» բառարանում բերված են այդ բառի «դնել», «հաստատել», «կարգել» նշանակությունները<sup>217</sup>, այսինքն՝ խոսքը կարող է վերաբերվել ոչ թե նշանակելուն, այլ թագավոր դնելուն, հաստատելուն կամ կարգելուն, ինչի մասին կխոսենք ստորև:

Հույս շինծու է «Հայոց պատմության» ակադեմիական նոր հրատարակության երկրորդ հատորի երկրորդ գրքում Կարսի թագավորության ստեղծման նկարագրությունը, որը էապես տարբերվում է «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական նախորդ հրատարակության երրորդ հատորում Ս. Երեմյանի կողմից առաջ քաշված վերոհիշյալ կարծիքից: Համապատասխան հատվածի հեղինակ Ա. Ութուցյանը գրում է, թե իբր Աշոտ Գ-ն, մայրաքաղաքը Անի տեղափոխելուց հետո, նույն 961 թ. Վանանդը առանձնացրել է որպես փոխարքայություն՝ կառավարիչ (այսինքն՝ փոխարքա) նշանակելով եղբորը՝ Մու-

<sup>213</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>214</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 82:

<sup>215</sup> «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1956, էջ 501:

<sup>216</sup> Տե՛ս Սահմանական Ռ., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Եր., Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 1990, էջ 152:

<sup>217</sup> Տե՛ս «Նոր բառզիրք հայկագեան լեզուի», հ. Ա (Ա-Կ), էջ 1078:

շեղին, որը պետք է իրականացներ երկրի՝ «Բյուզանդիային սահմանամերձ ռազմավարական գոտիների պաշտպանության հոված կարևոր գործը»: Հեղինակը Մուշեղի ստացած պաշտոնը համարում է արքունի ծառայություն և, հետևելով Ռ. Մաթևոսյանին<sup>218</sup>, այդ պաշտոնի գործառույթները համեմատում Արշակունյաց շրջանի բղեշիսի գործառույթների հետ: Ի վերջո Ա. Ութուջանը արձանագրում է. «Սակայն Մուշեղը դրսորում է առավել ինքնուրույն, կենտրոնից անջատվելու և ինքնուրույն իշխելու միտումներ, որն Ասողիկին իրավունք է տվել նրան անվանելու թագավոր», թեև «այս դեպքում «թագավոր» հորջորշումը սուկ պատիվ էր, որ տրվում էր հատուկ ծառայության դիմաց (ըստ հեղինակի՝ տրվել է 963 թ. - Ա. Ե.)»<sup>219</sup>: Այսինքն, ստացվում է, որ 961 թ. ապագա Կարսի թագավորության ընդգրկած տարածքը առանձնացվել է որպես փոխարքայություն, որի կառավարիչը պետք է իրականացներ Բյուզանդիային հարեան տարածքների պաշտպանությունը: Այդ գործառույթն անհիմն կերպով համեմատվում է Արշակունյաց դարաշրջանի բղեշիսի գործառույթի հետ, իսկ այնուհետև նույնքան անհիմն կերպով «թագավոր» տիտղոսը համարվում՝ «հատուկ ծառայության դիմաց տրված պատիվ»: Անիրական է նաև հեղինակի այն վարկածը, թե Մուշեղին թագավոր կոչելու համար Ասողիկին «իրավունք է տվել» այն, որ Կարսի տիրակալը կենտրոնախույս ձգտումներ հանդես բերելով՝ փորձել է իշխել ինքնուրույնաբար, քանի որ նման գործելածքը չի կարող թագավոր կոչելու հիմք հանդիսանալ (իրավունք տալ): Հայտնի է, որ թագավոր լինել, ասել է՝ նախևառաջ թագաղրված լինել:

Փաստորեն, Ասողիկի «Արասից հետո 25 տարի թագավորեց նրա որդի Աշոտը, որ Շահանշահ էր կոչվում: Եվ նրա եղբայր Մուշեղը նրա օրոք թագավորեց Կարսում (գրաբարից թարգմանությունը մերն է - Ա.

<sup>218</sup> Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 159:

<sup>219</sup> Տե՛ս **Ութուջան Ա.**, Կարսի (Վանանդի) թագավորություն, «Հայոց պատմություն», հատոր II, միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կես), գիրք Երկրորդ (IX դարի կես-XVII դարի առաջին կես), Եր., «Զանգակ» հրատ., 2014, էջ 121:

Ե.)» տեղեկությունից բխեցվել են նման իրարամերժ և հակասական տեսակետներ: Մինչդեռ այնտեղ չկա ոչ մի ակնարկ ապստամբության և Աշոտ Գ-ի՝ եղբոր թագավորությունը ստիպված ճանաչելու մասին: Ավելին, այս տեղեկությունից հնարավոր չէ նաև բխեցնել այդ իրադարձության թվականը: Վերջինս, անկասկած, միայն տրամաբանորեն է տեղադրվել Աշոտ Գ-ի՝ Անի տեղափոխվելուց հետո, քանի որ մինչ այդ Կարսը Աշոտ Գ-ի նստոցն էր:

Նշված բոլոր հետազոտողներն էլ անուշադրության են մատնել (կամ պարզապես անտեղյակ են եղել) հայկական և վրացական աղբյուրներում պահպանված կարևոր տեղեկությունները, որոնք մի կողմից ամբողջությամբ փլուզում են Կարսի թագավորությունը 960-ական թթ. սկզբներին ստեղծված լինելու տեսակետը, իսկ մյուս կողմից՝ այդ թագավորության հիմնադրումը Աշոտ Գ-ի՝ Անի տեղափոխվելու հետ կապելու վարկածը:

Մասնավորապես, հայկական ձեռագրերից մեկում («Պատմություն Ս. Կենսաբերին և սոսկալի Ս. Նշանին, թէ որպես բերաւ յաշխարհն Արշարունեաց ի Կամրջաձորոյ») առկա է հետևյալ տեղեկությունը. «Եւ յետ Սմպատայ<sup>220</sup> Սուշեղ հօրեղբայր նորա թագաւորեալ ինն ամ, և սա մեռանի. և յետ սորա Արաս թագաւորեալ ամս վեց...»<sup>221</sup>: Պարզվում է, որ Սուշեղը թագավորել է միայն 9 տարի, իսկ այն, որ Սուշեղից հետո Արասը թագավորել է Կարսում 6 տարի, հայտնի է նաև Աստղիկից<sup>222</sup>: Բացի այդ, Փարսադան Գորգիջանիձեի «Վրաստանի պատմություն» երկասիրության մեջ նշված է, որ Սուշեղը թագավո-

<sup>220</sup> «Եւ յետ Սմպատայ Սուշեղ հօրեղբայր նորա թագաւորեալ ինն ամ...» տեղեկության մեջ «յետ Սմպատայ» արտահայտությունից հետո հիշատակվում են ոչ թե Գագիկ Ա-ն (990-1018 թթ.) և հաջորդները, այլ Կարսի թագավորները՝ Սուշեղը, Արասը և մանուկ Գագիկը, որը հուշում է, որ պատմիչ Բագրատունյաց ավագ ձյուրի նկարագրությունից «յետ Սմպատայ»-ով անցում է կատարել Կարսի ձյուրի գահակալներին:

<sup>221</sup> Տե՛ս «Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց», տեղագրեաց Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան, Վենետիկ-Ս. Ղազար, 1890, էջ 548: Տե՛ս նաև Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանը ձեռագրաց, հ. Ա., էջ 175:

<sup>222</sup> Տե՛ս Աստղիկ, էջ 766:

թել է 10 տարի<sup>223</sup>: Վրացի հեղինակը Բազրատունի արքաների թագավորության տարիների վերաբերյալ հաղորդում է ծշգրիտ և հայկական աղբյուրներին համապատասխան տեղեկություններ՝ Աշոտ Գ՝ 25 տարի<sup>224</sup>, Սմբատ Բ՝ 13 տարի<sup>225</sup> և այլն, ուստի նրա տեղեկության հենց այս հատվածը անուշադրության մատնելու կամ կասկածի ենթարկելու որևէ հիմք չկա:

Փաստորեն, հայկական և վրացական երկու աղբյուրներ Մուշեղին վերագրում են 9-10 տարվա գահակալություն: Իսկ ինչ վերաբերում է այն իրողությանը, որ հայկական աղբյուրում Մուշեղի թագավորության տևողությունը նշվում է 9, իսկ վրաց հեղինակի կողմից՝ 10 տարի, ապա դա կարելի է վերագրել նշված աղբյուրներում հաշվարկը կա՝ մ ըստ տարիների և կա՝ մ տարեշրջաններով հաշվարկելու իրողությանը: Նման դեպքերը հայտնի են: Օրինակ, Թովմա Արծրունին և Ասողիկը երկուսն էլ ընդունում են Աշոտ Ա արքայի գահակալությունը հայոց 336 (ապրիլ, 887 թ.-ապրիլ, 888 թ.)-339 (ապրիլ, 890 թ.-ապրիլ, 891 թ.) թվականների ընթացքում<sup>226</sup>, սակայն նրանցից առաջինը Բագ-

<sup>223</sup> Տե՛ս **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն-ծանոթություններով յեվ հավելվածներով, հ. Բ. (ԺԳ-ԺԸ դար), Եր., հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, 1936, էջ 97:

<sup>224</sup> Հմմտ. **Ասողիկ**, էջ 755. «Եւ զկնի Արասայ թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ եւ Շահանշահ կոչիր ամս ԻԵ (25 - Ա. Ե.):» Արասի մահը պատմիչը դնում է հայոց 402 թվականին (ապրիլ, 953 թ.-ապրիլ, 954 թ. - Ա. Ե.): Տե՛ս նույն տեղում: Հետևաբար այդ նույն թվականին էլ ընկնում է Աշոտ Գ-ի զահ բարձրանալը, որից մինչև նրա մահը՝ հայոց 426 թվականը (մարտ, 977 թ.-մարտ, 978 թ. - Ա. Ե.), ըստ տարիների կազմում է 25 տարի:

<sup>225</sup> Հմմտ. **Ասողիկ**, էջ 760. «...մեռաւ թագաւորն Հայոց՝ արինեալն Աշոտ՝ ի ՆԻԶ (426 թ.՝ մարտ, 977 թ.-մարտ, 978 թ. թ. - Ա. Ե.) թուականին, եւ ի նոյն աւուր թագաւորեաց Սմբատ որդի նորա ամս ԺԳ (13 - Ա. Ե.):» Այնուհետև Ասողիկը Սմբատ Բ-ի մահը դնում է հայոց 438 թվականին (մարտ, 989 թ.-մարտ, 990 թ.): Տե՛ս նույն տեղում, էջ 808: Հայոց 426 և 438 թվականների միջակայքը ըստ տարիների, կազմում է 13 տարի:

<sup>226</sup> Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց (այսուհետև՝ Թովմա Արծրունի և Անանուն), «Մատենագիրը հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, «Պատմագրութիւն», Անթիլիաս-Լիբրանն, 2010, էջ 236-238 [ըստ պատմիչի՝

բատունի առաջին արքային վերագրում է՝ 4<sup>227</sup>, իսկ մյուսը՝ 5 տարվա գահակալություն<sup>228</sup>: Ակնհայտ է, որ Թովմա Արծրունին Աշոտ Ա-ի գահակալությունը հաշվարկում է տարեշրջաններով (887-888 թթ.՝ 1 լիարժեք տարի, 888-889 թթ.՝ 1 լիարժեք տարի, 889-890 թթ.՝ 1 լիարժեք տարի, 890-891 թթ.՝ 1 լիարժեք տարի, ընդամենը՝ 4 լիարժեք տարի), իսկ Ասողիկը՝ ըստ տարիների (887 թ.՝ առաջին տարի, 888 թ.՝ երկրորդ տարի, 889 թ.՝ երրորդ տարի, 890 թ.՝ չորրորդ տարի, 891 թ.՝ հինգերրորդ տարի):

Ասողիկի հավաստի տեղեկությամբ՝ Մուշեղը վախճանվել է հայոց 435 թվականին (մարտ, 984 թ.-մարտ, 985 թ.)<sup>229</sup>: Ուստի, եթե նրա գահակալությունը հաշվենք 962 կամ 963 թվականից, ինչպես կարծում են վերոհիշյալ հեղինակները, կստացվի, որ նա գահակալել է 22-23 տարի: Ակնհայտ է, որ Մուշեղի գահակալության տարիների քանակի հիշատակությունները աղբյուրներում, հաշվի առնելով այն, որ հստակ է նրա մահվան թվականը, նրա գահակալության սկիզբը 960-ական թթ. թվագրման հնարավորությունը ընդհանրապես ի չփ են դարձնում: Նրա մահվան 984 թվականից 9 կամ 10 տարի հետ գնալու դեպքում ստացվում է գահակալության սկզբնավորման 974 կամ 975 թվականը, որը մտորումների տեղիք է տալիս, քանի որ հենց այդ ժամանակ հայոց թագավորությունը բախվում էր բուռն և վտանգներով լի իրադարձությունների, որոնք ել կարող էին հիմքեր ստեղծել՝ Կարսը որպես նոր թագավորության կենտրոն հանդես գալու համար: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Բյուզանդիայի կայսր Հովհաննես Չմշկիկի (969-976 թթ.) 974 թ. արշավանքի հետևանքով առաջ եկած ծանր վիճակին, որը կարող էր հնարավորություն տալ հայ մի շարք ավատատերերի՝ թագավորական նկրտումներ հանդես բերելու հա-

հայոց 339 թ. (890/891 թ.) դրությամբ Աշոտ Ա-ն գահակալել էր 4 տարի, այսինքն՝ գահին էր բազմել հայոց 336 թ. (887/888 թ.); **Ասողիկ**, էջ 740-741 [ըստ պատմիչ՝ Աշոտ Ա-ն գահակալել է հայոց 336 թվականից (887/888 թ.) սկսած 5 տարի, իսկ նրան հաջորդած Սմբատ Ա-ն՝ հայոց 340 թվականից (891/892 թ.) սկսած]:

<sup>227</sup> Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 238:

<sup>228</sup> Տե՛ս Ասողիկ, էջ 741:

<sup>229</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 766:

մար: Լիովին հավանական է Հ. Զարությունյանի տեսակետն այն մասին, որ Սուշեղն իրեն թագավոր է հոչակել Բյուզանդիայի դրդմամբ:

Ուստի՝ կարելի է նշել, որ Կարսի թագավորության հիմնադրումը տեղի է ունեցել ամենայն հավանականությամբ 975 թ., որից մինչև Սուշեղի մահվան 984 թվականը ըստ տարիների հաջորդականության հաշվարկելով (975 թվականը՝ առաջին տարի, 976 թվականը՝ երկրորդ տարի և այդպես շարունակ՝) կատացվի 10 տարի, իսկ տարեշրջաններով հաշվարկելու պարագայում (975-976 թթ.) մեկ լիարժեք տարի, 976-977 թթ.՝ երկու լիարժեք տարի և այլն՝ ինը տարի, որքան էլ ըստ նշված աղյուրների՝ իշխել է Սուշեղը:

Ինչ վերաբերում է Կարսի թագավորության հանդես գալու հանգամանքներին, ապա, կապված Ասողիկի՝ Սուշեղի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքից, երբ պատմիչը նրա վարմունքը անուղղակիորեն դատապարտում է՝ նրան հիշատակելով որպես մարմնական հաճույքներին տրված անձի («Բայց Սուշեղ ոչ ունէր զերկիւն Աստուծոյ ի մտի, վասն զի բազմաբոյց բողիւք կեայր նա»<sup>230</sup>), իսկ այնուհետև Սմբատ Բ-ի (978-990 թթ.) և Սուշեղի թշնամանքից<sup>231</sup>, կարելի է կարծել, որ այն, առնվազն սկզբում, համաձայնեցված չէր Աշոտ Գ-ի հետ: Հավանորեն, Սուշեղը, որի նստոցն էր Կարսը, օգտվելով Հովհաննես Զմշկիկի արշավանքների ստեղծած վտանգից, հանդես էր եկել թագավորական նկրտումներով: Այս առումով հետաքրքրական է հայկական մանր ժամանակագրություններից մեկում (Վերնազրված՝ «Թագաւորք Վերջինք Բագրատունիք») առկա հետևյալ հիշատակությունը. «...Աշոտ ... զեղբայր իւր՝ զՍուշեղ Կարուց կացոյց թագաւոր»<sup>232</sup>, որը ցույց է տալիս, որ չնայած Սուշեղի՝ ամենայն հավանականությամբ թագավոր ինքնահոչակվելու ցավալի իրողությանը, Աշոտ Գ-ն ստիպված է եղել հաշվի նստելու կատարված իրողության հետ՝ նրան կացուցանելով կամ հաստատելով որպես Կարսի թագավոր: Ընդունելի է Լեռյի վերոհիշյալ այն տեսակետը, որ Աշոտ Գ-ն սկզբում դեմ լինելով Կարսի թա-

<sup>230</sup> Ասողիկ, էջ 761:

<sup>231</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 760:

<sup>232</sup> «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, էջ 501:

գավորության ստեղծմանը՝ հետազոտ եղբոր կատարյալ հնագանդության դիմաց չառարկեց նրա զահակալությանը: Դրա վկայությունն է այն, որ Աշոտ Գ-ի օրոք Անիի և Կարսի տիրակալների միջև որևէ գժողություն հիշատակված չէ: Ավելին, Կարսի թագավորության ընդգրկած տարածքները՝ Վանանդից մինչև Ճակատը և Կարին, պետք է ճանաչված լինեին որպես Մուշեղ թագավորի տիրույթ Աշոտ Գ-ի կողմից, իսկ դա կարող էր տեղի ունեցած լինել միայն ավագ եղբոր համաձայնությամբ: Ուստի հայկական մանր ժամանակագրության վերոհիշյալ տեղեկությունն այն մասին, թե «...Աշոտ ... զեղբայր իր՝ զՄուշեղ Կարուց կացոյց թագաւոր», կարելի է թարգմանել որպես «Աշոտն իր եղբայր Մուշեղին Կարսի թագավոր հաստատեց»:

Ցայսօր Կարսի թագավորության ընդգրկած տարածքների առումով ընդունված է Ս. Երեմյանի տեսակետը, որն իրականում խիստ խնդրահարույց է: Հատ ուսումնասիրողի՝ «Կարսի թագավորության տարածքը գրավում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի արևմտյան գավառները՝ Երասխ (Արաքս) գետի վերին հոսանքը, ներառյալ Ախուրյան գետի վերին ու միջին հոսանքը, Պաղակացիս (այժմ Չըլդըր) լճի գոգահովտի հետ, ինչպես և վերջինիս արևմուտքից հարող Փոս գավառակը՝ մինչև Կուր գետը: Թագավորության տարածքը՝ Կարսի սարահարթը՝ իր ընդգրկած հին հայկական ութ գավառներով բարձրադիր էր...»<sup>233</sup>: Այս շարադրանքը առաջացնում է բազմաթիվ հարցեր, իսկ զիշավորը՝ այն, թե Այրարատի ո՞ր 8 գավառների մասին է խոսքը:

Ս. Երեմյանը սկզբում «հին հայկական ութ գավառներ»-ի ներքո նկատի ուներ Վանանդը կամ Կարսը, Զարիշատը՝ Փոս գավառակով, Կարմիր Փորակը, Մժնկերտը (Արելյանք), Հավնունիքը, Կեչորը, Զարեհավանը, Կաղզվանը (Գաբելյանք)<sup>234</sup>, այսինքն՝ Այրարատի՝ «Աշխարհացոյց»-ում հիշատակված Վանանդ, Աբելյանք, Գաբելյանք, Հավնունիք, Արշարունիք գավառների գրեթե ողջ տարածքը և Գուգարքի Արտահան գավառի մի հատվածը (Փոս գավառակ): Նկատենք,

<sup>233</sup> Երեմյան Ս., Կարսի IX-XI դարերում, էջ 98:

<sup>234</sup>Տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 4:

որ հետազոտողն այս ցանկից դուրս է թողել Ճակատքի առնվազն արևմտյան հատվածը՝ Շատիկ բերդով, որը պատկանում էր Մուշեղին<sup>235</sup>: Այնուհետև Ս. Երեմյանը մանրամասնել է իր տեսակետը: Հստ նրա՝ այդ 8 գավառների թվում էին՝ Վանանդը, որը բաղկացած էր երեք հատվածներից (բուն Վանանդ կամ Կարուց երկիր՝ Կարս կենտրոնով, Կարսիր փորակ՝ Ախուլյան գետի ակունքների շրջանում և Զարիշատ, որն ընդգրկում էր Պաղակացիս լճի գոգահովիտը), այնուհետև՝ Մժնկերս (Աբեղյանք), Հավնունիքը՝ Ավնիկ բերդով, Աղորի գավառը՝ Հավճիս բերդով, Կաղզվան և Արշարունիք գավառի արևմտյան կեսը կազմող Կեշրոր գավառները, Զարեհավան գավառակը, ինչպես նաև Շատիկ ամրոցի շրջակայքը<sup>236</sup>: Այստեղ, փաստորեն, կան հավելումներ և փոփոխություններ: Հավելվել են Աղորի գավառը և Շատիկ ամրոցը: Ստացվում է, որ, ի տարբերություն նախորդ տեսակետի, 8 գավառների ցանկում Վանանդը, Զարիշատը և Կարսիր փորակը հաշվարկված են որպես մեկ ամբողջություն, որով, հաշվի առնելով Աղորիի և Շատիկ ամրոցն ընդգրկող Ճակատքի հավելումը, դարձալ ստացվում է 8 գավառ, միայն, փաստորեն, փոքր-ինչ այլ ընդգրկումով: Սակայն, եթե Շատիկ ամրոցի՝ Կարսիր թագավորության մեջ գտնվելու պարագան հիմնավորվում է աղբյուրով, ապա Աղորիի դեպքում նման հիմնավորումներ չկան: Վերջինս տեղադրվում է Տուրութերանի Մարդարի և Դասնավորք գավառների և Այրարատի արևմտյան գավառների միջև՝ Տուրութերանում՝ ընդգրկելով Երասխ գետի առափնյա լեռնային շրջանները<sup>237</sup>: Աղորիի վերաբերյալ Ս. Երեմյանը հղում է Արիստակես Լաստիվեցու տեղեկությանն այն մասին, որ Բյուզանդիայի կայսր Վասիլ Բ-ն (976-1025 թթ.) 1001 թ. անցել է Աղորի գավառի Հավաճիս բերդի կողքով<sup>238</sup>, որը, ի դեպ, նախքան այդ պատկանել էր Տայ-

<sup>235</sup> Տե՛ս Ասորիկ, էջ 760:

<sup>236</sup> Երեմյան Ս., Կարսիր IX-XI դարերում, էջ 98:

<sup>237</sup> Տե՛ս Դասինիս Է., Վասիլ Բ-ի 1000 թ. արևելյան արշավանքի նպատակը և Երթուղին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, № 10, էջ 68-71:

<sup>238</sup> Տե՛ս «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ», աշխատասիրությամբ՝ Վ. Յուզբաշյանի, Եր., 1963, էջ 23:

թի Դավիթ կուրապաղատին (961-1001 թթ.)<sup>239</sup>: Հասկանալի է, որ այդ տեղեկությունը չի հիմնավորում Աղորի պատկանելիությունը Կարսի թագավորությանը: Պետք է նշել նաև, որ Ս. Երեմյանը կիրառում է զավառանուններ, որոնք խնդրու առարկա ժամանակաշրջանում, մեղմ ասած, այնքան էլ կիրառական չէին: Ավելին, դրանք ոչ բոլորն էին «Մեծ Հայքի Այրարատ նահանգի» «ավանդական» գավառներ, այլ ֆեռադական մասնատվածության շրջանում Այրարատի գավառների ներքին տրոհումների հետևանք էին : Նման նկարագրությունից հետո էլ Ս. Երեմյանը ամրագրում է, թե «Իր ութ գավառների սահմաններում [այստեղ նա հղում է կատարում իր իսկ հեղինակած «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատության (1963 թ.) այն էջերը, որտեղ ներկայացված են Այրարատի «աշխարհացոյց»-յան շրջանի և հետագայում ձևավորված վերոհիշյալ գավառները - Ա.Ե.] Կարսի թագավորությունն ընդգրկում էր շուրջ 10 հազար քառ. կմ տարածություն...»<sup>240</sup>, ինչը, փաստորեն, խիստ թերի կարծիք է:

Ա. Ութուցյանը փորձ է կատարել ներկայացնելու Կարսի թագավորության կազմն ու վարչական բաժանումը: Եվ այսպես, նրա տեսակետի (որը կրկնում է Ս. Երեմյանի կարծիքը) համաձայն՝ Մեծ Հայքի Այրարատ նահանգի արևմտյան 8 գավառներն էին՝ Վանանդը, Մենկերտը (հավանաբար, Մծնկերտ) կամ Աբելյանքը, Կաղզվանը (Գարեղյանք), Զարեհավանը, Կեշրորը, Հավնունիքը, Զարիշատը և Կարմիր Փորակը<sup>241</sup>: Խորացնելով իր դիտարկումները՝ հետազոտողը կարծիք է հայտնում, թե այդ գավառաբաժանումը նաև վարչական բաժանում էր, որը, ինչպես և թագավորության տարածքը, մնացել է անփոփոխ վերջինիս գոյության ամբողջ ընթացքում<sup>242</sup>: Սակայն նշված գավառաբաժանումը նաև որպես վարչական բաժանում ներկայացնելու համար որևէ աղբյուրային հիմք չկա, հետևաբար հնարավոր չէ պնդել նաև, թե

<sup>239</sup> Տե՛ս Ասողիկ, էջ 764:

<sup>240</sup> Երեմյան Ս., Կարսի IX-XI դարերում, էջ 99:

<sup>241</sup> Տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կես), գիրք Երկրորդ (IX դարի կես-XVII դարի առաջին կես), էջ 120:

<sup>242</sup> Տե՛ս նույն տեղում:

այն թագավորության գոյության ամբողջ ընթացքում մնացել է անփոփոխ:

Պետք է նշել, որ Ս. Երեմյանի կողմից Կարսի թագավորությանը «հատկացվող» տարածքի սահմանները, չնայած վերոհիշյալ թերությանը, ընդհանուր առմամբ համապատասխանում են իրականությանը: Խնդիրն այն է, որ Աշոտ Գ-ն ելքորն էր հանձնել Բագրատունյաց տոհմական և արքունի տիրույթների արևմտյան հատվածը՝ բացառությամբ Բագրեանդ գավառի: Բոլոր այդ գավառները նախկինում, մասնավորապես, Արաս թագավորի օրոք, մաս էին կազմում Բագրատունիների արքունի տիրույթների<sup>243</sup>: Դրա օգտին է նաև Ստեփանոս Օրբելյանի՝ Աշոտ Երկար (914-929 թթ.) և Արաս (929-953 թթ.) թագավորների գահակալության շրջանին վերաբերվող հիշատակությունն այն մասին, որ «...Բագրատունիքն իշխեն միայն Շիրակայ և Այրարատու մինչի Գեղամ (իմա՝ Գեղամա ծով - Ս. Ե.) և մինչ ի յՈւխտիսն (իմա՝ Ուղթիքը կամ Ուղթիսը Տայքում - Ս. Ե.) և մինչ ի Կարին և մինչ ի Վասպուրականի սահմանն և մինչ ի Չորոյգետն և մինչ ի Գարդման. և Մինիք կտրեալ էր ի նոցանե»<sup>244</sup>, այսինքն՝ մասնավորաբար Շիրակի Բագրատունիների տիրույթներն ընդգրկում էին ողջ արևմտյան Այրարատը՝ հյուսիս-արևմուտքում տարածվելով մինչև Ուղթիս-Օլթի, իսկ արևմուտքում՝ մինչև Կարին: Ինչպես տեսանք, Ռ. Մաթևոսյանը կարծում է, որ 949 թ. բյուզանդական զորքը գրավել էր Կարինը, Հավնունիքն ու Բասենը և վերջիններիս ընդգրկմամբ ստեղծել բանակաթեմ: Սակայն այդ բանակաթեմի մեջ Բասենի և Հավնունիքի ընդգրկված լի-

<sup>243</sup> Տե՛ս՝ **Եղիազարյան Ա.**, Արաս Բագրատունի. թագավոր հայոց, էջ 45-53:

<sup>244</sup> «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միննեաց» (այսուհետև՝ Ստեփանոս Օրբելյան), Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպարան, 1910, էջ 300: Այդ տեղեկության ժամանակաշրջանային ընդգրկումը որոշվում է հայկական անանուն ժամանակագրություններից մեկում նույն այդ հիշատակության հստակ թվագրմամբ: Ըստ դրա՝ հիշատակությունը վերաբերում է Սմբատ Ա-ի մահից հետո ընկած ժամանակաշրջանին՝ մինչև Բագրատունյաց Հայաստանում նոր թագավորությունների ի հայտ գալը: Տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. I, կազմեց՝ Վ. Հակոբյան, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1951, էջ 384:

նելը հազիվ թէ ընդունելի տեսակետ է, քանի որ Ստեփանոս Օքքելյանի վերոհիշյալ տեղեկությունը ցույց է տալիս, որ մինչև Կարին (իմա՝ Կարն գավառ) տարածվող Բագրատունյաց տիրույթները ներառում էին նաև Բասենն ու Հավնունիքը:

Սակայն, նշվածն առաջացնում է մի կարևոր հարց: Տայքի՝ Ուղթիսից արևելք տարածվող հատվածը, որը մտնում էր Շիրակի Բագրատունիների տիրույթների մեջ, կա՝ մ պետք է նույնպես գտնվեր Կարսի թագավորության մեջ կա՝ մ մինչ այդ անցած լիներ 961 թվականից ի վեր Դավիթ կուրապաղատի օրոք իր վերելիք շրջանն ապրող Տայքի կուրապաղատությանը: Մեզ առավել հավանական է թվում այն, որ Տայքի այդ հատվածը սկզբում անցել է Կարսի Մուշեղ թագավորին, բայց հետո նրա կողմից հանձնվել Դավիթ կուրապաղատին՝ ի պատասխան ցուցաբերած օգնության: Հավանաբար, իրադարձությունները զարգացել են հետևյալ կերպ: Հայտնի է, որ Ճակատք գավառում գտնվող Շատիկ բերդը պատկանում էր Մուշեղին, բայց գրավվել էր Սմբատ Բ արքայի (978-990 թթ.) կողմից, որի պատճառով Մուշեղն օգնության էր կանչել Դավիթ կուրապաղատին: Դավիթ կուրապաղատի միջնորդությամբ բերդը վերադարձվեց Մուշեղին<sup>245</sup>, ով, մեր համոզմամբ, դրա դիմաց կուրապաղատին տվեց Տայքի նշված շրջանը: Նման «նվերները» այդ պատմափուլում ընդունված էին: Մասնավորապես, նույն Դավիթ կուրապաղատը ռազմական աջակցության դիմաց Սմբատ Բ-ին էր հանձնել Աբխազաց Բագրատ Գ թագավորից (978-1014 թթ.) խլված Սակուրք (Սակուրեթ) բերդը<sup>246</sup>: Այդ է պատճառը, որ Տայքի՝ Ուղթիս քաղաքից արևելք ընկած հատվածը Մուշեղի թագավորության մեջ չէր մտնում:

Ի վերջո, հարկ է պարզաբանել ևս մեկ կարևոր խնդիր: Եթե Մուշեղն իրեն հոչակել է թագավոր Կարսում, իսկ Աշոտ Գ-ն նրան ճանաչել է որպես այդպիսին, ապա ինչն է պատճառը, որ նրան հատկացվել է ոչ թէ միայն Կարսը՝ հարակից տարածքով, այլ այլշափ ընդարձակ

<sup>245</sup> Տե՛ս **Ասողիկ**, էջ 760:

<sup>246</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 806:

տարածք՝ Բագրատունյաց արքունի տիրույթների ողջ արևմտյան հատվածը: Ինչպես տեսանք, Կարսի թագավորության ստեղծման վերաբերյալ կարծիքներում գերիշխում էր այն միտքը, որ Անի տեղափոխվելուց հետո Աշոտ Գ-ն Կարսում կառավարիչ է նշանակել Մուշեղին, որն էլ թագավոր դառնալու նկրտումներ է դրսեւրել: Հատ Ս. Երևմյանի՝ Մուշեղն իրևն հոչակել է Կարսի և շրջակա Վանանդ գավառի թագավոր<sup>247</sup>, բայց չի բացատրել, թե իրեն Կարս քաղաքի և Վանանդ գավառի թագավոր հոչակած Մուշեղի թագավորությունն ինչպես կարող էր նման՝ ավելի քան կրկնակի ընդարձակ տարածքներ ընդգրկել:

Մեր համոզմամբ, գաղտնիքը թաքնված է ավելի վաղ՝ Աշոտ Ա Բագրատունի թագավորի օրոք (887-891 թթ.) ձևավորված իրողության մեջ: Հատ Հովհաննես Դրասիանակերտցու՝ Աշոտ Ա-ի մահվանից կարճ ժամանակ անց, եթե արքայազն Սմբատը նոր էր վերադարձել Գուգարքից և արդեն հուղարկավորված հոր կորուստը սգում էր Երազգավորսում, «...Աբաս սպարապետն Հայոց եւ եղբայր արքային Աշոտոյ ի կողմանս պետութեան Վանանդայ առկայացեալ կայր» և փորձեց անհանազանդություն դրսեւրել<sup>248</sup>: Սմբատը պատժիչ արշավանքի ելավ, ասպատակեց Կարսի արվարձանները, իսկ ամրոցում ապաստանել էր շրջակա գավառի գաղթականությունը<sup>249</sup>: Փաստուն, Սմբատի գործունեության սկզբում հիշատակվում է «Վանանդի պետությունը»: «Պետութիւն» կնշանակե «իշխանություն», «տերություն»<sup>250</sup>, իսկ «Վանանդի պետությունը» ընդգրկում էր համանուն գավառը, որի բնակչությունը Սմբատի արշավանքի սպառնալիքից զադթել ու ապաստանել էր «պետության» կենտրոն Կարսում: Անկասկած, եթե այդ գավառը «Վանանդի պետության» մեջ չիներ, նրա բնակչությունն էր Սմբատի գորքից փախչելու կարիք չէր ունենա:

<sup>247</sup> Տե՛ս **Երեմյան Ը.**, նշան. աշխ., էջ 7:

<sup>248</sup> Տե՛ս **Հովհաննես Դրասիանակերտցի**, էջ 446:

<sup>249</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 447:

<sup>250</sup> Տե՛ս «Նոր բառզիք հայկագեան լեզուի», հ. Բ (Հ-Ֆ), էջ 646:

Փաստորեն, Աշոտ Ա-ի զահակալության շրջանում Բագրատունիների՝ Այրարատում գտնվող տոհմական և արքունի տիրույթների արևելյան հատվածում Կարս կենտրոնով ձևավորվել էր մի իշխանություն՝ «Վանանդի պետությունը», որտեղ իշխում էր արքայի եղբայր սպարապետ Աբասը: Այդ պետությունը, անկասկած, ձևավորվել էր այն բանից հետո, երբ Վանանդ գավառի տերերը, որոնք գավառում իշխում էին 887 թ. դրույթամբ<sup>251</sup>, 888 թ. ապստամբել էին Աշոտ Ա-ի իշխանության դեմ և ի հետևանս դրա զրկվել իրենց տիրույթներից<sup>252</sup>: Մ. Օրմանյանի և Ս. Երեմյանի կարծիքով՝ Կարսը Աշոտ Ա Բագրատունու զահակալությունից սկսած եղել է սպարապետի նստավայր<sup>253</sup>, որն այնքան էլ հավանական չէ, քանի որ միայն մեկ սպարապետի՝ այնտեղ իշխելու իրողությունը չի կարող վստահելի հիմք հանդիսանալ նման տեսակետի համար, առավել ևս, որ այդ սպարապետի իշխանությունը կոչվում էր «Վանանդի պետություն»: Մեզ թվում է, որ Վանանդեցիների տոհմից գավառը խելուց հետո երկու եղբայրները՝ Աշոտ Ա թագավորն ու Աբաս սպարապետը, բաժանել են իրենց տոհմական տիրույթները և Աբասին բաժին հասած «Վանանդի պետության» մեջ, բացի համանուն գավառից, մտել են նաև Այրարատի արևելյան գավառները՝ բացառությամբ Բագրևանդի, այսինքն՝ բոլոր այն տարածքները, որոնք հետագայում Մուշեղի թագավորության մաս կազմեցին:

«Վանանդի պետության» իշխողների հետագիծը հետևյալն է. Աբաս սպարապետից հետո, Սմբատ Ա-ի օրոք (891-914 թթ.) Կարսում «պահակ», այսինքն՝ «վերակացու»<sup>254</sup> էր Հասան Գնթունին՝ որպես «հրամանատար ի վերայ ամենայն տան արքայի»<sup>255</sup>: Այնուհետև, ինչպես հայտնի է, Կարսը Աբաս թագավորի (929-953 թթ.) նստոց-մայրաքաղաքն էր, որից կարելի է բխեցնել, որ նա եղել է Վանանդի պետությունունեկան գործադիր պահակը:

<sup>251</sup>Տե՛ս նաև Գարեգին Ա. կաթողիկոս. Յիշխանակարանք ձեռագրաց, հ. Ա., էջ 84:

<sup>252</sup>Տե՛ս Երեմյան Ը., նշվ. աշխ., էջ 5:

<sup>253</sup>Տե՛ս Օրմանեան Մ., նշվ. աշխ., § 763, սյուն 1075, Երեմյան Ը., նշվ. աշխ., էջ 5:

<sup>254</sup>Տե՛ս «Նոր բազմիքը հայկագետն լեզուի», հ. Բ (Հ-Ֆ), էջ 586:

<sup>255</sup>Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 468:

թյան կառավարիչն Աշոտ Երկարի օրոք (914-929 թթ.): Տեղին է հիշել, որ, ըստ Ռ. Մաթևոսյանի, «Վանանդի պետությունը» ոչ այլ ինչ էր, եթե ոչ «վարչական մարմին, որի ղեկավարումը հանձնվել էր Աբասին (իմա՝ սպարապետին - Ա.Ե.)»<sup>256</sup>, ինչը միայն մասամբ ընդունելի կարծիք է, քանի որ խոսքը պարզապես վարչական մարմնի մասին չէ, այլ «պետության», իշխանության:

Ասվածից բխում է, որ Մուշեղի թագավորության սահմանների ճշտման համար հիմք էր դարձել այն իրողությունը, որ Աշոտ Գ-ն Անի տեղափոխվելուց հետո նրան էր հանձնել «Վանանդի պետության» իշխանությունը, որի սահմաններում էլ հոչակվել էր նրա թագավորությունն ու հաստատվել Աշոտ Գ-ի կողմից: Փաստորեն, Կարսի թագավորությունն ընդգրկում էր Բագրատունյաց տոհմական և արքունի տիրույթների արևելյան գավառները՝ բացառությամբ Բագրևանդի, որը մնացել էր Աշոտ Գ-ի բաժնում:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ Կարսի թագավորության ստեղծումը տեղի է ունեցել 975 թ., երբ Բյուզանդական կայսրության առաջնադաշտական իրողությունից օգտվել է Կարսի տիրակալ Մուշեղը, որը թագավորել է 9-10 տարի և վախճանվել 984 թ.: Նրա օրոք Կարսի թագավորությունն ընդգրկում էր Բագրատունիների արքունի և տոհմական տիրույթների արևելյան հատվածը՝ Շիրակից և Ճակատքից մինչև Տայք ու Կարին և Պաղակացիս լճից մինչև Բագրևանդ:

#### **2.4. Վասպուրականը Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականության մեջ 960-ական թթ.**

Մեր հետազոտություններից մեկում անդրադարձել ենք այն իրությանը, որ Վասպուրականի թագավոր Գագիկը, որը հոչակվել էր նաև «հայոց թագավոր», 920-ական թթ. վերջերին ստացել էր Աշոտ Եր-

<sup>256</sup> Տե՛ս Մաթևոսյան Ռ., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 150:

կաթին պատկանող «շահնշահ» տիտղոսը<sup>257</sup>, ինչի պատճառով արաբական աղբյուրում հիշատակվում է որպես «Հայաստանի և Վրաստանի թագավոր» (مَلِكُ ارْمَنْيَةٍ وَ جَرْزَانِ)՝<sup>258</sup> Այնուհետև իրադարձությունների ժամանակակից Անանիա Մոկացին պատմության այն փուլը, երբ զուգահեռաբար գահակալում էին Աբաս Բագրատունին (929-953 թթ.) և Գագիկ Արծրունին (908-943 թթ.), ներկայացնում է որպես «յաւուրս արի եւ քաջատոհմիկ հզարացն երկոցունց ինքնակայացն Հայոց թագաւորացն քրիստոսապսակեալ տեառնն Գագկայ Արծրունոյ Հայոց թագաւորի եւ տեառնն Աբասայ Բագրատունոյ խաղաղասիրի եւ հեղահամբոյր հզարի եւ մեծի Հայոց արքայի»<sup>259</sup>, այսինքն՝ երկուսին էլ հիշատակում է որպես հայոց թագավոր: Նա Գագիկ Արծրունուն հայոց թագավոր է կոչում այլ պարագաներում ևս<sup>260</sup>: Իսկ հետագայում գրում է, որ Գագիկի որդի Գրիգոր Դերենիկն ամեն ինչով նման էր հորը, բայց նրան կրցում է միայն «Վասպուրականի թագավոր», իսկ միակ հայոց թագավորը Աբասն էր<sup>261</sup>:

Սակայն Վասպուրականի Գրիգոր Դերենիկի եղբայր Աբուսահլ Համազասպ թագավորի գահակալության շրջանում (959-969 թթ.<sup>262</sup>) իրավիճակը դարձյալ փոխվում է, և Բյուզանդիայի կայսր Նիկեփոր Փոկասի օրոք փորձ է արվում Վասպուրականի տերերի միջոցով դարձյալ պառակտում մտցնելու հայոց թագավորության մեջ: Այս

<sup>257</sup> Տե՛ս **Yeghiazaryan A.**, Gagik Artsruni-“King of Armenia and Georgia”, «Բանքեր հայագիտության», Եր., 2016, № 1, էջ 77-94:

<sup>258</sup> Տե՛ս **Ibn Zāfir**, Akhbār al-duwal al-munqaṭī'a, ց. 1, Irbid, 1999, էջ 63:

<sup>259</sup> Անանիա Մոկացի, էջ 256:

<sup>260</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 257-258:

<sup>261</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 260:

<sup>262</sup> Սասողիկից հայտնի է, որ նրա հայրը՝ Գրիգոր Դերենիկը, զահ էր բարձրացել 943 թ., գահական 17 տարի և վախճանվել հայոց 407 թվականին (ապրիլ, 958 թ.-ապրիլ, 959 թ.) (տե՛ս **Ասողիկ**, էջ 826): Ավելի որոշակի՝ նրա գահակալության վերջին՝ 17-րդ տարին 959 թվականն էր: Աբուսահլ Համազասպի՝ 22 տարի գահակալած որդին՝ Աշոտը, վախճանվել էր հայոց 439 թ. (մարտ, 990 թ.-մարտ, 991 թ.) (տե՛ս նույն տեղում), ուստի ստացվում է, որ նրա գահակալությունը սկիզբ էր առել 969 թ.՝ ամենայն հավանականությամբ, իոր մահից անմիջապես հետո: Ակնհայտ է, որ Աբուսահլ Համազասպը թագավորել է 959-969 թթ.:

խնդիրը նախկինում նման տեսակետից երբեք քննության չի առնվել: Այսպես՝ 960-ական թթ. սկզբին կայսրը Վասպուրական է ուղարկում Պանդալեոն քահանային<sup>263</sup>, որը փորձում է շահել թագավորի վատահությունը՝ ձևացնելով, թե ծառայում է երկու տերերի՝ կայսերը և Վասպուրականի թագավորին: Նրան Աբրուսահլ Համազասպը հայոց 414 թ (մարտ, 965 թ.-մարտ, 966 թ.) ուղարկում է Կոստանդնուպոլիս: Թեև որոշ հետազոտողներ Պանդալեոնի ուղևորության նպատակ են համարում Ս. Պետրոսի և Պողոսի մասունքները Վասպուրական բերելը<sup>264</sup>, սակայն հազիվ թե նպատակը դա լիներ, թեև ինչոք պահի նա, իրոք, սկսել է հետաքրքրվել սրբերի մասունքներով: Իր այցի մասին Պանդալեոնը գրում է. «Յամս Նիկիֆորայ տիեզերակալի կայսեր Յունաց... եհաս ինձ տառապեալ Պանդալեոն և ոչ ըստ արժանեացն քահանայի, ...ի հրամանէ երկրորդ տիեզերակալի տեառն իմոյ աւագ Աբրուսահլի Համազասպայ՝ արքայից արքայի մեծ պետութեանս տանս Հայոց, գնալ զՃանապարհ ուղեւորութեան ... Կոստանդնուպօլիս, ի ՆԺԴ (414 թ.-965/966 թ.) թուականութեանս Հայոց...»<sup>265</sup>:

Ա. Աբրահամյանը կարծում էր, որ Տարոնին տիրելու նախօրեին Բյուզանդիան իր խարդավանքների մեջ էր ներքաշել նաև Վասպուրականի թագավորին<sup>266</sup>:

Վ. Վարդանյանը համարում է, որ Վասպուրականի տերերը դեռ շարունակում էին հայոց թագավոր լինելու հավակնություններ ունենալ գոնե անվանապես<sup>267</sup>: Ուսումնասիրողը նկատում է, որ Բյուզանդիան ձգտում էր տիրանալու հայկական հողերին, իսկ դա հեշտացնելու հա-

<sup>263</sup> Տե՛ս **Գարեգին Ա. Կաքողիկոս**. Յիշատակարանք ձեռագրաց, հ.. Ա, էջ 117-118:

<sup>264</sup> Տե՛ս **Շաշյան Ս.**, Վասպուրականի թագավորության պատմությունից, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1949, № 4, էջ 55; **Վարդանյան Վ.**, Վասպուրականի Արծունյաց թագավորությունը 908-1021 թթ., Եր., Երևանի համալսարանի հրատ., 1969, էջ 176:

<sup>265</sup> **Ալիշան Ղ.**, Հայապատում. պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ - ի վանս Ս. Ղազարու, 1901, էջ 122-123:

<sup>266</sup> Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1957, էջ 132:

<sup>267</sup> Տե՛ս **Վարդանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 176:

մար նրան պետք է որ ցանկալի լիներ մեկ շահնշահի փոխարեն մի քանիսի գոյությունը<sup>268</sup>: Ի դեպ, նա զոնում է, որ ընդհանուր առմամբ Բագրատունիների և Արծրունիների թագավորությունների միջև հակադրություն չկար, այլ «կային լոկ հակասություններ, որոնք մասամբ պատվում էին կայսրությանը թեր կամ դեմ լինելու սկզբունքների շուրջ»<sup>269</sup>:

Սակայն իրականում հակադրություն կար, այն էլ՝ ոչ միայն Բյուզանդիայի նկատմամբ վերաբերմունքի շուրջ: Գրիգոր Դերենիկից հետո նրա եղբայր Արուսահլ Համազասպը հավանաբար Գագիկ Արծրունու օրինակով տոգորվել էր Հայաստանում գերակայության հասնելու մտքով, ինչից էլ օգտվել էր Բյուզանդիան՝ հայոց թագավորության մեջ երկպառակություն մտցնելու համար: Պանդալեոնի պարագան միայն սկիզբն էր: Սակայն, ամենայն հավանականությամբ, թեև հայ, բայց քաղկեդոնիկ հոգևորական Պանդալեոնի<sup>270</sup> Վասպուրականի թագավորին «երկրորդ տիեզերակալ» (առաջինը նրա համար Բյուզանդիայի կայսրն էր) կամ «հայոց մեծ պետության արքայից արքա» տիտղոսներով հիշատակելը հուշում է, որ Բյուզանդիայի Արուսահլ Համազասպին որոշակի հույսեր էին ներշնչել Հայաստանում նրա գերակայությունը ձանաչելու համար: Նման գայթակղությանը Վասպուրականի հավակնոտ թագավորը չդիմացավ, ինչի վկայությունն է քաղկեդոնականությանը հարելու մեղադրանքով աթոռանկ արված Վահան կաթողիկոսին հյուրընկալելու և հովանավորելու նրա գործելառձը<sup>271</sup>, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ Բյուզանդիային հնարավոր համագործակցության ակնարկ, ինչին էլ գործնականում ձգտում էր Նիկեփոր Փոլաս կայսրը: Դա ցույց է տալիս, որ իր հոր՝ Գագիկ Արծրունու օրինակով Արու-

<sup>268</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 176-177:

<sup>269</sup>Նույն տեղում, էջ 178:

<sup>270</sup>974 թ. Աշոտ Գ-ի կողմից Հովհաննես Զմշկիկի մոտ որպես պատզամաքեր ուղարկված «Լևոն իմաստաերի» կամ «հայոց վարդապետ Ղևոնդի» և Պանդալեոնի նույնացումը Հ. Բարթիկյանի կողմից (տե՛ս Մատթեոս Ուոհայեցի, էջ 486, ծան. 42) հուշում է, որ, ամենայն հավանականությամբ, այդ անձը նույնանում է Արուսահլ Համազասպին ծառապող Պանդալեոնին:

<sup>271</sup>Տե՛ս Ասողիկ, էջ 756:

սահլ Համազասպն էլ էր փորձում իր գերակայությունը Հայաստանում ճանաչել տալ կայսրությանը:

Թեև մեզ հայտնի չէ Աշոտ Գ-ի վերաբերմունքը Վասպուրականի տիրակալի արարքի նկատմամբ, սակայն կարծ ժամանակ անց հավանաբար Տարոնի զավթումը Բյուզանդիայի կողմից ցրել էր Վասպուրականի տերերի պատրանքները, ինչի պատճառով էլ Արուսահլ Համազասպի որդիներից Ռշտունիքում թագավորող Սենեքերիմ Հովհաննեսն ու Անձեացիքում զահակալող Գուրգեն Խաչիկը զորքով միացել էին Աշոտ Գ-ի՝ Հարքում Բյուզանդիայի բանակի զորաշարժին ընդառաջ կազմակերպած զորահավաքին:

Իսկ այն, որ Պանդալեոնը, անվանապես երկու տերերի, իսկ գործնականում բացառապես Բյուզանդիայի շահերին ծառայելով, որպես միջնորդ էր հանդես գալիս հայ տիրակալների և Բյուզանդիայի միջև, պարզվում է Մատթեոս Ուռհայեցու մեջքերած՝ Պանդալեոնին ուղղված Հովհաննես Զմշկիկ կայսեր նամակից, որը ոչ այլ ոք է, եթե ոչ նույն Պանդալեոնը: Արուսահլ Համազասպի մահից հետո այդ հոգևորականը միջնորդի դեր էր կատարում այս անգամ արդեն Աշոտ Գ-ի և Հովհաննես Զմշկիկի միջև, ընդ որում, այնքան ջանադրաբար, որ արժանացել էր կայսեր անձնական երախտագիտությանը:

Այս իրողությունը ցույց է տալիս, որ Նիկեփոր Փոլկաս կայսրն արևելքում բյուզանդական զորքի առաջիսադացման պայմաններում դիվանագիտական ծավալուն ձեռնարկներ է իրականացրել՝ հայկական պետության ներսում մասնատման գործընթացը խորացնելու և ի հետևանս՝ Հայաստանում բյուզանդական ծավալապաշտական հավակնությունների կենսագործման համար հեշտ ճանապարհ բացելու նպատակով:

## 2.5. Եկեղեցական տագնապի հանգուցալուծումը

Աբաս թագավորի զահակալության շրջանում երկրի դավանաբանական հիմնախնդիրները հիմնականում կարգավորվել էին, սակայն Արցախում և Սյունիքում դրանք, թեկուզ սառեցվել, բայց պահպանվել

Էին: Մինչև 966 թ. հայոց կաթողիկոսն էր գործունյա և հայոց հոգևոր-դավանական միասնության ջատագով Անանիա Սոկացին: Ի սկզբանե պետք է նշել, որ, չնայած Անանիա Սոկացու խիստ հստակ թվականացին հիշատակությանը, պատմագիտության մեջ ամրագրվել է, թե իբր նրա գահակալությունը ընդգրկել է 946-968 թթ.<sup>272</sup>: Ն. Աղոնցը Անանիա Սոկացու գահակալությունը թվագրել էր 943-968 թվականներով<sup>273</sup>, թեև մեկ այլ պարագայում նշում է նրա աթոռակալման 943-965 թվականները<sup>274</sup>: Դժվար չէ տեսնելը, որ առաջին դեպքում նշված թվերի միջակայքը կազմում է 25 տարի՝ Ասողիկի կողմից Անանիա Սոկացուն «հատկացվող» տարիներից ավելի, իսկ երկրորդ դեպքում՝ 22 տարի, թեև Անանիա Սոկացու աթոռակալման թվագրումն ընդհանուր առմամբ կասկածելի է: Վերջերս կ Ա. Հակոբյանն Անանիա Սոկացու գահակալության շրջանը թվագրեց 941-967 թվականներով<sup>275</sup>:

Սակայն աղբյուրներում առկա տեղեկությունները հնարավորություն են տալիս հստակորեն թվագրելու Անանիա Սոկացու գահակալության շրջանը: Ըստ Ասողիկի՝ Անանիա Սոկացին վախճանվել է հայոց 414 թվականին (մարտ, 965 թ.-մարտ, 966 թ.)<sup>276</sup>՝ 22 տարի գահակալելուց հետո<sup>277</sup>: Ասողիկը նրան ժամանակակից պատմիչ է, որը 940-ականների վերջին, երբ բյուզանդական բանակը գրավեց Կարինը (949 թ.), պատանի էր<sup>278</sup>, հետևաբար 960-ականների կեսերին՝ արդեն հասուն մարդ: Սամվել Անեցին ևս նշում է, որ Անանիա Սոկացու աթոռակալության տևողությունը 22 տարի է, որից 5-ը՝ Աղյամարում, իսկ 17-ը՝

<sup>272</sup> Տե՛ս **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., § 748, սյուն 1085-1086: Մ. Օրմանյանին հետևել են այլ հեղինակներ ևս: Տե՛ս **Հարությունյան Հ.**, նշվ. աշխ., էջ 95; **Մաքրոսյան Կ.**, Անի (Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը), էջ 11 և այլն:

<sup>273</sup> Տե՛ս **Արքնոց Ն.**, Երկեր, հ. Ե, էջ 238:

<sup>274</sup> Տե՛ս **Արքնոց Ն.**, Երկեր, հ. Բ, Եր., ԵՊՀ հրատ, 2006, էջ 322:

<sup>275</sup> Տե՛ս **Յակոբեան Ա.**, նշվ. աշխ., էջ 310:

<sup>276</sup> Տե՛ս **Ասողիկ**, էջ 756:

<sup>277</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 749:

<sup>278</sup> Ասողիկը, խոսելով Արասի գահակալությանն շրջանում գործունեություն ծավալած սրբակրոն հայրերի մասին, գրում է. «Զումանս ի սոցանէ ի ծերութեան իւրեանց՝ ի տղայութեան մերում տեսար աշար մերովք՝ ճաշակելով ի քաղցր ճաշակաց բանից նոցա» (նույն տեղում, էջ 754):

Արգինայում<sup>279</sup>: Ըստ նրա՝ Անանիա Մոկացին աթոռակալել է մինչև հայոց 414 թ. (մարտ, 965 թ.-մարտ, 966 թ.)<sup>280</sup>: Անանիա Մոկացու 22-ամյա աթոռակալության մասին հիշատակում են նաև Ստեփանոս Օքբեյանը և Կիրակոս Գանձակեցին<sup>281</sup>: Եթե հայոց 414 թվականը համարենք նրա աթոռակալության 22-րդ տարին, ապա առաջինը կլինի 392 թվականը (ապրիլ, 943թ.-ապրիլ, 944 թ.)՝ ըստ տարեշրջանների, կամ 393 թվականը (ապրիլ, 944 թ.-ապրիլ, 945 թ.)՝ ըստ տարիների հաջորդականության հաշվելու դեպքում: Այստեղ, սակայն, հենքայինն այն է, որ անձամբ Անանիա Մոկացի կաթողիկոսն իր «թղթեր»-ում սեփական աթոռակալության սկիզբը դնում է հայոց 390 թվականին (5 ապրիլ, 941 թ.-5 ապրիլ, 942 թ.)<sup>282</sup>, իսկ հետո հավելում, որ Աբաս թագավորը վախճանվել է «յամն երեքտասաններորդ մերոյ (իմա՝ Անանիա կաթողիկոսի - Ա. Ե.) նուաստ աթոռակալութեանս»<sup>283</sup>: Ասողիկից հայտնի է նաև Աբաս թագավորի վախճանի տարեթիվը՝ հայոց 402 թվականը (2 ապրիլ, 953 թ.-2 ապրիլ, 954 թ.)<sup>284</sup>, ավելի որոշակի՝ 953 թ.: Ուստի նշենք, որ Անանիա Մոկացի կաթողիկոսի գահակալության վերոհիշյալ թվագրումների դեպքում (943 թ. կամ 946 թ.) նրա աթոռակալության 13-րդ տարին ոչ մի կերպ չի համապատասխանում Աբասի մահվան 953 թվականին: Իրականում 953 թվականն Անանիա Մոկացու գահակալության 13-րդ տարին է՝ այն 941 թվականից հաշվելու պարագայում: Սակայն այդ դեպքում առաջանում է երկրորդ խնդիրը: Հայոց 390 թվականից (ապրիլ, 941 թ.-ապրիլ, 942 թ.) հաշվարկելով Անանիա Մոկացուն հատկացվող 22 տարիները՝ հայոց 414 թվականին (մարտ, 965 թ.-մարտ, 966 թ.), եթե, ըստ Ասողիկի և Սամվել Անեցու, նա վախճանվել է, ոչ մի կերպ հասնել չենք կարող: Անանիա Մոկացին հիշատակում է, որ ինքը Գագիկ Արծրունի թագավորի (908-943 թթ.) որդի Գրիգոր Դերենիկ թագավորի

<sup>279</sup> Տե՛ս Սամվել Անեցի և շարունակողներ, էջ 173: Հեղինակը սխալմամբ «Արգինա»-ի փոխարեն գրում է «Վարագ» (տե՛ս նույն տեղում, էջ 380, ծան. 182):

<sup>280</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 173-175:

<sup>281</sup> Տե՛ս Ստեփանոս Օքբեյան, էջ 502, Կիրակոս Գանձակեցի, էջ 85:

<sup>282</sup> Տե՛ս Անանիա Մոկացի, էջ 268: Տե՛ս նաև Ստեփանոս Օքբեյան, էջ 275:

<sup>283</sup> Անանիա Մոկացի, էջ 268:

<sup>284</sup> Տե՛ս Ասողիկ, էջ 755:

(943-959 թթ.) հրամանով սկսում է գրադվել Աղվանից խոտորյալ հայրապետին դարձի բերելու գործով<sup>285</sup>: Ավելի ուշ Անանիա Սոկացին հայերի հոգևոր-դավանական միասնության ապահովման աշխատանքներն իրականացնում էր Շիրակից՝ արդեն Աբաս թագավորի հովանավորությամբ<sup>286</sup>, ինչը հուշում է, որ կաթողիկոսը մինչև Գագիկի մահը գտնվել է Վասպուրականում, որտեղ հայոց հայրապետները նստում էին Հովհաննես Դրասիանակերտցուց սկսած, իսկ այնուհետև իր նստավայրը տեղափոխել է Շիրակ: Այս ամենի հիման վրա նախկինում ենթադրել էինք, որ կա՛մ Անանիա Սոկացի կաթողիկոսի մահվան թվականի հիշատակության մեջ կա վրիպակ, և նա իրականում մահացել է ոչ թե հայոց 414 թ., այլ 413 թ. (մարտ, 964 թ.-մարտ, 965 թ.)՝ աթոռակալելով 941/942-964 թթ., և կա՛մ, քանի որ Անանիա Սոկացին իր աթոռակալության առաջին հինգ տարիներն անցկացրել է Վասպուրականում, հաշվարկելով հայոց 390 թվականից (ապրիլ, 941 թ.-ապրիլ, 942 թ.), նրա տեղափոխվելը Այրարատ պետք է թվագրել 946 թվականով, իսկ աթոռակալության 22 տարիները՝ 946-968 թվականներով<sup>287</sup>:

Սակայն այժմ հակված ենք որոշակի շտկումներ կատարելու մեր տեսակետի մեջ: Մեզ առավել հավանական է թվում, որ Անանիա Սոկացու աթոռակալությունը ենթարկվել է երկակի հաշվարկի, որից էլ առաջացել է վերոհիշյալ թվականային անհամապատասխանությունը: Անձամբ Անանիա Սոկացին, փաստորեն, իր աթոռակալությունը հաշվարկել է 941 թվականից՝ Վասպուրականում գահ բարձրանալուց սկսած, որը նրա աթոռակալության առաջին տարին է, քանի որ 953 թվականը 13-րդ տարին է: Այդ պարագայում նրա գահակալության հինգերորդ տարին, եթե նա տեղափոխվել է Այրարատ, 945 թվականն է: Քանի որ Ասողիկի հիշատակած՝ Անանիա Սոկացու մահվան հայոց 414 թվականին (մարտ, 965 թ.-մարտ, 966 թ.) կասկածելու հիմքեր չունենք այն պարզ պատճառով, որ պատմիչը կաթողիկոսի ժամանակակիցն է և ընդհանրապես հաղորդում է վստահելի տեղեկություններ,

<sup>285</sup> Տե՛ս Անանիա Սոկացի, էջ 258:

<sup>286</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 259:

<sup>287</sup> Տե՛ս Եղիազարյան Ա., Աբաս Բագրատունի, թագավոր հայոց, էջ 92:

ստացվում է, որ Վասպուրականում զահ բարձանալուց հետո մինչև 966 թ. նա գահակալել է 26 տարի: Ինչ վերաբերում է Ասողիկի նշած՝ Անանիա Մոլացու գահակալության 22 տարիներին, ապա ակնհայտ է, որ հաշվարկը կատարվել է Այրարատում հաստատվելու 945 թվականից սկսած (առաջին տարի), որով 966 թվականը դարձել է 22-րդ տարի: Այսուեղ նաև հարկ է շեշտել, որ 945 թվականը մի կողմից նրա՝ Աղքամարում աթոռակալելու 5-րդ տարին է, իսկ մյուս կողմից՝ Այրարատում աթոռակալելու առաջին տարին:

Այսպիսով՝ արձանագրենք, որ Անանիա Մոլացին վախճանվել է 966 թ. տարեսկզբին, քանի որ նրա մահվան՝ հայոց 414 թվականը սկսվել էր 965 թ. մարտին և ավարտվել 966 թ. մարտին:

Աշուտ Գ-ի օրոք Անանիա Մոլացին շարունակեց իր անդրու ջանքերը՝ Սյունիքում և հայոց արևելից կողմերում քաղկեդոնական օջախներն արմատափիլ անելու ուղղությամբ: Դեռևս 940-ական թթ. կեսերին Սյունիքում ստեղծվել էր վտանգավոր իրավիճակ: Սյունյաց եպիսկոպոս Հակոբը (918-958/959 թթ.), որի մասին սպառիչ տեղեկություններ է հաղորդում Անանիա Մոլացին («զգուին եպիսկոպոսաց տանն Հայոց, որ զմետրապաւլտութեանն ընկալեալ էր պատիվ եւ նստէր յաշխարհին Սիւնեաց, որում անունն Յակոբ ճանաչիւր, ի զարմէ տեառն Յովիաննիսի Հայոց կաթողիկոսի»<sup>288</sup>), մեռնի համար այլևս հայոց կաթողիկոսի մոտ չէր գնում՝ պատճառ բերելով կաթողիկոսարանի անընդհատ տեղափոխությունները, ճանապարհի հեռավորությունը և նպատակահարմար գտնելով նշված նպատակներով դիմել Աղվանից (հայոց արևելից կողմերի) կաթողիկոս Սահակին (928-949 թթ.)<sup>289</sup>: Իսկ 930-940-ական թթ. Սյունյաց Հակոբ եպիսկոպոսը նույնիսկ հրաժարվեց հայոց կաթողիկոսի ընտրությանը մասնակցելուց՝ պատրաստակամություն հայտնելով ընդունելու ընտրությունների արդյունքները<sup>290</sup>: Մ. Օրմանյանի դիպուկ դիտարկմամբ՝ խնդիրն այն էր, որ հայոց կաթողիկոսները՝ Հովհաննես Դրասխանակերտցուց մինչև Անանիա Մոլացին, գտնվում էին

<sup>288</sup> Անանիա Մոլացի, էջ 256:

<sup>289</sup> Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև Ստեփանոս Օքքեյան, էջ 274-275:

<sup>290</sup> Տե՛ս Անանիա Մոլացի, էջ 258:

Վասպուրականում և օգտվում նրա թագավորների հովանավորությունից, ինչն ազդում էր Վասպուրականի տերերի նույնիսկ անուղղակի ազդեցությունը չհանդուրժող Սյունյաց տերերի վրա<sup>291</sup>: Խնդիրը կարգավորելու նպատակով 946 թ. Անանիա Մոկացին մեկնեց Սյունիք և հյուրներ կարգավորելու Սյունյաց Սմբատ և Բաղաջ Զվանշեր<sup>292</sup> իշխանների կողմից: Այդ պահին Հակոբ եպիսկոպոսը կաթողիկոսի ներկայությամբ ու Սյունյաց Սմբատ և Բաղաջ Զվանշեր իշխանների ահից ընդունեց իր մեղքն ու կաթողիկոսից ներում ստացավ<sup>293</sup>: Համարելով խնդիրը լուծված՝ կաթողիկոսը մեկնեց Կարս, քանի որ լուր ստացավ թագուհու մահվան մասին<sup>294</sup>: Բայց Հակոբ եպիսկոպոսի մեղայականը կեղծ էր<sup>295</sup>: 949 թ. Անանիա Մոկացին դարձալ Սյունիքում էր, քանի որ Հակոբ եպիսկոպոսը շարունակում էր իր իին ընթացքը: Նա ապաստանել էր Բաղրի Զվանշեր իշխանի Կապան ամրոցում՝ ստանալով իշխանի լիակատար աջակցությունը: Նզովելով նրանց՝ կաթողիկոսը վերադարձավ Շիրակ<sup>296</sup>: Հստ Սյունյաց պատմիչի՝ Անանիա Մոկացին «իբրև ետես զայն ...՝ բազում աւուրս օթեալ անդը. և յոլով թղթովք և պատզամաւրօք հայցեր ի դուրս զՅակոբ ի ձեռացն Զևանշիրի»<sup>297</sup>, բայց անօգուտ, քանի որ իշխանը Սյունյաց եպիսկոպոսին չհանձնեց կաթողիկոսի ձեռքը: Քանի որ ձմեռ էր, կաթողիկոսը չկարողացավ երկար մնալ Կապանի պատերի տակ և հավանաբար իր տրամադրության տակ եղած զորքով<sup>298</sup> ավերակի վերածեց շրջակայքը («աւերեաց զտեղին և քանդեաց...») և, նզովելով ու բանադրելով խոտորյալներին, հեռացավ<sup>299</sup>:

<sup>291</sup> Տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., սյունակ 1088:

<sup>292</sup> Ստեփանոս Օքքեյանը սրան կոչում է Զևանշեր:

<sup>293</sup> Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 258: Տե՛ս նաև **Ստեփանոս Օքքեյան**, էջ 276:

<sup>294</sup> Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 258-259:

<sup>295</sup> Տե՛ս նույն տերում, էջ 259: Տե՛ս նաև **Ստեփանոս Օքքեյան**, էջ 277:

<sup>296</sup> Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 267-268:

<sup>297</sup> **Ստեփանոս Օքքեյան**, էջ 283:

<sup>298</sup> Այլապես անհասկանալի է մնում այն, թե ինչու էին Կապանի Զվանշեր իշխանն ու Հակոբ եպիսկոպոսը ապաստանել Բաղրի Կապան ամրոցում, իսկ կաթողիկոսն էլ շրջակակել էր նրանց և պահանջում էր հանձնել Հակոբ եպիսկոպոսին:

<sup>299</sup> Տե՛ս **Ստեփանոս Օքքեյան**, էջ 282-283:

Պատմիչը փորձում է հավատացնել, որ Հակոբ Եպիսկոպոսին հանիքավի վատաքանել էին, ուստի նա, ապաստանելով Կապանում, սպասում էր՝ «Մինչև անցանէ բարկութիւն Տեառն: Քանզի գիտէր զանիքաւարձ բարդումն պէսպէս բասրանացն<sup>300</sup> որ զօղեալ էին ի վերայ ինքեան...»<sup>301</sup>: Վերադառնալով՝ կաթողիկոսը սկսեց փորձեր կատարել հնագանեցնելու Աղվանից Գագիկ կաթողիկոսին (949-959 թթ.)<sup>302</sup>, որին 949 թ. ինքն էր ձեռնադրել<sup>303</sup>, բայց ապարդյուն: Հավանաբար Հակոբ Եպիսկոպոսի արարքները հրահրելու մեջ նա կասկածում էր հենց Աղվանից կաթողիկոսին: Ստեփանոս Օքբեյանի տեղեկությունը հաստատում է դա: Ըստ նրա՝ «...Գագիկ ... առաւել համարձակեալ էր ի սէր միաբանութեան ընդ Յակոբայ՝ Սիւնեաց Եպիսկոպոսի»<sup>304</sup>: Այդ ամենը տեղի ունե-

<sup>300</sup> Թերեւ՝ բամբասանացն:

<sup>301</sup> Նույն տեղում:

<sup>302</sup> Ըստ Մովսես Դասխուրանցու և Կիրակոս Գանձակեցու՝ Գագիկ կաթողիկոսն իշխել է 14 տարի, ըստ որում՝ նրա գահակալության չորրորդ տարին համապատասխանել է հայոց 400 թվականին (ապրիլ, 951 թ.-ապրիլ, 952 թ.): Տե՛ս Մովսես Կաղանկառացի, Պատմութիւն Արքանից աշխարհի (այսուհետու Մովսես Կաղանկառացի), քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքեյանի, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 346; Վիրակոս Գանձակեցի, էջ 198: Ստացվում է, որ նա աթոռակալել է մինչև 961 թ., ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ նա մահացել է Հակոբ Եպիսկոպոսի հետ նույն տարում, ըստ Ստեփանոս Օքբեյանի հայոց 407 թ. (ապրիլ, 958 թ.-ապրիլ, 959 թ.): Դա է փատում նաև այն իրողությունը, որ Հակոբի և Գագիկի մահից հետո Սյունիքից Աղվանից նոր կաթողիկոս ձեռնադրելու նպատակով Արցանի մեկնելիս «գումկան հասանի ի թագաւորէն Վասպորականի և Արծունի Գրիգոր կոչեցեալ եթէ վախճանեալ՝ մնա դին նորայ քեզ» (Ստեփանոս Օքբեյան, էջ 285-286), որից կարելի է բխեցնել, որ այդ դեպքը տեղի է ունեցել Վասպորականի Գրիգոր Դերենիկի թագավորի մահվան տարում՝ 959 թ.: Մնում է ենթադրել, որ Գագիկ կաթողիկոսի գահակալության 14 տարիների մեջ ընդգրկված են նաև այն տարիները, երբ նա աթոռակալում էր առանց Ամենայն հայոց կաթողիկոսի համաձայնության՝ «անկատար օծմամք» (տե՛ս Մովսես Դասխուրանոս Օքբեյան, էջ 277): Ըստ Անանիա Մովսեսի՝ խոսքը «թերակատար ձեռնադրության» մասին է, քանի որ նա ձեռնադրվել էր ոչ հայոց հայրապետի կողմից (տե՛ս Անանիա Մովսեսի, էջ 260): Հավանական է նաև այն, որ նա գահակալել է միայն 10 տարի, ինչպես նշում է Սիփթար Գոշը (տե՛ս Մովսես Կաղանկառացի, էջ 351): Այդ դեպքում նրա գահակալությունն ընդգրկում է 949-959 թթ.:

<sup>303</sup> Տե՛ս Անանիա Մովսեսի, էջ 261-262:

<sup>304</sup> Մովսես Դասխուրանոս Օքբեյան, էջ 274:

ցավ 949 թ.: Դրանից հետո նա գործնական ջանքեր չգործադրեց ապստամբներին հնազանդեցնելու համար և «միայն աղօթիւր խնդրէր յԱստուծոյ գելս իրին»<sup>305</sup>, ասել է՝ իրավիճակի հանգուցալուծման համար հույսը դնելով աստծո վրա:

Իսկ հայոց 407 թ. (ապրիլ, 958 թ.-ապրիլ, 959 թ.) մահացան թէ՝ Գագիկ կաթողիկոսը և թէ՝ Շակոր եպիսկոպոսը<sup>306</sup>: Ըստ Սյունյաց պատմիչի՝ Գագիկ կաթողիկոսը դրժել էր ուխտը և ապստամբել կաթողիկոսի դեմ, ուստի Անանիա Մոլացին համարեց, որ նրանց երկուսի մահը իր աղոթքների հետևանքն էր<sup>307</sup>, որով «...ամենայն եղծումն եւ ապականութիւն քայլայեցաւ, եւ առաքինութիւն եւ շինութիւն եւ խաղաղութիւն գտեղի խոփաքերեաց...: Եւ զբարս քաղցունց տէր տնկեաց ի սիրտս իշխանաց»<sup>308</sup>: Դրանից հետո միայն Անանիա Մոլացին կարողացավ լուծել խնդիրները Սյունիքում: 959 թ., չնայած ձմեռային եղանակին և ծեր հասակին, կաթողիկոսը շտապ մեկնեց Բաղր՝ կանխելու անցանկալի զարգացումները: Կապան ամրոցի դռներն այս անգամ բացվեցին նրա առաջ: Բանադրված Զվանշեր իշխանը ընտանյոր և ազգոր մեղա եկավ, որին կաթողիկոսը հավատաց և Սյունյաց եպիսկոպոս կարգեց նրա որդի Վահանին<sup>309</sup>: Կաթողիկոսին տեսության եկավ նաև Սյունյաց զահերեց իշխան Վասակը՝ Սմբատի որդին<sup>310</sup>:

Ստեփանոս Օքբեյանը տեղեկացնում է, որ Բաղաց Զագիկ իշխանն ուներ երկու որդի՝ Զվանշերը և Վահանը, որոնցից երկրորդը վանք կառուցեց և իր անունով այն կոչեց Վահանավանք, որի նավակատիքը տեղի ունեցավ հայոց 360 թ. (ապրիլ, 911 թ.-ապրիլ, 912 թ.՝) Հայոց Սմբատ Ա թագավորի օրոք (891-914 թթ.): Հայտնի է, որ Զագիկ իշխանն իր որդի Զվանշերի հետ մասնակցել է Տաթեկի վանքի մայր տաճարի նավակատիքին, որ տեղի է ունեցել 906 թ.<sup>311</sup>: Զագիկին հաջորդել է որ-

<sup>305</sup> Նույն տեղում, էջ 283:

<sup>306</sup> Տե՛ս Անանիա Մոլացի, էջ 269:

<sup>307</sup> Տե՛ս Ստեփանոս Օքբեյան, էջ 283-284:

<sup>308</sup> Անանիա Մոլացի, էջ 269:

<sup>309</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>310</sup> Տե՛ս Ստեփանոս Օքբեյան, էջ 284:

<sup>311</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 221-234:

դին՝ Զեանշերը, «որ և պայազատէր գտէրութիւն նորա (իմա՝ Զագիկի - Ա. Ե.) ... բազում ժամանակօր»<sup>312</sup>, այսինքն՝ իշխել է տևական ժամանակ։ Այսուհետև պատմիչը հավելում է, որ Վահանավանքի հիմնադիր Վահանից «յետոյ միս Վահան՝ եղբօրորդի սորայ, այսինքն Զեանշերի որդի, ... եղև առաջնորդ սուրբ ուխտին (իմա՝ Վահանավանքի - Ա. Ե.): ... [նա] յետոյ կոչեցա յեպիսկոպոսութիւն Սիւնեաց որ զինի Տեառն Յակոբայ։ և անտի յևս ի ծայրագոյն փառ՝ ի կաթողիկոսութիւն Հայոց, որ զինի Տեառն Անանիայի Մոլացւոյն»<sup>313</sup>։ Անանիա Մոլացին հստակ նշում է, որ եպիսկոպոս է ձեռնադրել Բաղրում 959 թ. դրությամբ իշխող Զվանշերի որդուն. «...տեսեալ զեղը արտասուացն՝ աւրինէաք ապա զինքն (իմա՝ Բաղաց իշխան Զվանշերին - Ա. Ե.) եւ գտուն իւր, եւ ձեռնադրէաք եպիսկոպոս աշխարհին զորդի նորին զիսաչակրան եւ զսրբասնունդ տէր Վահան»<sup>314</sup>։ Հ. Ութմազյանը կարծում էր, որ Զագիկից Բաղաց իշխանության անցումը Զվանշերին տէղի է ունեցել մինչև 911 թ., քանի որ 911 թ. դրությամբ, երբ կառուցվեց Վահանավանքը, Բաղաց իշխանն արդեն Զվանշերն էր («...ի Բաղաց Զեանշերի»)<sup>315</sup>, որը, ինչպես կտեսնենք, չի նշանակում, որ Զագիկ իշխանն արդեն վախճանվել էր։ Ստեփանոս Օրբելյանից հայտնի է, որ Զագիկը վախճանվել է 920-ական թթ. կեսերին, երբ Ատրպատականի ամիրա Յուսուֆի (901-927 թթ.) զորավարներից Նարը ասպատակում էր Հայաստանը։ Այդ ժամանակ է, որ նրան հաջորդել է որդին՝ Զվանշերը<sup>316</sup>։ Ահա հենց այս Զվանշերի որդին էր Վահան եպիսկոպոսը, որին վիճակված էր դարնալ հայոց կաթողիկոս։

Հստ Ստեփանոս Օրբելյանի՝ Անանիա Մոլացին Վահանավանքի մեծ ուխտի առաջնորդ Վահանին ձեռնադրել է եպիսկոպոս Սյունյաց իշխանների և հոգևոր դասի խնդրանքով՝ բոլորից ստանալով երդմնա-

<sup>312</sup> Նույն տեղում, էջ 200:

<sup>313</sup> Նույն տեղում, էջ 240-241:

<sup>314</sup> Անանիա Մոլացի, էջ 269:

<sup>315</sup> Տէ՛ ս Ութմազյան Հ., Սյունիքը IX-X դարերում, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1958, էջ 326-327:

<sup>316</sup> Տէ՛ ս Ստեփանոս Օրբելյան, էջ 197-200:

զիր, որ այլս չեն շեղվելու ճիշտ ճանապարհց և չեն հետևելու Աղվանից հոգևոր առաջնորդին<sup>317</sup>: Ըստ որում, ձեռնարկը, այսինքն՝ գրավոր և կնքված երդմնագիրը, նախատեսում էր խիստ պահանջներ. «...և զետկար մեծապայման վճիռն փակեցին ահազին և սուկալի նզովիրք զի մի՝ որ իշխեսցէ յեպիսկոպոսաց զՅակորայն գործել կամ խոկալ կամ խորհիլ ոճիրս. և յիշխանաց զի մի՝ որ իշխեսցէ այնպիսույն թեկն ածել և օգնական կամ ջատագով լինել. և թէ յանդզնի որ յեպիսկոպոսաց՝ փութապէս ի ձեռս տայցեն կաթողիկոսին Հայոց. և մի՝ լիցին դարան և ասպնջական նմա»<sup>318</sup>: Ըստ Անանիա Մոլացու՝ 959 թ. Վահան Եպիսկոպոսը, Բաղաց իշխան Զվանշերը և Սյունյաց իշխանաց իշխան (զահերեց իշխան) Վասարկը՝ Մբրատի որդին, անվանական երդմնագրեր են շարադրել և փոխանցել կաթողիկոսին<sup>319</sup>:

Անանիա Մոլացին այնուհետև Սյունիքից մեկնել է Արցախ և կարգավորել գործերը<sup>320</sup>: Ըստ Սյունյաց պատմիչի՝ եթք Անանիա Մոլացին Սյունիքից հասել է Արցախ, ստիպված անմիջապես մեկնել է Վասպուրական, քանի որ «գումձկան հասանի ի թագաւորէն Վասպուրականի և Արծրունի Գրիգոր կոչեցեալ եթէ վախճանեալ՝ մնա դին նորայ քեզ»<sup>321</sup>: Նախկինում այս տեղեկությունը մեկնաբանվել է սխալ, և ուսումնասիրողներից ումանք փորձել են մահացածին նույնացնել Վասպուրականի թագուհու հետ<sup>322</sup>: Իսկ Հ. Աճայանը կարծիք է հայտնել, որ անորոշ է մնում՝ Գրիգորը գումձկա՞նն էր, թէ՝ թագավորը<sup>323</sup>: Իրականում այդ տեղեկությունը նշանակում է, որ Վասպուրականի նոր թագավորը [իմա՝ Աբուսահլ Համազասպը (959–969 թթ.)] գումձկան է ուղարկել կաթողիկոսի մոտ՝ տեղեկացնելով, որ վախճանվել է նրա եղբայր Գրիգոր Դերենիկի Արծրունի թագավորը: Ըստ Անանիա Մոլացու՝ Գրիգոր Դերենիկի

<sup>317</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 284-285:

<sup>318</sup> Նույն տեղում, էջ 285:

<sup>319</sup> Տե՛ս Անանիա Մոլացի, էջ 271-273:

<sup>320</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 273:

<sup>321</sup> Ստեփանոս Օքբեյան, էջ 285-286:

<sup>322</sup> Տե՛ս Օքմանյան Մ., նշվ. աշխա., պյունակ 1095:

<sup>323</sup> Տե՛ս Աճայան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 541-542:

մահը վրա է հասել հայոց 407 թ. (ապրիլ 958 թ.-ապրիլ 959 թ.), երբ մահացել են նաև Հակոբ Եպիսկոպոսը և Գագիկ կաթողիկոսը<sup>324</sup>:

Ի դեպ, այստեղ հարկ է նշել, որ Անանիա Սոլկացին նշված դեպքերի ժամանակագրությունը հիշատակում է այլ կերպ: Կաթողիկոսն իր նկարագրության մեջ 10-ամյա մի բաց ունի՝ սկսած 949 թվականից, երբ ձեռնունայն վերադարձավ Կապանից: Անմիջապես հետո նա ներկայացնում է արդեն 959 թ. տեղի ունեցած իրադարձությունները, որոնցից առաջինը հետևյալն էր. «Աստանաւր ապա վերափոխի յաշխարհէս մեծն այն եւ արի արքայն, որդի տեառն Գագկայ Արծրունոյ, Գրիգոր Դերենիկ կոչեցեալ, եւ յաջորդէ զաքոռ թագաւորութեանն տէր Համազասպ եղբայր նորին»<sup>325</sup>: Ճիշտ նույն ժամանակ մահանում են Աղվանից Գագիկ կաթողիկոսը և Սյունյաց Հակոբ Եպիսկոպոսը: Կաթողիկոսն անմիջապես մեկնում է Սյունիք և կարգավորում գործերը<sup>326</sup>: Այնուհետև կաթողիկոսը ներկայացնում է Սյունյաց իշխաններից ստացված երդմագրերի տեքստերն ու հավելում, որ շտապ մեկնել է հայոց արևելից կողմէր («յաշխարհն Աղուանից»՝ վերացնելու Գագիկ կաթողիկոսի և նրա նախկինների գործած շարիբների հետևանքները)<sup>327</sup>: Դրանից հետո «...գումարան հասաներ ի մեծ իշխանէն Սենեքերիմայ՝ գալ հասանել Իսմայելականաց բռնութեամբ յաշխարհն նորա, գերել եւ աւերել եւ ի սուր սուսերի մաշել: Եւ զիրս աղետիցն առաքէ ծանուցանել մեզ՝ մի՛ եւս մտանել առ անզամ մի յամպրոպ դառնույթեան»<sup>328</sup>: Ի վերջո Շիրակ է ժամանում Աղվանիքի և հայոց արևելից կողմէրի տերերի ընտրած՝ Աղվանից կաթողիկոսական աթոռի թէկնածուն<sup>329</sup>: Ակնհայտ է, որ դեպքերի ուղղակի մասնակից հայոց կաթողիկոսի նկարագրությունը համապատասխանում է իրականությանը, որով թեև փոքր-ինչ փոխվում է

<sup>324</sup> Տե՛ս Անանիա Սոլկացի, էջ 269:

<sup>325</sup> Նույն տեղում:

<sup>326</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 269-273:

<sup>327</sup> Տեևս նույն տեղում, էջ 273:

<sup>328</sup> Նույն տեղում:

<sup>329</sup> Տե՛ս նույն տեղում:

Ստեփանոս Օքբելյանի ներկայացրած՝ դեպքերի հերթականությունը, բայց ժամանակագրական թվագրումները մնում են նույնը:

Անակիա Մոլացու հաղորդումներից ի հայտ է զալիս նաև ոմն մեծ իշխան Սենեքերիմի տիրույթների՝ մահմեդականների ասպատակության մասին տեղեկությունը, որի քննությունը այստեղ անհրաժեշտ է: Անակիա Մոլացին երկու Սենեքերիմ է հիշատակում՝ Աղվանից իշխանաց իշխանին<sup>330</sup> և Խաչենի Գրիգոր իշխանի որդուն («տեառն Սենեքերիմ»), որոնցից «մեծ իշխան Սենեքերիմ» հիշատակությանն առավել համապատասխանում է «փշխանաց իշխան Սենեքերիմ»-ը, որ ոչ այլ ոք է, եթե ոչ Աշոտ Երկարի (914-929 թթ.) աներ՝ Գարդմանքի իշխան Սահակ Սևադայի թոռնորդի Հովհաննեար, «որ և Սենեքերիմ կոչեցաւ, ընտրեաց աջ բարձրելոյն՝ կոչելով ի թագաւորութիւն»<sup>331</sup>: Այսինքն՝ խոսքը Փարիսոսի թագավորության հիմնադրի մասին է, ով ամենայն հավանականությամբ թագավոր է հոչակվել Սմբատ Բ-ի օրոք: Եթե ճիշտ է կրահումը, ապա ասպատակվել է Փարիսոսի տարածքը: Մահմեդական մի աղբյուր հիշատակում է Սևորդիների և Իբրահիմ Իբն Մարզուքան Սալարյանին պատկանող Գանձակի միջն հակամարտության մասին<sup>332</sup>: Խակ Գանձակը Իբրահիմին է պատկանել 957-971 թթ.: հոր մահից մինչև Շաղրադյանների կողմից գրավվելը<sup>333</sup>: Հետևաբար առավել քան հավանական է, որ 959 թվականին իշխանաց իշխան Սենեքերիմի տիրույթները, գտնվելով Գանձակից փոքր հեռավորության վրա, կարող էին դառնալ Գանձակի մահմեդականների հարձակման թիրախ, որի մասին էլ նա հաղորդել է Անանիա Մոլացուն: Քանի որ վերջինս վախճանվել է 966 թ., ապա հարձակման ժամանակագրական շրջանակն էլ ավե-

<sup>330</sup> Խոսքը Փարիսոսի տիրակալի մասին է: Տե՛ս Ուլութաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 91: Փարիսոսում թագավորության ատեղծումը հասուլ քննության խնդիր է, որին այստեղ չենք անդրադառնում:

<sup>331</sup> Մոլսես Կաղանկատվացի, էջ 341:

<sup>332</sup> Տե՛ս Minorsky V., Studies in Caucasian history, London, Taylor's foreign press, 1953, p. 13; Տեր-Ղևոնյան Ա., Սունաջշմ-Բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շաղրադյանների մասին, էջ 478:

<sup>333</sup> Տե՛ս Minorsky V., Խշկ. աշխ., էջ 15:

լի է սեղմվում՝ 957-966 թթ. միջակայքում: Այն, որ ասպատակվել է հենց Փարիսուի իշխանությունը, պարզվում է կաթողիկոսին Սենեքերիմի գրած գգուշացումից՝ «...ատաք ծանուցանել մեզ՝ մի՛ եւս մտանել առ անգամ մի յամպրոպ դառնութեան»: Ասել է՝ Սենեքերիմը Արցախում գտնվող կաթողիկոսին գգուշացրել է հավանական վտանգի մասին:

Վերադառնալով Անանիա Մոկացու՝ Արցախից վերադառնալուց հետո տեղի ունեցած դեպքերին՝ նշենք, որ շուտով Աղվանքի և հայոց արևելից կողմերի մեծամեծները՝ Աղվանից թագավոր Իշխանակը՝ Ատրաներսեհի որդին, Աղվանից իշխանաց իշխան Սենեքերիմը, Խաչենի Գրիգոր իշխանի որդի Սենեքերիմը, Գոռողզվա իշխան Վաչագանը, Արևելից իշխան Գուրգենը և այլք, կաթողիկոսի հետ պայմանավորվածության համաձայն, ընտրում են մի հոգևորականի՝ Դավիթ վանականին, և ձեռնադրման համար ուղարկում Շիրակ: Արքայի կամոր ձեռնադրությունը տեղի է ունենում<sup>334</sup>:

Անանիա Մոկացու նկարագրությունը ցույց է տալիս, որ հայոց թագավորության տարածքում հոգևոր-դավանական միասնության վերականգնման հիմնական ջատագովը հենց Աշոտ Գ Ողորմած թագավորն էր: Կաթողիկոսը պատմում է, որ երբ վերադարձավ Սյունիք ու Արցախ կատարած ուղևորությունից, արքան անշափ ուրախացավ, հատկապես՝ երբ իմացավ դավանաբանական խնդիրների լուծման մասին: Անանիա Մոկացին իր հաջողությունները ներկայացնում է հարցունս «շնորհաց հզարիս այսորիկ (իմա՝ Աշոտ Գ-ի - Ա. Ե.) և աղաւթից սրբոց»<sup>335</sup>: Այդպիսով վերջ դրվեց հայոց «եկեղեցու մեծ պատերազմին», և «եկեղեցու պատվական անդամները, որոնք պառակտվել<sup>336</sup> են, վերստին Հայոց մեծ պատրիարքների գլխավորությամբ» միավորվե-

<sup>334</sup> Տե՛ս Անանիա Մոկացի, էջ 273, Ստեփանոս Օքբելյան, էջ 286:

<sup>335</sup> Անանիա Մոկացի, էջ 273:

<sup>336</sup> Ըստ պատմիչի՝ «օձտեալ էին», որը թարգմանվել է «խոտորվել էին» (տե՛ս Ստեփանոս Օքբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ա. Արքահայրանի, Եր., «Սովետական գրող», 1986, էջ 481, ծան. 824), սակայն առավել ճշգրիտ են «պառակտվել էին» կամ «ցրվել էին» ձևերը (տե՛ս «Նոր բարգիրք հայկագեան լեզուի», հ. Բ (Հ-Ֆ), էջ 1026-1027):

ցին<sup>337</sup>: Ստեփանոս Օքելյանը հավելում է, որ այդուհետ որևէ մեկը, լիներ նա Սյունյաց եպիսկոպոս թէ Աղվանից արքեպիսկոպոս, եթե որևէ պատճառով որոշեր նույն կորստարեր ճամփով ընթանալ և հեռանալ հայոց կաթողիկոսներից, որևէ հերձվածի (իմա՝ քաղկեդոնական դավանանքը) տուրք տար կամ անպատշաճ նորածնություն կատարեր, Սուլր Երրորդությունից կնզովվեր<sup>338</sup>: Պետք է նշել, որ բանը միայն դրանով չափարտվեց. Սյունյաց եպիսկոպոսությունը ժամանակավորապես գրկվեց մետրոպոլիտության պատվից<sup>339</sup>:

Ստացվում է, որ Սյունիքը և հայոց արևելից կողմերում առկա անջատողական միտումներն ու քաղկեդոնականության տարածման վտանգը չեզոքացվեցին 959 թ. դրույթամբ:

Անանիա Մոկացու կողմից ձեռնադրված Վահանը Սյունիքի եպիսկոպոսն էր 6 տարի (960-966 թթ.)<sup>340</sup>, որից հետո բազմեց հայոց կաթողիկոսական զահին: Վ. Ալեքսանյանը, հիմք ընդունելով Մատթեոս Ուտիայեցու այն տեղեկությունը, որ «...նստաւ յաթոռ հայրապետութեան տանն Հայոց տէր Վահան ի մեծն Արգինա հրամանաւ Անանիայի, Յովհաննիսի և Աշոտոյ Հայոց թագավորի»<sup>341</sup>, եզրակացնում է, որ Անանիա Մոկացին, կանխազգալով մահը, որոշել էր իրենից հետո կաթողիկոս դարձնել ուժեղ հոգևորականի<sup>342</sup>: Սյուս կողմից, հայոց աշխարհիկ և հոգևոր մեծամեծները, փորձել են Սյունիքի եպիսկոպոսին կաթողիկոս դարձնելով, ամրապնդել հայերի հոգևոր-դավանական միասնականությունը, քանի որ Սյունիքն անջատողական հակումներ էր դրսութում<sup>343</sup>: Ասողիկը տեղեկացնում է, որ Վահան Սյունեցին կաթողիկոսա-

<sup>337</sup> Տե՛ս Ստեփանոս Օքելյան, էջ 286:

<sup>338</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 286-287:

<sup>339</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 285:

<sup>340</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 288:

<sup>341</sup> Մատթեոս Ուտիայեցի, էջ 38-40:

<sup>342</sup> Տե՛ս Ալեքսանյան Վ., Վահան Ա Սյունեցի կաթողիկոս հայոց, «Բանքեր Երևանի համալսարանի հայագիտություն», Եր., 2019, № 2, էջ 43:

<sup>343</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 44:

կան գահին է բազմել հայոց 414 թ. վախճանված Անանիա Մոլացուց հետո<sup>344</sup>:

Ստեփանոս Օքքեյանի մի տեղեկության համաձայն. «...ապա հասանէ վախճան կաթողիկոսին Հայոց Տեառն Անանիայի. փոխեն զնա ի հանգիստ ի վանսն Արգինայի. և թագաւորն Աշոտ՝ որդին Սմբատայ, առնէ ժողով եպիսկոպոսաց և հարց սրբոց ի թագաւորանիստն Շիրակավան. կոչէ և զՎահան ի Սիւնեաց. և հրամայէ ընտրել զմի որ յեպիսկոպոսացն և կացուցանել յարոռ հայրապետութեան Հայոց: ...որ և կեցեալ ամ մի՝ սկսաւ պատկերս քերել ի Վրաց և դներ ի Վերայ սեղանյն. և հրամայէր յամենայն եկեղեցին զնյն առնել, ըստ Հոռոմոց սահմանին կաւնիք<sup>345</sup> զարդարել եւ առանց կաւնի<sup>346</sup> ոչ առնել պատարագ: Վասն որոյ կարծիս իմն առեալ ամենեցունց եթէ դաշնադիր է ընդյոյնս. և կամի սպրդել յեկեղեցի զաղանդ նոցին, բողոք բարձին ընդ թագաւորն»<sup>347</sup>: Ըստ Ասողիկի. «Եւ ապա եկաց կաթողիկոս Վահանիկն<sup>348</sup> ի Բաղաց գաւառէ, որդի Զուանշիրի իշխանի Բաղաց: Սա ընդ քաղկեդոնականս սիրելութիւն եւ հածութիւն կամեցաւ առնել թղթովք»<sup>349</sup>: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ 1 տարի աթոռակալած Վահանը «դաշնադիր եղի ընդ Վիրս միաբան դաւանութեամբ»<sup>350</sup>:

Փաստորեն, Անանիա Մոլացի կաթողիկոսի մահից հետո նրա և սկզբում Աբաս, այնուհետև Աշոտ Գ թագավորների անդուլ ջանքերով կարգավորված հոգևոր կյանքը հայոց թագավորությունում կրկին ալեկոծվեց, և, մասնավորապես, սանձահարված քաղկեդոնական շարժու-

<sup>344</sup> Տե՛ս Ասողիկ, էջ 756:

<sup>345</sup> Հունարեն բառ, որը նշանակում է «[սրբա]պատկեր» (տե՛ս Ստեփանոս Օքքեյան, Սյունիքի պատմություն, էջ 481, ծան. 824):

<sup>346</sup> Տե՛ս նախորդ ծանոթությունը:

<sup>347</sup> Ստեփանոս Օքքեյան, էջ 288-289: Այս տեղեկության մեջ կա առնվազն երկու փաստական սխալ Աշոտ Գ-ն ներկայացված է որպես Սմբատի որդի, մինչդեռ նա Աբասի որդին էր, և որպես թագավորանիստ ներկայացված է Շիրակավանը, մինչդեռ Աշոտ Գ-ն նստում էր Անիում:

<sup>348</sup> Ասողիկը, ի տարբերություն այլ պատմիչների, Վահան Սյունեցի կաթողիկոսին Վահանիկ է անվանում:

<sup>349</sup> Ասողիկ, էջ 756:

<sup>350</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 87:

Ար կրկին թափ առավ, այս անգամ արդեն՝ հայոց կաթողիկոս Վահան Սյունեցու մասնակցությամբ: Վերջինիս զահակալության կարձատու՝ 2 տարին շըղորած շրջանը<sup>351</sup> նշանավորվեց Բյուզանդիայի առաջիսաղմամբ, որով էլ Հայաստանում կրկին գլուխ բարձրացրին քաղկեդոնականները: Այս շարժումը Հայաստանում նոր չէր, սակայն այժմ, երբ Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականությունը կլանում էր նորանոր հայկական երկրամասեր, այն կրկին աշխատմացել էր: Մյուս կողմից, հին հայկական երկրամաս Տայքը, որը շարունակում էր մնալ հայաբնակ, դարձել էր հայ քաղկեդոնականության օրրան: Այնտեղ ձևավորված տեղական իշխանությունն իր հզորության շրջանն էր ապրում Դավիթ Կուրապաղատի օրոք (961-1001 թթ.): Սա ևս մի կարևոր ազդակ էր հայ քաղկեդոնականների համար, որոնք այս անգամ փորձեցին Հայ առաքելական եկեղեցին շեղել իր պատմական ուղղուց:

Այս առումով կարևոր է հստակեցնելը՝ հունական՝ թէ՝ վրացական եկեղեցուն էր տրվել նախապատվությունը. պատահական չէ, որ եթե Ասողիկն ու Ստեփանոս Օքբեյանը խոսում են հունական (բյուզանդական) եկեղեցու հետ մերձենալու և հունական սրբապատկերներ ներմուծելու մասին, ապա Կիրակոս Գանձակեցին՝ վրաց եկեղեցու հետ դաշնադրության մասին: Ճիշտը, սակայն, առաջին տարբերակն է, քանի որ տեղի ունեցածը քննարկելի է միմիայն բյուզանդական առաջիսաղման շրջանակներում:

Իրավիճակն այնքան արտառոց էր, որ 968 թ. Անիում տեղի ունեցավ մի ժողով, որտեղ, ըստ Ասողիկի, «ժողովեցին հայոց կրոնավորները»<sup>352</sup>: Ժողովից առաջ Վահան Սյունեցին փախուստի էր դիմել և ապաստանել Վասպուրականում՝ ստանալով Արուսահլ Համազասպ Արծրունի թագավորի աջակցությունը (959-969 թթ.): Ժողովում, որ վայելում էր Աշոտ Գ Ողորմածի հովանավորությունը, քննվեց Վահան կա-

<sup>351</sup> Խնդիրն այն է, որ, ըստ Ստեփանոս Օքբեյանի, Վահան Սյունեցին սկսել է քաղկեդոնականությանը հարել 1 տարի աթոռակալելուց հետո (տե՛ս Ստեփանոս Օքբեյան, էջ 288-289), ուստի ստացվում է, որ նա կաթողիկոսական զահը զբաղեցրել է 1 տարուց ավելի:

<sup>352</sup> Ասողիկ, էջ 756:

թռղիկոսի գործունեությունը, և ճշտվեց, որ նա համախոհ է քաղկեդոնական եկեղեցուն<sup>353</sup>: Նոր կաթողիկոս ընտրվեց Ստեփանոս Սևանցին<sup>354</sup>, որը, դատելով Ստեփանոս Օքբեյանի «Ստեփանոս յԱնի, և Վահան ի Վասպուրական՝ զամս երկու» տեղեկությունից<sup>355</sup>, նստել է Անիում: Դրանով Աշոտ Գ Ողորմածին հաջողվել է «երկրի քաղաքական և հոգևոր իշխանությունը կարձ ժամանակով կենտրոնացնել Անիում»<sup>356</sup>:

Արուսահլ Համազասպը Բյուզանդիայի հետ հարաբերությունների սերտացման պայմաններում Վահան Սյունեցուն ընդունեց և տեղավորեց Զոր վանքում, որն այլ կաթողիկոսների նստավայր էլ էր եղել 924-945 թթ.<sup>3</sup> Վասպուրականում Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի հաստատվելուց մինչև Անանիա Սոկացու՝ Այրարատ տեղափոխվելը<sup>357</sup>, քանի որ կամենում էր կաթողիկոսական աթոռը դարձյալ Վասպուրական տեղափոխելը<sup>358</sup>: Ա. Շաջանը համարում է, որ Վահանին հովանավորելը ցույց է տալիս, որ Վասպուրականի տերերի մեջ դեռ արթուն էր անկախ լինելու ցանկությունը, իսկ Արուսահլ Համազասպն իրեն բավականաշահ ուժեղ էր զգում՝ Բագրատունիներից անկախ գործելու համար<sup>359</sup>:

Այստեղ հույժ կարևոր է նշելը, որ երբ Վահան Սյունեցին նզովվեց ժողովի կողմից և աթոռանկ եղավ, հեռացավ ոչ թե Բաղր, այլ Վասպուրական: Ամենայն հավանականությամբ, այունեցիները հավատարիմ էին մնացել իրենց երդմանը և քաղկեդոնականությանը հարած Վահանին պարզապես չէին ընդունել: Ստեփանոս Օքբեյանն այս առիթով գրում է. «...ժողով սուրբ հարցն յԱնի, յորում քննեալ գոյին համախոհ Վրաց զՎահան կաթողիկոս որ ի Բաղաց, և զի պատկեր եմոյծ

<sup>353</sup> Տե՛ս Ստեփանոս Օքբեյան, էջ 455:

<sup>354</sup> Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև Ասողիկ, էջ 756:

<sup>355</sup> Ստեփանոս Օքբեյան, էջ 290:

<sup>356</sup> Մաքենսյան Վ., Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ, էջ 6:

<sup>357</sup> Տե՛ս Ստեփանոս Օքբեյան, էջ 275:

<sup>358</sup> Տե՛ս Հարությունյան Բ., Արծրունյաց իշխանական ընտանիքը Հայոց պատմության մեջ, Երև., «Մեկնարկ», 2016, էջ 203-204:

<sup>359</sup> Տե՛ս Շաջան Ա., Վասպուրականի թագավորության պատմությունից, էջ 55:

յեկեղեցիս Հայոց, և յամենայն սեղանոյ բարձեալ էր խաչին պայծառութիւն և կաւճիք զարդարեալ որոշեցին զնա նգովիր»<sup>360</sup>:

Այդ ժամանակ քաղկեդոնականության հանդեպ բարեհաճ Վահան Սյունեցու և նրան հովանավորող Արքուսահլ Համազասպ թագավորի վարքը դատապարտող հոգևորականների ժողովներ անցկացվեցին Տարոնում, Հաշոյանքում, Ծոփքում և Խորձյանում Հայաստանի արևմտյան շրջանների եպիսկոպոս Ստեփանոսի և նրա աջակիցներ Մովսես վարդապետի ու հոգևորական Բարկեն Սյունեցու կողմից: Դրանից հետո նշված երեք անձինք մեկնեցին Վասպուրական: Վասպուրականի թագավորը սկզբում նրանց աքսորեց Աղթամար կղզի, բայց հետո Մովսեսին ու Բարկենին ազատեց, և միայն Ստեփանոսը արգելափակվեց Կոտորաց բերդում, որտեղ և մահացավ<sup>361</sup>:

Վահան Սյունեցու և Ստեփանոս Գ Սևանցու գուզահեր 2-ամյա աթոռակալությունը անցավ փոխադարձ նզովքներով և դատապարտումով<sup>362</sup>: Դրանից հետո «Վահանիկն (իմա՝ Վահան Սյունեցի - Ա. Ե.) եւ Ստեփանոս ի միում ամի վախճանեցան եւ բարձաւ խոռվութիւնն յաշխարհիս Հայոց»<sup>363</sup>:

Պետք է նշել, որ բոլորովին էլ զարմանալի չէր, որ Վահանը հարում էր քաղկեդոնականությանը: Ցավոք, անհասկանալի է մնում, թե նման մեկը ինչպես էր կարողացել բազմել հայոց հայրապետական աթոռին: Արդեն համոզվեցինք, որ Անանիա Մովսեսին Արքա թագավորի զահակալության վերջում և Աշոտ Գ-ի զահակալության սկզբում՝ շուրջ 10

<sup>360</sup> Ստեփանոս Օքբեյան, էջ 455:

<sup>361</sup> Տե՛ս Աստղիկ, էջ 756: Հետազոտողներից ոմանք սրանից բխեցրել են, թե Կոտորաց բերդում վախճանված Ստեփանոս Գ Սևանցի կաթողիկոսն էր (տե՛ս Օրմանյան Ս., նշվ. աշխ., սյունակ 1120-1121, Հարությունյան Բ., Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, էջ 203, Մաքելույան Կ., Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ, էջ 6 և այլք): Սակայն պետք է ընդունել Ասորիկի «[Ստեփանոսը] հովուէր զարեւմտեայ կողմն Հայոց» տեղեկության ճշմարտությունը և ընդունել, որ նա կաթողիկոսի անվանակիցն էր և Հայաստանի արևմտյան շրջանների եպիսկոպոսը:

<sup>362</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>363</sup> Նույն տեղում, էջ 757:

տարի (949-959 թթ.), չկարողացավ դարձի բերել ո՞չ նրա նախորդ Հակոբ Եպիսկոպոսին և ո՞չ էլ վերջինիս հովանավոր Բաղրի Զվանշեր իշխանին: Հավանաբար ընտրության վրա ազդել էր Անանիա Սոլոցու կարծիքը, որը, Սյունիքի Եպիսկոպոսին հայոց հայրապետական աթոռի թեկնածու առաջադրելով, իրոք, հույս ուներ ամրապնդելու հոգևոր-դավանական միասնականությունը Հայաստանում:

Ինչպես տեսանք, ըստ Ասողիկի՝ Վահան Սյունեցին կաթողիկոսական գահին է բազմել հայոց 414 թ., ավելի որոշակի՝ 966 թ.<sup>364</sup>: Ըստ Սամվել Անեցու՝ հայոց 415 թ. (մարտ, 966 թ.-մարտ, 967 թ.) Անանիա Սոլոցուն փոխարինել է նրա հաջորդ Վահան կաթողիկոսը և աթոռակալել 1 տարի<sup>365</sup>, իսկ Ստեփանոս Գ Սևանցի կաթողիկոսը՝ հայոց 416-417 թթ. (967-968 թթ.)<sup>366</sup>, որից հետո 1 տարի կաթողիկոսական աթոռը թափուր է մնացել<sup>367</sup>: Ի վերջո, հայոց 419 թ. (մարտ, 970 թ.-մարտ, 971 թ.) կաթողիկոսական գահին բազմում է Խաչիկ Ա-ն՝ գահակալելով 19 տարի<sup>368</sup>:

Վ. Ալեքսանյանը գտնում է, որ Վահան կաթողիկոսը աթոռակալել է 965-970 թթ., որից հետո հեռացել է Վասպուրական, որտեղ որպես հակաթոռ կաթողիկոս աթոռակալել է ևս 2 տարի՝ մինչև 972 թ.<sup>369</sup>: Նրա տեսակետի հիմքում Ստեփանոս Օքքեյանի և Մատթեոս Ուռհայեցու այն տեղեկությունն է, որ Վահանն աթոռակալել է 5 տարի<sup>370</sup>:

Եթե հավատարիմ մնանք աղբյուրների տեղեկություններին, ապա կարող ենք նշել, որ Վահան Սյունեցի կաթողիկոսը գահակալել է 1 տարի՝ նախքան քաղկեդոնականության նկատմամբ հակումներն ի ցույց դնելը, իսկ դրանց հայտնի դառնալուց հետո աթոռանկ է արվել՝ գահակալության 2 տարին չբոլորած: Այնուհետև նա հեռացել է Վասպուրական: Նրա փոխարեն Աշոտ Գ-ի հրամանով Անիում հավաքված Եպիս-

<sup>364</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 756:

<sup>365</sup> Տե՛ս Սամվել Անեցի և շարունակողներ, էջ 175:

<sup>366</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 176:

<sup>367</sup> Տե՛ս Ստեփանոս Օքքեյան, էջ 502, Կիրակոս Գանձակեցի, էջ 87:

<sup>368</sup> Տե՛ս Սամվել Անեցի և շարունակողներ, էջ 176:

<sup>369</sup> Տե՛ս Ալեքսանյան Վ., նշվ. աշխ., էջ 45:

<sup>370</sup> Տե՛ս Ստեփանոս Օքքեյան, էջ 502, Մատթեոս Ուռհայեցի, էջ 40:

կոպոսները 968 թ. կաթողիկոս են ընտրել Ստեփանոս Գ Սևանցուն<sup>371</sup>: Նրանք 2 տարի փոխադարձ նզովքներով անցկացրին և մահացան, ըստ Ասողիկի, նույն տարում: Այնուհետև 1 տարի հայրապետական աթոռը թափուր մնաց: Խաչիկ Ա կաթողիկոսը, ըստ Ասողիկի ճշմարտապատում վկայության, զահ է բարձրացել հայոց 421 թ. (28 մարտ, 972 թ.-28 մարտ, 973 թ.) և աթոռակալել 19 տարի<sup>372</sup>:

Դատելով վերը ասվածից՝ հնարավոր է առաջարկել Անանիա Մոկացուց հետո աթոռակալած երեք կաթողիկոսների աթոռակալության հետևյալ ժամանակագրությունը: Վահան Սյունեցին Այրարատում և Վասպուրականում աթոռակալել է 5 տարի՝ 966-970 թթ., որից գրեթե 2-ը՝ 966-968 թթ.՝ որպես Ամենայն հայոց կաթողիկոս Արգինայոսմ, իսկ մնացյալ երերը՝ 968-970 թթ.՝ իբրև հակաքոր հայրապետ Վասպուրականում: Ստեփանոս Գ Սևանցին Հայրապետական աթոռը գրադեցրել է 2 տարի՝ 969-970 թթ.: 970 թ. նրանք երկուսն էլ վախճանվել են, որից հետո՝ 970-971 թթ.՝ 1 տարի, հայոց հայրապետական աթոռը թափուր է մնացել: 972 թ. Անիում նոր կաթողիկոսի ընտրության նպատակով տեղի ունեցավ մի ժողով, որին մասնակցում էին թագավորության աշխարհիկ և հոգևոր տերերը. «...հրամանաւ թագաւորին Աշոտոյ, որ Ողորմածն կոչիր, ժողովեալ ընտրելոց արանց և եպիսկոպոսաց սրբոց, կացուցանեն յաթոռն հայրապետական գերանեկի այրն Աստուծոյ գտէր Խաչիկ»<sup>373</sup>: Նոր կաթողիկոսը՝ Խաչիկ Ա-ն (972-991 թթ.), Անանիա Մո-

<sup>371</sup> Տե՛ս Ստեփանոս Օքբեյան, էջ 289-290:

<sup>372</sup> Տե՛ս Ասողիկ, էջ 758: Պատմիքը կաթողիկոսի մահվան մասին խոսելիս՝ գրում է. «...ի բարւոք ծերութեան փոխի յաշխարհէս եւ դնի յիւրում հանգստարանին ըստ հիւսիսյ կուսէ եկեղեցւոյն Արգինայի, զոր ինքն շինեալ եր ի ՆԼԹ թուականին Հայոց. զոր ի նորուն ԾԹ ամս համարեալ թուեցուք զաւորս հայրապետութեան նորա ամս Ի», այսինքն՝ այստեղ պատմիչն արդեն նրա գահակալության տարիների թիվը հասցնում է 20-ի՝ նրա մահը, փաստորեն, դնելով հայոց 439 թվականից (մարտ, 990 թ.-մարտ, 991 թ.) մեկ տարի անց՝ հայոց 440 թ. (մարտ, 991 թ.-մարտ, 992 թ.): Ավելին նրա հաջորդ կաթողիկոսի՝ Սարգիսի աթոռակալության սկիզբը պատմիքը համարում է հայոց 441 թվականը (մարտ, 992 թ.-մարտ, 993 թ.) (տե՛ս Ասողիկ, էջ 810):

<sup>373</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 87-88:

կացի կաթողիկոսի քրոջորդին էր<sup>374</sup>: Նրան հաջողվեց խաղաղեցնել հոգևոր կյանքը թագավորության ներսում:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ 960-ական թթ վերջին և 970-ական թթ. առաջին կեսին Բագրատունյաց թագավորությունը ծանր փորձությունների էր ենթարկվում: Իր գահակալության այս շրջափուլում Աշոտ Գ Ողորմածին վիճակվեց հանդես բերել իմաստություն և խելամտություն, քանի որ բյուզանդական ծավալապաշտությունը և երկրի ներսում առաջ եկած խլրտումները անհրաժեշտ էր կասեցնել՝ գործի դնելով ռազմական և դիվանագիտական բոլոր հնարավորությունները: Թեև Տարոնի օավթումը Բյուզանդիայի կողմից հնարավոր չեղավ կանխարգելել սակայն Աշոտ Գ-ն վճռական ճիգով, մարտադաշտ դրւս բերելով 80 հազար զինվորներից բաղկացած մարտունակ բանակ, կասեցրեց Բյուզանդիայի հետագա առաջիսադացումը դեպի Հայաստանի կենտրոնական շրջանները: Արքայի միջամտությամբ հանգուցալուծվեցին նաև երկրի ներսում առկա քաղաքական ինտիրները և հոգևոր-դավանական ձգնաժամը:

---

<sup>374</sup>Տե՛ս Ասողիկ, էջ 758:

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ԲԱԳՐԱՏՈՒՅՑԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԱՇՈՏ Գ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

### 3.1. Բազրատունյաց թագավորության պետական կառուցվածքի առանձնահատկությունները Աշոտ Գ-ի օրոք

Աշոտ Գ-ի օրոք հայոց թագավորության պետական կառուցվածքի բացահայտման տեսանկյունից սկզբնաղյուրներում պահպանվել են կարևոր տեղեկություններ:

Մասնավորապես արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Ս. Ստեփանոս Նախավկայի վանքին տրված ընծայագրերում և Խաչիկ Ա կաթողիկոսի կոնդակում: Աշոտ Գ-ի դուստր Հոփիսիմեն վանքին տրված ընծայագրում գրում է, որ այն տրվել է «...ի ՆԼ. տումարին Արամեան մնածածիս (՝) և ահեկ ամսոյ ԺԶ.-ին (իմա՝ 981 թ. դեկտեմբերի 6 - Ա.Ե.) և ի հոգևոր հովութեան Տեառն Խաչկայ Հայոց կաթողիկոսի շինողին և ըստ մեծի տէրութեան արևելից և հարաւոյ Հայոց, Սահակայ՝ Աշոտ յորջորշեալ անուամբ Շահնշահի»<sup>375</sup>: Առաջին հայացքից կարող է թվալ, որ խոսքը Աշոտ Գ-ի մասին է, սակայն նմանատիպ մեկ այլ վավերագրում համանման, բայց հավելումներով տեսատրը հուշում է, որ խոսքը Վասպուրականի Աշոտ թագավորի (969-991 թթ.) մասին է: Համաձայն Գրիգոր Նարեկացու վկայության՝ Աբուսահի Համազասպի ավագ որդու անունը Աշոտ էր, «քայց ի փրկագործն ծննդենէ աւազանին նորոգութեան՝ ածութեն որդեգրութե ... Սահակ»<sup>376</sup>, ասել է՝ Աշոտի մկրտական անունը Սահակ էր: Հենց նրա մասին էլ խոսվում է Հոփիսիմեի ընծայագրում: Ինչ վերաբերում է նշված երկրորդ վավերագրին, ապա խոսքը նույն վանքին 976 թ. տրված արքայական ընծայագրի մասին է, որտեղ ի մասնավորի ասված է. «...ի

<sup>375</sup> «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1839 թ.թ.), պրակ I, էջ 9:

<sup>376</sup> «Արքոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», ի Վենետիկ, ի տպարանի Արքոյն Ղազարու, 1840, էջ 387:

հոգևոր հովվութեան տեառն Խաչկայ Հայոց կաթողիկոսի և ըստ մեծի մերոյ տերութեան արեւելից և հարաւոյ Հայոց թագաւոր Աշոտ, հորջոր-ջեալ անուամբ բարեպաշտ և մեծ Շահանշահի, ես Աշոտ թագաւոր թագաւորաց ամենայն տիեզերաց եկեալ ի սուրբ ուխտս աստուածա-բնակ Նախավկայիս հանդերձ զօրաւք թագաւորաւք և իշխանաւք...»<sup>377</sup>: Միևնույն նախադասության մեջ իշխատակված են թէ՝ Աշոտ Գ Ողոր-մածը և թէ՝ «արևելյան և հարավային Հայաստանի (հայոց) թագավոր Աշոտը»: Նույնը ասված է Խաչիկ կաթողիկոսի 976 թ. կոնդակում<sup>378</sup>:

Բերված վավերագրերից կարելի է քաղել կարևոր տեղեկություն-ներ Աշոտ Գ-ի օրոք Բագրատունյաց թագավորության պետական կարգի առանձնահատկությունների վերաբերյալ: Նախ՝ «...եկեալ ... հանդերձ զօրաւք թագաւորաւք եւ իշխանաւք...» հատվածից, համա-դրելով «...ես՝ Աշոտ թագաւոր թագաւորաց ամենայն տիեզերաց...» սո-ղի հետ, կարելի է հետևեցնել, որ պետական աստիճանակարգի վերին մասում «թագաւոր թագաւորաց ամենայն տիեզերաց»-ն էր կամ շահն-շահը՝ Աշոտ Գ-ն, երկրորդ աստիճանին՝ տեղական թագավորներն ին, երրորդին՝ իշխանները: Մատթեոս Ուռիհայեցու մի կարևոր տեղե-կությունը ցույց է տալիս, որ իշխող վերնախավի հաջորդ օղակը հայոց թագավորությունում ազատներն ին: Պատմիչը գրում է, որ «Յայնժամ ամենայն թագաւորագունքն Հայոց ազատքն և իշխանքն և ամենայն մեծամեծքն աշխարհաց տանն արեւելից ժողով արարին առ թագա-ւորն Հայոց Աշոտ Բագրատունի. Թագաւորն Կապանին Փիլիպպէ և թագաւորն Աղուանից Գուրգէն, Արաս Կարուց տէրն ու Սենեքերիմ Վասպուրականին տէրն և Գուրգէն Անձեւացեաց տէրն և բովանդակ ամենայն տունն Սասանու»<sup>379</sup>: Թվարկված անձանց տիտղոսները հու-շում են, որ «մեծամեծք»-ի ներքո պատմիչը հասկանում է տեղական թագավորներին:

<sup>377</sup> Տե՛ս «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխի-վային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1839 թ.թ.),» պրակ I, էջ 5:

<sup>378</sup> Տե՛ս Տեղ-Վարդանեան Գ., Սահակեան Զ., Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսի 976 թուականի կոնդակը, էջ 98:

<sup>379</sup> Մատթեոս Ուռիհայեցի, էջ 22:

Ստացվում է, որ Աշոտ Երկարի ժամանակաշրջանից սկիզբ առած համակարգը գործում էր նաև Աշոտ Գ-ի օրոք: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ այժմ Բագրատունի զահակալը կառավարում էր որպես Երկրում գոյություն ունեցող թագավորների թագավոր (արքայից արքա) կամ շահնշահ<sup>380</sup>:

Վավերագրերում առկա «...ըստ մեծի մերոյ տէր/ութեան արեւելից եւ հարաւոյ Հայոց թագաւոր Աշոտ...» և «...Աշոտ թագաւոր թագաւորաց ամենայն տիեզերաց...» հատվածների համադրումը ցույց է տալիս, որ Վասպուրականի թագավորությունը այլ կերպ ներկայացված է որպես «արևելյան և հարավային Հայաստանի թագավորություն»: Սակայն քանի որ Վասպուրականի թագավորությունը հարավային և արևելյան Հայաստան համարվել չէր կարող, քանի որ գտնվում էր հայոց թագավորության հարավային հատվածում, պետք է կարծել, որ կա՝ մ նշված տեղեկությունը պետք է հասկանալ որպես «հարավարևելյան Հայաստան» և կա՝ մ, որ ավելի հավանական է, վավերագրերի տեղեկությունների «...ըստ մեծի մերոյ տէր/ութեան արեւելից...» հատվածը պետք է առանձնացնել որպես Բագրատունյաց թագավորությանը վերաբերող հատված, իսկ «...հարաւոյ Հայոց թագաւոր...» հատվածը՝ վերագրել Վասպուրականի թագավոր Աշոտ-Մահակին: Նման տեսակետի համար հիմք է տալիս Հովհաննես Չմշկիկի բանակին ընդառաջ գնալու պատմության ընթացքում Մատթեոս Ուտիհայեցու հաղորդած «Յայնժամ ամենայն թագաւորագունքն Հայոց՝ ազատքն և իշխանքն և ամենայն մեծամեծքն աշխարհաց տանն արեւելից ժողով արարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի» տեղեկությունը, որի «Այն ժամանակ հայոց բոլոր թագավորագունները՝ Արևելից տան աշխարհների (Երկրամասերի) ազատները, իշխանները և բոլոր մեծամեծերը» հատվածը հուշում է, որ հայոց թագավորությունը պարզապես կոչվում էր «Տուն Արևելից» կամ «Արևելից [թագավորություն]»: Նման մի տեղեկություն էլ պահպանել է Ասողիկը. «Եւ ի գալ թագաւորին Յունաց Վասիլի (իմա՝ Վասիլ Բ - Ա.Ե.) յաշխարհս արեւելից՝

<sup>380</sup> Տե՛ս Ասողիկ, էջ 748; Վարդան Վարդապետ, էջ 87:

եկեալ հանդիպեցան նմա նախ՝ Սենեքերիմ եւ ապա՝ Գուրգէն երէց եղբայր նորա...»<sup>381</sup>: Վերջին երկուսը Վասպուրականի տերերն են՝ Աբուսահի Համազասպ թագավորի որդիները: Հայոց թագավորության «Արևելից» կոչվելը լուսաբանելու համար կարևոր է հիշել, որ նախկինում Կոստանդնուպոլիս ուղարկած նամակում Հովհաննես Դրասխանակերտցին Սմբատ Ա-ին ներկայացնում է որպես «բոլորից արևելեայց զիշաւոր»<sup>382</sup>, այսինքն՝ Սմբատ Ա-ն (հետագայում էլ մյուս Բագրատունի գահակալները) Բյուզանդիային ներկայացվում և փոխադարձաբար Կայսրության կողմից էլ դիտարկվում էր որպես «բովանդակ Արևելից զիշավոր»՝ նկատի ունենալով, անկասկած, քրիստոնյա արևելքը: Նույն կերպ էլ հայոց թագավորությունը Աշոտ Գ-ի օրոք կոչվում էր Տուն Արևելից, իսկ Վասպուրականի թագավորությունը՝ որպես նրա հարավային կամ հարավարևելյան մաս:

Վեր ներկայացվածը հնարավորություն է տալիս ընդգծելու, որ Աշոտ Գ-ի օրոք հայոց թագավորության կամ տերության կազմի մեջ էին մտնում Վասպուրականի և Կարսի թագավորությունները, Սատունի, Սյունիքի (Վայոց ձորի), Կապանի (Բաղաց), Խաչենի, Փատիստ-սի և Գոռողվա իշխանությունները:

Դատելով եկեղեցական տագնապի շրջանում տեղի ունեցած իրադարձություններից, երբ Աղվանից թագավոր Իշխանակը հայոց արևելից կողմերի տերերի հետ ընտրում և ձեռնադրման նպատակով Շիրակ են ուղևորում Աղվանից կաթողիկոսական գահի թեկնածուի, կարելի է կարծել, որ հայոց թագավորության ազդեցության ներքո էր շարունակում մնալ նաև Աղվանից թագավորությունը: Կարևոր է նշել, որ Անանիա Մոլացին 940-ական թթ. սկզբի իրադարձությունները նկարագրելիս հաղորդում է Իշխանակի՝ քաղկեդոնական դավանանքին հարելու մասին<sup>383</sup>: Ստացվում է, որ կա՝ մ հետագայում Իշխանակը վե-

<sup>381</sup> Ասողիկ, էջ 826:

<sup>382</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 528:

<sup>383</sup> Տե՛ս Աննաիս Մոլացի, էջ 258: Ավելի որոշակի՝ այդ իրադարձությունը տեղի է ունեցել 941 թ.: Տե՛ս Եղիշազարյան Ա., Վրաց Բագրատունիների թագավորության ձևավորման գործընթացը, Եր., ԵՊՀ հրատ., 2018, էջ 70:

բանայել է իր ընտրությունը, կա՝ մ հայոց թագավորության քաղաքական գերակայության պայմաններում կամա թե ակամա մասնակցել վերջինի հոգևոր-դավանական միասնության տեսանկյունից խստ կարևոր իրադարձությանը: Թվում է, որ այստեղ տեղի են ունեցել թե՝ մեկը և թե՝ մյուսը:

Պետք է նշել նաև, որ տեղական թագավորությունները և իշխանությունները ներքուստ այնքան ել միաձույլ չեն: Օրինակ, Վասպուրականի թագավորությունը բաժանված էր երեք մասի, որտեղ իշխում էին Արուսահլ Համազասպի որդիները: Ըստ Գրիգոր Նարեկացու՝ «Անուն կրտսերոյն զհաւոյն եղեալ Սենեքերիմ մակադրեալ. իսկ միջնոյն՝ Գորգէն, և նախնուոյն՝ Աշոտ: Բայց ի փրկագործն ծննդենէ աւագանին նորոգութեան՝ ածութեն որդեզրութե, անդրանիկին՝ Սահակ, երկրորդին Խաչիկ, վերջնոյն Յովհաննէս»<sup>384</sup>: Աշոտ Սահակը իշխում էր ողջ Վասպուրականում՝ կենտրոն ունենալով Վանը, Սենեքերիմը՝ Ռշտունիքում, իսկ Գուրգենը՝ Անձևացիքում<sup>385</sup>:

Նմանատիպ իրավիճակ էր ձևավորվել, ինչպես տեսանք, նաև Սյունիքում և հայոց արևելից կողմերում:

Ինչ վերաբերվում է Բագրատունիների վրացական ձյուղին, ապա 960-ական թթ. Վերջերին և 970-ական թթ., կապված հայոց թագավորության՝ Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականության թիրախում հայտնվելու հետևանքով դժվարին իրավիճակի ձևավորման հետ, այն ներզրավվել էր Այսրկովկասի քրիստոնյա երկրամասերի միջև սկիզբ առած պայքարի հորձանուտը: Այդ պայքարին հայոց թագավորությունն առժամանակ ի վիճակի չէր միշամտելու, ուստի Բագրատունիների երկու ձյուղերի կապերը էապես խզվել էին<sup>386</sup>:

<sup>384</sup> «Արքոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնը», էջ 387:

<sup>385</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 367; Զամշյանց Ա., նշվ. աշխ., էջ 841; Շալշյան Ա., Վասպուրականի թագավորության պատմությունից, էջ 57, ծանոթ. 1; Վարդանյան Վ., նշվ. աշխ., էջ 181:

<sup>386</sup> Տե՛ս Եղիազարյան Ա., Վրաց Բագրատունիների թագավորության ձևավորման գործընթացը, էջ 85-89:

Ճիշտ նույն տեսանկյունից էլ դիտարկելի է Վիրքի պարագան: Վերևում արդեն անդրադարձանք Մունաջիմ-Բաշիի անանուն աղբյուրի այն տեղեկությանը, որ Աշոտ Գ-ն 953 թ. դրությամբ տիրում էր Վիրքին: Իրավիճակը էապես փոխվեց 960-ական թթ. վերջերից, երբ ծանր վիճակում հայտնված հայոց արքան չէր կարողանում միջամտել Այսրկովկասում Արխազաց թագավորության և Կախքի քորեալիսկոպ-պոսուրթյան միջև ծավալված թեժ պայքարին, որն ի վերջո կենտրոնացավ հենց Վիրքի շուրջ: Այդ նույն ժամանակ Վիրքում աստիճանաբար մեծանում էր Տայքի կուրապաղատ Դավթի (961-1001 թթ.) ազդեցությունը, ով, օգտվելով այն բանից, որ 975 թ. Արխազաց զահին բազմած կույր թագավոր Թեոդոսի օրոք (975-978 թթ.) Արխազաց թագավորությունը թուլացել էր, նախաձեռնեց Արխազավրացական միացյալ թագավորության ձևավորման գործընթացը<sup>387</sup>, որին, ի դեպ, 978 թ. աջակցում էր նաև Աշոտ Գ-ի որդի Սմբատ Բ-ն<sup>388</sup>: Փաստորեն, Վիրքն աստիճանաբար դուրս եկավ հայոց թագավորների գերիշխանությունից՝ ընդգրկվելով նոր ձևավորվող պետության կազմում:

Աշոտ Գ-ի թագավորության համակարգի ներկայացումն ամբողջական չի լինի առանց ամիրայությունների ներկայացման: Ս. Տեր-Ղևոնյանը նկատել է, որ 964 թ. Կայսիկների ամիրայության վերացումից հետո արաբական տարրը երկրում համարյա վերացավ: Մնաց միայն Գողթնի արաբական փոքրիկ ամիրայությունը<sup>389</sup>, որը Աշոտ Գ-ի օրոք, կապված Երասխ գետի հովտում հայոց արքայի գերիշխանության տարածման հետ, առանձնապես աչքի չէր ընկնում և մինչև 983 թվականը աղբյուրներում հիշատակված չէ<sup>390</sup>: Փոխարենը Հայաստանում սկսում են ակտիվանալ քրդերը, որոնց ներկայացուցիչները տի-

<sup>387</sup> Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև «Քարթլիի մատյան», թարգմանությունը և ծանոթագրությունները Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտչովյանի, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, № 9, էջ 69-72:

<sup>388</sup> Տե՛ս Ասողիկ, էջ 805:

<sup>389</sup> Տե՛ս Տեր-Ղևոնյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 190-191:

<sup>390</sup> Տե՛ս Տեր-Ղևոնյան Ա., Դվինը Սալարյանների ժամանակ, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1956, № 12, էջ 88:

րում են Մանազկերտին և Գանձակին: Իսկ Դվինին շարունակում էին տիրել Դեյլեմից սերող Սալարյանները, որոնց հզորության շրջանը համբնավ Արա և Աշոտ Գ թագավորների գահակալության պատմափուլին<sup>391</sup>: Սակայն Աշոտ Գ-ի օրոք Սալարյանների հետ որևէ հակամարտություն հիշատակված չէ<sup>392</sup>, քանի որ, ինչպես կտեսնենք, Սալարյանները պայքարում էին Շաղրադյանների հետ սկզբում Դվինի, իսկ հետո՝ Գանձակի համար:

370-ական թթ. սկզբին Գանձակում հիմնադրված Շաղրադյանների ամիրայության պատմության հետագիծը լուսաբանվում է Մունացշիմ-Բաշիի միջոցով մեզ հասած մի անանուն աղբյուրի տեղեկություններով: Շաղրադյանները քրդական ծագում ունեին, և նրանց ներկայացուցիչ Մուհամմադ իբն Շաղրադը Հայաստանում սկզբնապես տիրել էր Դվինին (951-954 թթ.)<sup>393</sup>: Այնուհետև Դվինի նախկին տիրակալ Մարզուրան իբն Մուհամմադը (մահ.՝ 957 թ.) քաղաքը ետ գրավեց, և տիրույթից զրկված Մուհամմադ իբն Շաղրադը ընտանիքով ապաստանեց Վասպուրականում: Նա այնտեղ էր մեռավ 955 թ.: Նրա որդի Լաշքարին, ով դարձել էր տոհմապետ, Վասպուրականից հեռացել և մինչև 965 թ. ապրել է Դայրուրում, որը Վ. Մինորսկին հակված է նույնացնելու Վայոց ձորին (Դայր-զուր→Վայզ-զուր)<sup>394</sup>: Չնայած, որ նույնացումը վարկածային է, սակայն դրա հավանականությունը մեծանում է այն պատճառով, որ Շաղրադյանների մասին պատմող աղբյուրը, խոսելով Գանձակի նկատմամբ նրանց հավակնությունների մասին, փաստում է, որ մինչ այդ քաղաքին տիրելը Լաշքարին և նրա եղբայր Մարզուրանը ծառայում էին «կրապաշտների» և «անհավատնե-

<sup>391</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 85-87:

<sup>392</sup>Ինչ վերաբերում է Իբն Հաուկալի այն հիշատակությանը, որ 955 թ. դրությամբ «Սմբատի որդիները» հարկատու էին Սալարյան տիրակալ Մարզուրան իբն Մուհամմադին, ապա այդ մասին տե՛ս Եղիազարյան Ա., Արա Բագրատունի. թագավոր հայոց, էջ 74-78:

<sup>393</sup>Տե՛ս ա Minorsky V., նշվ. աշխ., էջ 8-9; Տեր-Ղևոնյան Ա., Մունացշիմ-Բաշիի XI-XII դր. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շաղրադյանների մասին, էջ 475-476:

<sup>394</sup>Տե՛ս ա Minorsky V., նշվ. աշխ., էջ 12:

թի» (իմա՝ քրիստոնյա տերերի - Ա. Ե.)<sup>395</sup>: Այսինքն, պարզվում է, որ Լաշքարին ոչ թե պարզապես բնակվում էր Դայրզուրում, այլ ծառայության էր անցել այնտեղ: Մյուս կողմից Վայոց ձորը Վայզուր է կոչվել նաև այլ աղբյուրներում<sup>396</sup>, որով մեծանում է Վ. Մինորսկու կատարած նույնացման հավանականությունը:

Գանձակը 967 թ. դրությամբ կառավարում էր Մարզուրան իրն Սուլհամմադի որդի Իբրահիմի (966-983 թթ.) նշանակած կառավարիչը, որ դժվարին դրության մեջ էր քաղաքին արևելքից մշտապես սպառնացող Սևորդիների իշխանության պատճառով<sup>397</sup>: Ահա վերջինից պաշտպանվելու համար քաղաքի մեծամեծերը Գանձակ են հրավիրում Լաշքարիին: Նրանք կազմակերպում են Սալարյանների նշանակած կառավարչի ձերբակալությունը, որից հետո Գանձակ է մտնում Լաշքարին (971 թ.)<sup>398</sup>: Այնուհետև Իբրահիմ իրն Մարզուրանը գրոհում է Գանձակի վրա, բայց հաջողություն չունենալով՝ հաշտվում է Լաշքարիի հետ: Վերջինս, ըստ վերոհիշյալ աղբյուրի, այնուհետև տիրել է «ամբողջ Առանին (իմա՝ Ուտիք և Արցախ - Ա. Ե.) և Հայաստանի (իմա՝ Բագրատունյաց թագավորություն - Ա. Ե.) մի մասին» ու վախճանվել 978 թ.<sup>399</sup>: Ակնհայտ է, որ նշված տեղեկությունը խիստ չափազանցված է: Խնդիրն այն է, որ ըստ նույն հեղինակի՝ Պարտավին ու Բայլականին Շադրայյանները կարողացել են տիրել միայն 993 թ.<sup>400</sup>: Ակնհայտ է, որ Շադրայյանների ամիրայությունը Լաշքարիի օրոք այդշափ չէր ընդարձակվել, քանի որ քուրդ տիրակալը, գտնվելով

<sup>395</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 12, 14:

<sup>396</sup> Տե՛ս **Ibn Haukal**, *Liber imaginis terrae, “Bibliotheca geographorum arabicorum”*, pars II, “Opus geographicum”, Leiden, 1967, p. 354-355; “Abū-Dulaf Mis'ar Ibn Muhalhil's Travels in Iran (circa A. D. 950)”: arabic text with an english translation and commentary by V. Minorsky, Cairo, 1955, p. 35: Հմմտ. “Вторая записка Абӯ Дулафа”, издание текста, перевод, введение и комментарии П. Булгакова и А. Халидова, Москва, 1960, с. 36.

<sup>397</sup> Տե՛ս **Minorsky V.**, նշվ. աշխ., էջ 13:

<sup>398</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 15:

<sup>399</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 16:

<sup>400</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 17:

Սևորդիների իշխանության ապահնալիքի ներքո, ավելի շատ զբաղված էր պաշտպանության խնդիրներով: Մյուս կողմից, ինչպես ներկայացվում է Մունաջջիմ-Բաշիի անանուն աղբյուրը, Լաշճարին տիրել է միայն Սալարյանների (դեյլեմցիների) տիրույթներին<sup>401</sup>, այն էլ՝ ոչ ամբողջությամբ, քանի որ, ինչպես տեսանք, Պարտավին Շաղդաղյանները տիրել են միայն 993 թ.:

Ինչ վերաբերում է Մանազկերտին, ապա վերևում ներկայացվեց, որ այն 969 թ. ավերվել էր նահանջող բյուզանդական զորքի կողմից, որից հետո քաղաքը և շրջակայքը անցել էր Աշոտ Գ-ի տիրապետության ներքո: Այդ իրավիճակը պահպանվեց մինչև Աշոտ Գ-ի վախճանը: Հատ Ասողիկի՝ Բյուզանդիայում Վարդաս Սկլերոսի ապստամբության ընթացքում (976-979 թթ.) Մանազկերտին տիրել և այն վերակառուցել է Նիֆրկերտի ամիրա Բատը (Բադ ալ-Քուրդի): Պատմիչը տեղեկացնում է, որ «...մինչ զայսու շփոթմամբ էր թագաւորութիւնն Յունաց, Խլաթայ եւ Նիֆրկերտոյ ամիրայն Բատն վերստին շինէ զքաղաքն Մանազկերտ...»<sup>402</sup>: Սկզբում անիրածեշտ է ձգրտել Մանազկերտին Բատի տիրանալու թվականը: Հայտնի է, որ Վարդաս Սկլերոսի ապստամբությանը մասնակցել են հայ զինվորականներ՝ Տարոնի նախկին իշխաններ Գրիգորի ու Բագրատի և Սոկրի իշխան Զափրանիկի գլխավորությամբ<sup>403</sup>: Հովհաննես Սկիլիցեսից հայտնի է, որ ապստամբությունը Վարդաս Սկլերոսի համար հաջող էր մինչև 978 թվականը, որից հետո՝ 979 թ., մի ճակատամարտի ելքը որոշելիս, նա պարտություն կրեց Վասիլ Բ-ի դեմ մենամարտում<sup>404</sup>: Բատի՝ Մանազկերտին մինչ 979 թվականը տիրելը այս համատեքստում հնարավոր չէր<sup>405</sup>, քանի որ դժվար թե Մոկաց իշխանը, որի տիրույթները գտնվում էին

<sup>401</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 15:

<sup>402</sup> Ասողիկ, էջ 763:

<sup>403</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>404</sup> Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ էջ 57-65:

<sup>405</sup> Է. Դանիելյանը այդ իրադարձությունը թվագրում է «մոտ 976 թ.» (Դանիելյան Է., Մանազկերտը բյուզանդա-արաբական հակամարտության ոլորտում (IX դարի երկրորդ կես-X դար), «Պատմաբանասիրական հանդես», 1977, № 1, էջ 165-166), ինչը խիստ թեական է:

Բատի հողերից ոչ հեռու, մասնակցեք վերոհիշյալ ապստամբությանը՝ թիկունքում թողնելով նման վտանգավոր հարևանի: Հոյժ կարևոր է նաև, որ իրադարձությունների ժամանակակից Ասողիկը Մանազկերտին Բատի տիրելը ներկայացնում է Աշոտ Գ-ի մահից հետո տեղի ունեցած իրադարձությունների շարքում, բայց Վարդաս Սլերոսի ապստամբության ընթացքում<sup>406</sup>: Ավելայտ է, որ Բատը Մանազկերտին կարող էր տիրել 979 թ., այսինքն՝ Սմբատ Բ-ի զահակալության շրջանում (978-990 թթ.): Այստեղ միայն հավելենք, որ Մանազկերտը, փաստորեն, ավերակ է մնացել 969-979 թթ.:

Ամփոփելով վերոասացյալը՝ կարելի է փաստել, որ Աշոտ Գ-ի օրոք դեռևս գոյատևում էր Աշոտ Բ Երկարի զահակալության շրջանից սկիզբ առած շահնշահությունը, և Անիում նստող շահնշահը կամ թագավորների թագավորը գերակա դիրք ուներ մնացյալ թագավորների և մեծամեծերի նկատմամբ<sup>407</sup>:

### 3.2. Գահաժառանգման խնդիրը Աշոտ Գ-ի շրջանում

Բագրատունյաց թագավորության առաջին շրջանում՝ մինչև Աշոտ Գ Ողորմած թագավորի զահ բարձրանալը (887-953 թթ.) զահաժառանգության հարցը ամենահենքայիններից մեկն էր: Թեև Արաբական խալիֆայությունը ճանաչել էր Աշոտ Բագրատունու իշխանությունը և թագ ուղարկել նրան, հետազյում ոչ միշտ էր հաշվի առնում նրա սերունդների՝ հայոց զահի նկատմամբ ունեցած ժառանգական իրավունքները: Արդեն Սմբատ Ա թագավորի զահակալության շրջանում (891-914 թթ.) և դրանից հետո խալիֆի կամ նրա հպատակ Ատրպատականի ամիրի կողմից հայոց թագավորներ հոչակվեցին

<sup>406</sup> Տե՛ս Ասողիկ, էջ 760-763:

<sup>407</sup> Տե՛ս Եղիազարյան Ա., Աշոտ Երկար. թագավոր հայոց, էջ 48-53:

Վասպուրականի տիրակալ Գագիկ Արծրունին<sup>408</sup> և Սմբատ Ա-ի եղ-քայր Շապուհի որդի Աշոտը<sup>409</sup>:

Իր հերթին Բյուզանդիայի արքունիքը ևս Սմբատ Ա-ի սպանությունից հետո, չնայած Արաս թագավորի ու Գագիկ Արծրունու առկայությանը, քննարկում էր մի երրորդ անձի՝ Հայաստանում գերակաձանաշելու հարցը<sup>410</sup>:

Ակնհայտ է, որ նման պայմաններում Բագրատունի արքաները պետք է կարողանային այս կամ այն կերպ ամրագրել իրենց զավակների զահաժառանգության իրավունքը հայոց զահի նկատմամբ: Դա եղել է գրեթե բոլոր Բագրատունի արքաների գլխավոր հոգսերից մեկը Խ դարի ընթացքում, որն իր արձագանքն է գտել աղբյուրներում:

Հետազոտողները քննության առնելով նման զարգացումները՝ եկել են Բագրատունյաց շրջանում զահաժառանգության տարբեր մեխանիզմների առկայության վերաբերյալ եզրակացությունների: Առաջ է քաշվել նաև զահակցության ինստիտուտի գոյության մասին խիստ հետաքրքրական վարկածը, որի հիմնական դրույթն այն է, թե սկսած Աշոտ Գ Ողորմածից՝ Բագրատունյաց Հայաստանում կիրառվել է զահակցության ինստիտուտը, երբ թագավորն իր թագաժառանգին դարձնում էր իրեն զահակից՝ հետագայում զահակալական պայքարը բացառելու համար:

Հայագիտության մեջ երկիցս կարծիք է հայտնվել, թե Աշոտ Գ Բագրատունու զահակալության շրջանում նրա զահակիցն է եղել որդին՝ Սմբատ Բ-ն:

Առաջինը Մխիթարյան միաբաններից Հ. Ղևոնդ Մովսեսյանն էր, որ Սանահինի «Հիշատակարան»-ում («Քէօթուկ») Սիմեոն անունով կրոնավորի՝ 972 թ. վերաբերող «ի թագաւորութեան Աշոտոյ եւ նորին

<sup>408</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 487, 545-546; Թովմա Արծրունի և Անանուն, էջ 281-282, 284:

<sup>409</sup> Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 538:

<sup>410</sup> Տե՛ս Յուլքաշյան Կ., Օռմանոս Լակապենոս կայսեր անհայտ հասցեատերը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, № 1, էջ 36-37:

որդույ Սմբատայ. քաջը եւ յաղթողը թագաւորաց Հայոց»<sup>411</sup> տողից բխեցրեց, որ «972 թուին հորը՝ Աշոտ Շահնշահի կենդանութեան թագաւորանուն եւ գահակից բարձակից կը ներկայացուի»<sup>412</sup>:

Շուրջ հինգ տասնամյակ անց Ռ. Մաթևոսյանն անդրադառնալով խնդրին՝ փորձեց ոչ միայն Աշոտ Գ-ի թագավորության շրջանին, այլև որպանից հետո Բագրատունյաց թագավորությանը վերագրել գահակցության ինստիտուտի գոյությունը: Նա Հ. Ղևոնդ Մովսեսյանի տեսակետը հիմնավորող հավելյալ հիմնավորումներ ներկայացրեց, թեև այդպես էլ Աշոտ Գ-ի գահակալության շրջանից այն կողմ զգաց՝ թագարարվելով միայն նշելով, որ այդ ինստիտուտի զարգացումը Աշոտ Գ-ից հետո կարու է հատուկ քննույթյան<sup>413</sup>:

Ռ. Մաթևոսյանի բերած հիմնավորումներից առաջինն Անանիա Մոկացի կաթողիկոսի կողմից հիշատակված իրադարձությունն է, ըստ որի՝ 958 թ. հայոց արևելից կողմերի իշխաններն Աշոտ Գ-ի մոտ ուղարկելու համար ընտրեցին «զայր մի հոգեւոր...՝ Դաւիթ անուն..., եւ առաքեն ի Շիրակ գաւառ, ի նստոցն լեալ տեառն Սմբատայ Հայոց թագաւորի, Շիրակավան կոչեցեալ»<sup>414</sup>: Այստեղ հիշատակված հայոց թագավոր Սմբատին Ռ. Մաթևոսյանը նույնացնում է Աշոտ Գ-ի որդի Սմբատի հետ, ուստի՝ բխեցնում է, որ արդեն այդ ժամանակ նա հանդիսացել է հոր գահակիցը<sup>415</sup>:

Հետազոտողի ներկայացրած մյուս հիմնավորումն այն է, որ Սանահինի «Հիշատակարան»-ում Սմբատն Աշոտ Գ-ի օրոք թագավոր է հիշատակված ոչ թե մեկ, այլ երկու անգամ, սկզբում՝ «ի թագաւորութեան Աշոտոյ եւ նորին որդույ Սմբատայ. քաջը եւ յաղթողը թագաւո-

<sup>411</sup> «Յիշատակարան Սանահինոյ վանից (Սանահինի քէօթուկը)», էջ 55:

<sup>412</sup> Հ. Ղևոնդ Մովսեսեան, Լոռիի Կիրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, Միխարեան տպարան, 1923, էջ 24:

<sup>413</sup> Տե՛ս Մաթևոսյան Ռ., Գահակցության ինստիտուտը Աշոտ Գ-ի օրոք, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 1, էջ 74-79: Տե՛ս նաև նույնի «Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը», էջ 147-148:

<sup>414</sup> Անանիա Մոկացի, էջ 273:

<sup>415</sup> Տե՛ս Մաթևոսյան Ռ., Գահակցության ինստիտուտը Աշոտ Գ-ի օրոք, էջ 75:

բաց Հայոց», իսկ այնուհետև՝ «զարի եւ քաջ շինաւղն Հայոց թագաւորն Ամբատ» տողում<sup>416</sup>:

Ի վերջո, Ռ. Մաթևոսյանը մեջ է բերում մեկ վիմագիր նյութ: 966 թ. կառուցված Սանահինի Ս. Ամենափրկիչ եկեղեցու պատին կա մի բարձրաքանդակ, որտեղ պատկերված երկու թագակիր անձանցից մեկի գլխավերևում գրված է՝ «Կիւրիկէ թագաւոր», իսկ մյուսի գլխավերևում՝ «Ամբատ թագաւոր»<sup>417</sup>: Ըստ նրա՝ Կյուրիկէն Աշոտ Գ-ի որդի Գուրգենն է, որը դարձավ Լոռիի թագավոր, իսկ Ամբատը՝ Ամբատ Բ-ն: Ըստ Ռ. Մաթևոսյանի՝ դա ցույց է տալիս, որ մի կողմից՝ 966 թ. Ամբատ Բ-ն արդեն գահակից-գահաժառանգ էր, իսկ մյուս կողմից, որ որպես այդպիսին՝ նա ուներ հստակ գործառույթ՝ հանդես գալով որպես արքունիքի ներկայացուցիչ կամ փոխարքա<sup>418</sup>:

Ահա՝, հիմնականում հենց այս հիմնավորումներով է, որ գիտական շրջանառության մեջ է դրվել Աշոտ Գ-ի օրոք գահակցության ինստիտուտ լինելու մասին վարկածը<sup>419</sup>:

Սակայն նշված հիմնավորումների քննությունը ցույց է տալիս, որ դրանք ոչ միայն ճիշտ չեն ընկալվել, այլ նաև մեկնարանվել: Իրականում դրանցից և ոչ մեկը չի խոսում նշված վարկածի օգտին:

Գահակցության ինստիտուտի առկայության առաջին հիմնավորումն Անանիա Մոլացու «Թղթում» առկա այն հիշատակությունն է, որ հայոց արևելից կողմերի իշխանները «զայր մի հոգեւոր...՝ Դաւիթ անուն ... առաքեն ի Շիրակ գաւառ, ի նատոցն լեալ տեառն Ամբատայ Հայոց թագաւորի, Շիրակավան կոչեցեալ»: Այս տողը միայն նշանակում է, որ Շիրակավանը նախկինում եղել է հայոց թագավոր Ամբատի

<sup>416</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>417</sup> Տե՛ս՝ Ղաֆարարյան Կ., Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1957, էջ 77, 98:

<sup>418</sup> Տե՛ս՝ Մաթևոսյան Ռ., Գահակցության ինստիտուտը Աշոտ Գ-ի օրոք, էջ 75-76; նույնի՝ «Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը», էջ 154:

<sup>419</sup> Նշենք, որ այդ վարկածը անվերապահորեն ընդունել ենք մեր հոդվածներից մեկում: Տե՛ս՝ Եղիազարյան Ա., Հայոց իշխանաց իշխանը Բագրատունի առաջին արքաների օրոք, էջ 74:

նստոցը: «Լեալ»-ը ցույց է տալիս, որ այդպես է եղել նշված իրադարձությունից (Դավթի այցից) առաջ, անկասկած, Սմբատ Ա թագավորի օրոք (891-914 թթ.): Այլապես, եթե խոսքը վերաբերեր Սմբատ Բ-ին, ապա լիովին բավարար կլիներ «ի նստոցն տեառն Սմբատայ Հայոց թագաւորի» շարադրանքը: Շիրակավանը նույնական է Երազգավոր-սին, որը եղել է Սմբատ Ա-ի տիրույթ-նստոցը: Հովհաննես Դրասիս-նակերտցին գրում է, որ «...չուէ, զայ, հասանէ ըստ համբաւոյն հասելոյ՝ Սմբատ որդի արքային, ի սեպհական կալուածս Երազգաւորից Շիրակաւան»<sup>420</sup>: Ուստի՝ գահակցության ինստիտուտի առկայությունը հիմնավորելու կոչված այս հիմնավորումը քննությունից դուրս է զալիս, քանի որ միայն սիսալմամբ է վերագրվել Սմբատ Բ-ին:

Երկրորդ հիմնավորումը՝ Սանահինի «Հիշատակարան»-ի «ի թագաւորութեան Աշոտոյ եւ նորին որդույ Սմբատայ. քաջք եւ յաղթողք թագաւորաց Հայոց» հիշատակությունը աչքի չի ընկնում միանշանակությամբ: Ավելին, այն ունի մի հույժ կարևոր տարրնթերցում. «ի թագաւորութիւն Աշոտոյ եւ նորին որդույ Սմբատայ քաջ եւ յաղթող թագաւորի Հայոց»<sup>421</sup>: Ակնհայտ է, որ այս ձևը ևս անաղարտ չէ, թեև ավելի հին է, քան այն, որի վրա հենվում են զահակցության ինստիտուտի առկայությունը հիմնավորել ցանկացող հեղինակները: Անկասկած, սկզբում «ի թագաւորութեան Աշոտոյ՝ քաջ եւ յաղթող թագաւորի Հայոց» նախնական բնագրին հավելվել է «եւ նորին որդույ Սմբատայ» հատվածը: Սմբատի անվան՝ ավելի ուշ շրջանում հավելումը քիում էր Սանահինի «Հիշատակարան»-ի տրամաբանությունից, քանի որ խոսքը վանքի հիմնադրման և եկեղեցական վիճակի ձևավորման մասին է, որ տեղի են ունեցել Աշոտ Գ և Սմբատ Բ թագավորների օրոք: Հետազայում «եւ նորին որդույ Սմբատայ» հատվածի հավելումից հետո նախնական բնագրի «քաջ եւ յաղթող թագաւորի Հայոց» տողը, որ վերաբերում է Աշոտ Գ-ին, գրիչների կողմից նախադասությունը քերականական ճիշտ ձևի բերելու նպատակով փոխվել է հոգնակի թվի և

<sup>420</sup> Հովհաննես Դրասիսանակերտցի, էջ 446:

<sup>421</sup> Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Ե-ԾԲ դարեր)», աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 60:

Ենթարկվել երկու կարգի հոլովման՝ «քաջը եւ յաղթողը թագաւորք Հայոց»<sup>422</sup> և «քաջը եւ յաղթողը թագաւորաց Հայոց»<sup>423</sup>, որոնցից առաջինում օգտագործված է «ի թագաւորութիւն», իսկ երկրորդում՝ «ի թագաւորութեան» ձևը: Այդպիսով՝ կարելի է վստահությամբ ասել, որ սկզբնական տարբերակում եղել է «ի թագաւորութեան Աշոտոյ՝ քաջ եւ յաղթող թագաւորի Հայոց» տարբերակը, որը հետագայում ենթարկվել է երկու հիմնական խմբագրումների: Այնտեղ սկզբում հավելվել է «եւ նորին որդույ Սմբատայ» հատվածը՝ ցույց տալու համար Սանահինի եկեղեցական վիճակի ձևավորման ընթացքը երկու թագավորների օրոք: Հիշատակությունն այդ հավելմամբ պահպանվել է ձեռագրերից մեկում: Հետագա գրիչները հաշվի առնելով Սմբատի անվան հավելումը՝ նախադասության վերջին հատվածը խմբագրել են և ստացվել է «ի թագաւորութեան Աշոտոյ եւ նորին որդույ Սմբատայ. քաջը եւ յաղթողը թագաւորաց Հայոց» ձևը, որն էլ գահակցության ինստիտուտի առկայությունը հիմնավորող հեղինակներն ընդունել են որպես հիմք: Բայց, եթե իրոք Սանահինի «Հիշատակարան»-ի տեքստում առկա է եղել վերջին ձևը, ապա դրան ուղղակիորեն հակասում է նույն այդ հիշատակարանում մի քանի տող անց առկա այն տեղեկությանը, թե Աշոտ Գ-ի վախճանից հետո «...ի նոյն աւրն թագաւորեաց Սմբատ որդի նորա՝ ամս ժԳ»<sup>424</sup>: Ստացվում է, որ հիշատակագիրներին հայտնի էր, որ Սմբատ Բ-ն զահ է բարձրացել հոր վախճանից հետո, բայց նրանք նրան համարում են նաև հոր զահակիցը: Իրականում, նման խառնաշփոթն առաջացել է գրիչների կողմից «Հիշատակարան»-ը պարբերական խմբագրումների ենթարկելու հետևանքով:

Սակայն այդ տեքստում Սմբատը ևս մեկ անգամ հիշատակված է որպես թագավոր՝ «զարի եւ քաջ շինաւղն Հայոց թագաւորն Սմբատ» ձևով: Այն, որ նշվածը դարձյալ կարող է լինել վերևում ներկայացված տրամարանությամբ հետագայում ինչ-որ գրչի կողմից կատարված հավելում, ամբողջապես հնարավոր է: Մյուս կողմից, Սանահինի հի-

<sup>422</sup> «Յիշատակարան Սանահինյ վանից (Սանահինի քէօթուկը)», էջ 55:

<sup>423</sup> Տե՛ս Գարեգին Ա. Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 125:

<sup>424</sup> «Յիշատակարան Սանահինյ վանից (Սանահինի քէօթուկը)», էջ 56:

շատակարանը զերծ չէ այլ՝ ավելի կոպիտ սխալներից: Այսպես, այն-  
տեղ գրված է, որ «...շինեաց բարեպաշտ թագուհին Խոսրովանոյշ,  
ամուսինն Աշոտոյ Հայոց շահնշահի՝ որդի Սմբատալ] Բագրատուն-  
ւոյ Հայոց թագաւորի»<sup>425</sup>: Աշոտ շահնշահը նույն ինքը Աշոտ Գ-ն է, որը  
ոչ թե Սմբատ Ա-ի որդին էր, այլ թոռը՝ Արքասի որդին: Նման տեքս-  
տում սխալների, ընդիշարկությունների և անհարկի հավելումների  
հավանականությունը խիստ մեծ է, ուստի՝ նշված տեղեկության հիմ-  
քով հեռուն գնացող եզրակացություններ կատարելը խիստ համար-  
ձակ մոտեցում է:

Գահակցության ինստիտուտի առկայությունն ապացուցելու հա-  
մար բերվող երրորդ հիմնավորումը Սանահինի Ս. Ամենափրկիչ եկե-  
ղեցու բարձրաքանդակն է, որի թվագրումը 966 թվականով հնարավո-  
րություն է տվել Ռ. Մաթեոսյանին եզրակացնելու, որ Սմբատն այդ  
ժամանակ արդեն հոր գահակիցն էր: Սակայն այդ բարձրաքանդակի  
թվագրումը 966 թվականով խիստ խնդրահարույց է, քանի որ Աշոտ  
Գ-ի որդի Գուրգենը թագավոր է հոչակվել միայն 981 թ.<sup>426</sup>, ուստի՝  
կա’մ վիմագիրն է պատկանում ավելի ուշ շրջանի<sup>427</sup>, երբ երկու եղ-  
բայրները թագավորում էին՝ Սմբատը որպես գերակա, իսկ Գուրգե-  
նը՝ որպես ստորակա, կա’մ ել այդ վիմագրում երկու եղբայրներին  
թագավոր կոչելով՝ ցույց է տրված նրանց արքայական ծագումը և ոչ  
ավելին: Պատահական չէ, որ Կ. Ղաֆարարյանն այդ վիմագիրը թվա-  
գրում է 980-ական թվականներով<sup>428</sup>: Կա մի կարևոր հարց ևս՝ Գուր-  
գենի Կյուրիկե անվանաձևը: Սանահինում գտնվող նրա տապանա-  
քարին (մոտ 989 թ.) գրված է. «Այս է հանգիստ Գորգէնա Բագրատունոն

<sup>425</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 55; **Գարեգին Ս. կաթողիկոս**, նշվ. աշխ., էջ 125; «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Ե-ԺԲ դարեր)», էջ 60:

<sup>426</sup> Տե՛ս «Մինիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական», ի լոյս ըն-  
ծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, ի տպարանի կայսերական ձեմարանի գիտութե-  
անց, 1867, էջ 71: Թվականի ճշգրտումը տե՛ս և **Չահնազարյան Ա.**, Տաշիր-Զորագե-  
տի Կյուրիկյան թագավորության առաջացումն ու հզորացումը, «Պատմաբանասի-  
րական հանդես», 2009, № 2-3, էջ 224-233:

<sup>427</sup> Տե՛ս Հ. Ղետնդ Սովուսեան, նշվ. աշխ., էջ 32:

<sup>428</sup> Տե՛ս Ղաֆարարյան Կ., նշվ. աշխ., էջ 98:

շահանշահի, որդի Աշոտոյ Ողորմածի»<sup>429</sup>, իսկ Հաղպատի Ս. Նշան եկեղեցու՝ հայոց 440 թվականի (մարտ, 991 թ.-մարտ, 992 թ.) արձանագրությունն ունի հետևյալ տեսքը. «Ի ՆԽ թրակ. Սիմեոնն հայր Եւ Տիրանուն Երեց շինեցաք զեկեղեցիս փրկութեանն Սիբատա (իմա՝ Սմբատ Բ) Եւ Գուրգէնա»<sup>430</sup>. Եթե 989 և 991 թթ. դրությամբ Սանահինում և նրանից ընդամենը վեց կիլոմետր հեռավորության վրա գտնվող Եկեղեցու վիմագրում օգտագործված է «Գուրգէն» սկզբնական անվանաձեր, ապա անհնար է, որ դրանից 25 տարի առաջ գրված վիմագրում լինի հետագայի «Կյուրիկե» ձևը: Դարձ է, որ այդ վիմագրով հիմնավորել այն, որ Սմբատը Եղել է հոր գահակիցը 966 թ. դրությամբ, հնարավոր չէ:

Իսկ ինչ վերաբերում է այն պնդմանը, որ գահաժառանգը հանդես էր գալիս որպես արքունիքի ներկայացուցիչ կամ փոխարքա, ապա պետք է նշել, որ գահաժառանգի՝ նման կարգավիճակում հանդես գալը ոչ միայն հնարավոր էր, այլև ինքնըստինքյան հասկանալի, բայց դա հիմք չէ՝ գահակցություն բխեցնելու համար:

Փաստորեն, գահակցության ինստիտուտի հիմնավորման համար բերվող բոլոր հիմնավորումներն ել քննության չեն դիմանում: Ամենայն հավանականությամբ, Բագրատունյաց Հայաստանում գահակցության ինստիտուտ չի գործել: Դրա օգտին է խոսում նաև այն, որ սկզբնադրյուրներում այդ մասին ոչինչ չի հիշատակվում:

Այստեղ կարենոր է արձանագրել, որ Աշոտ Գ և Սմբատ Բ թագավորների գահակալության շրջանի իրադարձություններին զգալի մանրամասնություններով անդրադարձ ժամանակակից հեղինակներից և ոչ մեկը գահակցության վերաբերյալ տեղեկություններ չի պահպանել:

Աշոտ Գ-ի ժամանակաշրջանի հեղինակ է կաթողիկոս Անանիա Մոկացին, որը նրան հիշատակում է երկու կարգավիճակով՝ որպես

<sup>429</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 24, 171:

<sup>430</sup> Տե՛ս Կաֆադարյան Կ., Հայրատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Եր., Հայկական ՍՍԾ ԳԱ հրատ., 1963, էջ 141-142:

հայոց իշխանաց իշխան և որպես թագավոր: Առաջին անգամ կաթողիկոսն Աշոտին հիշատակում է Կապանից Շիրակ վերադարձալիս՝ «ի հանդիպումն բարեքօքանիկ եւ վեհի մեծի արքային Աբասայ Հայոց թագաւորին եւ Աշոտի իշխանաց իշխանի նորին որդույ»<sup>431</sup>: Երկրորդ անգամ կաթողիկոսը նրա մասին գրում է Աբաս թագավորի մահից հետո զահը ստանձնելու մասին խոսելիս. «յաջորդէ զաթոռ թագաւորութեանն նորին որդի տէր Աշոտ, Հայոց իշխանաց իշխան...»<sup>432</sup>: Այնուհետև, 958 թ. մի իրադարձության առիթով կաթողիկոսը գրում է. «...ի թագավորութեանն Աշոտի, որդույ Աբասայ...»<sup>433</sup>: Ի վերջո, Անանիա Մոկացին նրան հիշատակում է «...թագաւորն բարեպաշտ Աշոտ Հայոց Մեծաց...»<sup>434</sup> ձևով: Վերջին անգամ նա Աշոտին հիշատակում է մի պարբերությամբ, որտեղ, եթե Սմբատը եղած լիներ նրա զահակիցը, ապա անպայման կիշխատակվեր: Հեղինակը գրում է, որ հայոց արևելից կողմերի մեծամեծերը Դավիթ անունով վանականին ուղարկում են Այրարատ՝ Շիրակավան, որը եղել էր Սմբատ թագավորի նստոցը: Վերջինս, ինչպես տեսանք, սխալմամբ նույնացվել է Սմբատ Բ-ի հետ: Դավիթի գալը «...լուեալ թագաւոր[ի]ն Հայոց Աշոտ եւ նորին եղբարց Մուշեղայ եւ Ատրներսեհի՝ ուրախ եղեն յոյժ եւ մեծապարզել շքեղութեամբ տային ձեռնադրել զնա մերում նուաստութեանս կաթողիկոս Աղուանից նահանգին»<sup>435</sup>: Քանի որ հույժ կարևոր տեղեկություններ պարունակող այդ տողերում ակնհայտ է, որ հիշատակված են Բագրատունյաց թագավորության հիմնական ավագները՝ Աբասի երեք որդիները՝ հայոց թագավոր Աշոտ Գ-ն ու նրա եղբայրները, Սմբատի անվան չիշխատակվելը ցույց է տալիս, որ նա զահակից չէր հորը: Պետք է նշել, որ Անանիա Մոկացին Սմբատին ընդիանրապես չի հիշատակում:

<sup>431</sup> Անանիա Մոկացի, էջ 268:

<sup>432</sup> Նույն տեղում:

<sup>433</sup> Նույն տեղում, էջ 271:

<sup>434</sup> Նույն տեղում, էջ 273:

<sup>435</sup> Նույն տեղում:

Մյուս կարևոր և, թերևս, նաև ժամանակակից աղբյուրը Ասողիկի երկասիրությունն է: Վերջինիս «Յաղագ թագաւորութեանն Աշոտոյ՝ որդոյ Աբասայ...» և Աշոտ Գ-ի զահակալության առնչվոր մյուս գլուխներում Սմբատի մասին ընդհանրապես հիշատակություն չկա<sup>436</sup>: Ավելին, Աշոտ Գ-ի մահը հիշելով՝ պատմիքը գրում է. «Զայսու ժամանակաւ մեռաւ թագաւորն Հայոց՝ ալրինեալն Աշոտ՝ ի ՆԻԶ (426 թ.) մարտ, 977 թ.-մարտ, 978 թ.) թուականին, եւ ի նոյն աւուր թագաւորեաց Սմբատ՝ որդի նորա ամս ԺԳ»<sup>437</sup>: Պարզ է, որ որևէ զահակցության մասին նույնիսկ ակնարկ չկա, իսկ Սմբատ Բ-ի զահակալությունն էլ հաշվարկված է Աշոտ Գ-ի մահվան օրվանից սկսած:

Աշոտ Գ-ի զահակալության շրջանին է առնչվում նաև հայոց կաթողիկոս Խաչիկ Ա-ի (972-991 թթ.) 976 թ. կոնդակը: Այնտեղ հիշատակվում են թե՝ Աշոտ Գ-ն և թե՝ երկրի մեծամեծերը, սակայն բացակայում է Սմբատի անունը:

Սմբատի անունը բացակայում է նաև Մատթեոս Ուոհայեցու կողմից հիշատակվող՝ Բյուզանդիայի կայսր Չմշկիկի (969-976 թթ.) 974 թ. արշավանքին ընդառաջ Աշոտ Գ-ի կազմակերպած մեծ զորաժողովին մասնակից մեծամեծերի ցանկում:

Կարելի է դարձյալ օրինակներ բերել այն մասին, որ Սմբատը որպես հոր՝ Աշոտ Գ-ի զահակից հիշատակված չէ, սակայն բավարարվենք նշվածով:

Փաստորեն, ո՞չ ժամանակակից և ո՞չ էլ հետագա շրջանի աղբյուրները որևէ կերպ չեն ակնարկում Բագրատունյաց թագավորության շրջանում ոչ միայն զահակցության ինստիտուտի առկայության, այլև գոնե զահակցության որևէ եզակի դեպքի մասին: Ուստի՝ արձանագրենք, որ Բագրատունյաց թագավորության շրջանում զահակցության և համապատասխան ինստիտուտի առկայության մասին վարկածը գուրկ է հիմնավորումներից:

<sup>436</sup> Տե՛ս Ասողիկ, էջ 755-760:

<sup>437</sup> Նույն տեղում, էջ 760:

Այս պարագայում հարկ է հստակեցնել զահաժառանգման կարգը Բագրատունյաց Հայաստանում:

Դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից՝ Բագրատունի առաջին արքաների օրոք (887-953 թթ.) արքայատան այն ներկայացուցիչները, որոնց վիճակված էր թագավորել, վարում էին հայոց իշխանաց իշխանի պաշտոնը<sup>438</sup>:

Այդ մասին հույժ կարևոր տեղեկություններ է հաղորդում Հովհաննես Դրասխանակերտցին: Նա Բագրատունի առաջին արքաներից յուրաքանչյուրի օրոք հարկ է համարում ընդգծել, թե ով էր հայոց իշխանաց իշխանը՝ դրանով իսկ ամրագրելով այդ պաշտոնի կարևորությունը հայոց թագավորության համակարգում: Ըստ նրա՝ Աշոտ Աթագավորի օրոք հայոց իշխանաց իշխանը արքայորդի Սմբատն էր<sup>439</sup>, վերջինիս զահակալության շրջանում՝ արքայորդի Աշոտը (հետագայում Երկար կոչված)<sup>440</sup>, Աշոտ Երկարի օրոք՝ նրա եղբայր Աբասը (քանի որ արքան որդի չուներ)<sup>441</sup>:

Այլ հեղինակներից Անանիա Մոլացին վկայում է, որ Աբասի զահակալության շրջանում արքայորդի Աշոտը (հետագայում Ողորմած կոչված) հայոց իշխանաց իշխան էր<sup>442</sup>:

Մյուս մատենագիրները հայոց իշխանաց իշխանի ինստիտուտի մասին տեղեկություններ չեն հաղորդում:

Այն, որ հայոց իշխանաց իշխանները մեծավ մասամբ հետագայում թագավորել են, փաստում է, որ այդ պաշտոնը վարել են արքայական տան այն ներկայացուցիչները, որոնք հանդիսանում էին զահաժառանգ:

Ինչպես տեսանք, հայոց իշխանաց իշխանի պաշտոնը վարել է նաև Աշոտ Գ-ն, որին վերագրվել է զահաժառանգման նոր ինստիտու-

<sup>438</sup> Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Հայոց իշխանաց իշխանը Բագրատունի առաջին արքաների օրոք, էջ 62-74:

<sup>439</sup> Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 446:

<sup>440</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 480:

<sup>441</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 544:

<sup>442</sup> Տե՛ս **Անանիա Մոլացի**, էջ 268:

տի՝ գահակցության ներմուծումը: Բայց վերջինս որևէ կերպ չի հիմնավորվում, ուստի հարկ է քննարկել հենց հայոց իշխանաց իշխանի պաշտոնի գոյության շարունակության հարցը, որն էլ թվում է գահաժառանգման ինդրի միակ հնարավոր լուծումն ինչպես Աշոտ Գ-ի, այնպես էլ հետագա շրջանում:

Ուստի կարող ենք եզրակացնել, որ Բագրատունյաց թագավորության համակարգում հայոց իշխանաց իշխանի պաշտոնը հանձնվում էր գահաժառանգին: Ցավոք, Հովհաննես Դրասխանակերտցուց և Անանիա Մոլցցուց հետո մյուս հեղինակների տեղեկություններից հնարավոր չէ հասկանալ, այդ պաշտոնը պահպանվե՞լ է, թե՞ ոչ: Բայց քանի որ գահակցության ինստիտուտի վերաբերյալ վարկածը չի հիմնավորվում, պետք է վերադառնալ հենց գահաժառանգության՝ հայոց իշխանաց իշխանի ինստիտուտին, որը Բագրատունյաց թագավորության համար առավել դժվարին՝ IX դ. վերջը և X դ. առաջին կեսն ընդգրկող պատմափուլում բննել էր պատմության քննությունը: Աշոտ Գ-ն իրականում այդ ինստիտուտի ձևափոխման և կամ դրա փոխարքեն գահաժառանգության այլ ինստիտուտ ներմուծելու անհրաժեշտություն չուներ: Կախվածությունն Արաբական խալիֆայությունից վաղուց արդեն վերացված էր, իսկ տեղական մեծամեծերի շարքում այլևս չկային Բագրատունյաց գահի հավակնորդներ, ինչպես Գագիկ Արծրունին և Աշոտ Շապուհյանը:

### 3.3. Աշոտ Գ-ի գահակալության տարիները և մահվան թվականը

Աշոտ Գ Ողորմած թագավորի՝ գահ բարձրանալու և վախճանի տարեթվերը ճշգրտելու համար կարևոր նշանակություն ունեն ժամանակակից պատմիչ Ասողիկի տեղեկությունները: Նա Աշոտ Գ-ին վերագրում է 25 տարվա գահակալություն՝ սկսած հայոց 402 թվականից (ապրիլ, 953 թ.-ապրիլ, 954 թ.)<sup>443</sup>, իսկ նրա մահը թվագրում հայոց 426

<sup>443</sup>Տե՛ս Ասողիկ, էջ 755:

թվականով (մարտ, 977 թ.-մարտ, 978 թ.)<sup>444</sup>: Հենց այս տվյալների հիմամբ էլ ներկայումս պատմագիտության մեջ ընդունված է, որ Աշոտ Գ-ն թագավորել է 953-977 թթ.<sup>445</sup>:

Սակայն պետք է փաստել, որ 953-977 թթ. միջակայքը 25 տարի չի կազմում: Իրականում հայոց 402 (ապրիլ, 953 թ.-ապրիլ, 954 թ.) և 426 (մարտ, 977 թ.-մարտ, 978 թ.) թվականների միջև 25 տարի կհաշվվի, եթե նրա գահակալությանը թագավորենք 953-978 թթ.: Նման թվագրման ձշմարտացիությունն է ցույց տալիս «Յայսմալուրբում» պահպանված հույժ արձեքավոր տեղեկությունն այն մասին, որ Աշոտ Գ-ի հիշատակի (վախճանի) օրը նշվում էր մարերի 13-ին<sup>446</sup>: Քանի որ Ասողիկը Աշոտ Գ-ի ժամանակակիցն էր, ապա խիստ փոքր է հավանականությունը, որ նա կարող էր սխալվել թագավորի վախճանի տարեթիվը հիշատակելիս: Ուստի հենց հայոց 426 մարերի 13-ը պետք է համարել թագավորի մահվան օր: Այն համապատասխանում է 978 թ. հունվարի 3-ին: Այս հիմքով կարող ենք արձանագրել, որ նա գահակալել է 953-978 թթ.՝ 25 տարի:

Աշոտ Գ-ն թաղվել է Հոռոմոսի վանքում, որտեղ նրա օրոք թագավորական հանգստարանն էր: Վանքի Ս. Գևորգ եկեղեցու մոտ մինչև XX դ. սկիզբը պահպանվել էր նրա տապանաքարը «...Աշոտ թագաւոր...» արձանագրությամբ (պատկերը տե՛ս ստորև)<sup>447</sup>:

<sup>444</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 760:

<sup>445</sup> Տե՛ս, օրինակ, «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հատոր III, էջ 52; **Մաքրելու Կ.**, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 10; **Ստեփանենկո Բ.**, նշվ. աշխ., էջ 43; «The Cambridge history of the Byzantine Empire c. 500-1492», p. 357 և այլն:

<sup>446</sup> Տե՛ս «Յայսմալուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի յայսմալուրք Տեր Իսրայելի», Կոստանդնուպոլիս, 1834, էջ 226: Ճիշտ է Ս. Օրմանյանը, եթք կարծում է, որ ի տարբերություն «Յայսմալուրքի» 1834 թ. հրատարակիչների, որոնք հաշվարկը կատարել են անշարժ տոմարով և մարերի 13-ը նույնացրել մայիսի 20-ին, անհրաժեշտ է հաշվարկել շարժական տոմարով՝ ստանալով հունվարի 3-ը: **Օրմանեան Ս.**, Ազգապատում, հ. Ա, § 779, պյու 1129:

<sup>447</sup> Տե՛ս **Ալիշան Դ.**, Շիրակ, էջ 29-31; **Մաքրելու Կ.**, Հոռոմոսի վանքի հնագոյն եկեղեցու անուան շուրջ, «Հանդէս ամսօրեայ», 2013, № 1-12, էջ 312-313:

Ն. Սարգիսյանը նշում է, որ Աշոտ Գ-ի տապանին գրված էր «Աշոտ թագաւոր»<sup>448</sup>: Ղ. Ալիշանը, ներկայացնելով Աշոտ Գ-ի՝ ումն օտարերկրացու կողմից գծագրված տապանի պատկերը, սկզբում հիշատակում է տապանագրի տարբեր ընդօրինակությունները. «Բագմաց յայց եկեալ սխրալի յիշատակարանիս՝ պէսպէս ընդօրինակեալ են զարձանն. ոմն լրկ Աշոտ թագաւոր, ոմն Մեծն Աշոտ թագաւոր Հայոց, ոմն թուականաւ ՆԿԶ [իմա՝ 466 թ. (մարտ, 1017 թ.-մարտ, 1018 թ.)], որ սխալ է - Ա. Ե.] Աշոտ թագաւոր Հայոց, ոմն Աշոտ Ողորմած թագաւոր Հայոց»<sup>449</sup>: Այնուհետև նա ներկայացնում է տապանագրի վերծանության սեփական վարկածը. «իսկ զպատկերս այս (իմա՝ բերված պատկերը - Ա. Ե.) գծագրեալ յօտարազգույ՝ հաւատարմագոյն համարիմ, թողլով որպէս գծեալ էին՝ զառաջին եղծեալ տառսն, որք թուին ՆԻԶ. Թ. այսինքն 977 ամ մահուան»<sup>450</sup>: Այսինքն նա ճշգրիտ է համարում օտարերկրացու գծած պատկերը, որի հիմամբ տապանագրի առաջին տառերը ընթերցում է «ՆԻԶ»:

Բոլոր ընդօրինակություններում է հստակ է մի բան՝ տապանին գրված է «Աշոտ թագաւոր», իսկ դրանից առաջ ու հետո առկա համապատասխանաբար չորս և երեք տառերը, դատելով Ղ. Ալիշանի ներկայացրած պատկերից, ընթերցվել են տարբեր, երբեմն նույնիսկ անհավանական ձևերով: Նաև Ղ. Ալիշանի կարծիքը, թե առաջին տառերն ընթերցվում են «ՆԻԶ», պատկերը դիտելիս թվում է անհիմն:

Մինչդեռ առաջին չորս տառերը կարծես հստակ են՝ «Ս», «Ո», «Ղ» և «Ն»: Ի դեպ, պատկերում երևացող տառաձևերից որոշները հանդիպում են նաև ամենայն հավանականությամբ Աշոտի իշխանաց իշխանության շրջանին վերաբերող՝ «Աշոտի բուրգի» արձանագրության մեջ (մասնավորապէս Ս, Շ, Ո, Տ, Ն տառերը)<sup>451</sup>: Ուստի արձանագրության առաջին տառերը կարելի է ընթերցել որպէս «Ս (իմա՝ սուրբ) ՈՂՆ (իմա՝ ողորմածն)», որով արձանագրությունը կստանա հետևյալ տես-

<sup>448</sup> Տե՛ս Սարգիսեան Ն., նշվ. աշխ., էջ 165:

<sup>449</sup> Տե՛ս Ալիշան Ղ., Շիրակ, էջ 31, ծանոթ. 3:

<sup>450</sup> Նույն տեղում:

<sup>451</sup> Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, էջ 6:

քը՝ «Ս[ուրբ] Ող[որմած]ն Աշոտ թագավոր...»<sup>452</sup>, քանի որ, ինչպես տեսանք, Աշոտ Գ Ողորմածը դասվել էր սրբերի շարքը:



Աշոտ Ողորմածի գերեզմանը

---

<sup>452</sup> Վերջին երեք տառերի ընթերցումը թողնում ենք հետազային:

## ՎԵՐՋԱԲԱՆ

Աշոտ Գ Ողորմածը զահակալել է Բագրատունյաց թագավորության ամենաբեկումնային ժամանակաշրջանում, երբ Երկիրը միասնության պատմափուլից անցում էր կատարում ավատատիրական մասնատվածության դարաշրջան: Ուստի Աշոտ Գ-ի զահակալության շրջանի պատմությունը հիմնախնդիրների առատությամբ հայ պատմագիտության ամենահրատապ ուսումնախրության թեմաներից է: Մասնավորապես հենց այդ ժամանակաշրջանի ուսումնախրությունն է տալիս հզորության բարձրակետին գտնվող թագավորության՝ անակնկալ կերպով վայրեցի ուղին բռնելու և մեծամեծ կորուստներ կրելու գաղտնիքի բանալին:

Աշոտ Գ թագավորի զահակալության շրջանը բաժանվում է երկու ընդգծված փուլերի՝ հզորության ու միասնության (953-966 թթ.) և մասնատվածության ու կորուստների (967-978 թթ.): Առաջին փուլում թագավորության վերելքը շարունակվում էր նրա շուրջը և ներտում ձևավորված բարենպաստ իրադրության պայմաններում: Ի սկզբանե Աշոտ Գ-ն զբաղված էր նոր մայրաքաղաքի փնտրությով, մայրաքաղաք, որ կհամապատասխաներ հայոց թագավորության քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացման մակարդակին: Անհաջողության մատնվելով Դվինն ազատազրելու ռազմական գործունեության ընթացքում՝ նա կարողացավ իրեն ենթարկել Երասխի հովտի ամիրայությունները և ջախչախել թագավորությանը հարավ-արևմուտքից սպառնացող Համբայանների պետության գորքերին:

Ի վերջո Աշոտ Գ-ն կենտրոնացավ աճող ու զարգացող Անի քաղաքի վրա, որն էլ 961 թ. հռչակեց հայոց թագավորության մայրաքաղաք: Անին այնուհետև վերածվեց հայ ժողովրդի քաղաքակրթական արարման հիմնական կենտրոնի:

Նման գործունեությունը ցույց է տալիս, որ պատմիչների մի մասի կողմից Աշոտ Գ-ին հիմնականում բարեգործական բնույթի արարքներ վերագրելը հեռու է իրականությունից: Առնվազն իր զահակալության առաջին փուլում Աշոտ Գ-ն իրեն դրսնորել է որպես կառավար-

ման ձիրքով օժտված զահակալ, որն ընդունակ էր մի կողմից ամ-  
րապնդելու պետության անվտանգությունը, իսկ մյուս կողմից, հա-  
մախմբելով երկրի ներուժը, այն առաջնորդել դեպի քաղաքակրթա-  
կան նվաճումներ:

